

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

Մ ԱՇՏՈՅԻ

Մ ԱՐՁԱԳԱՆԳ

www.sourphagop.org/mashdots

ԺԸ տարի

2011

Տարեկան Բացառիկ

Բովանդակություն

Խօսք Հովիւի եւ Հոգաբարձութեան	Էջ 3
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2010-2011 տարեշրջանէն	Էջ 4
Մեր Խօսքը՝	Էջ 7
Հակիրճ Տեղեկութիւններ 2010-2011 Տարեշրջանի Մասին	Էջ 10
Ձեռնարկներ եւ Արտադասարանային Աշխատանքներ Ժամանակագրական Շարքով	Էջ 12
Աշակերտական Ներկայութեան Տախտակներ	Էջ 13
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2010-2011 տարեշրջանէն	Էջ 14



ՄՈՒՐԲ ՁԱԿՈՐ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՑԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Երկուշաբթի, 9 Մայիս 2011

Մոնթրէալ

Թիւ 20/10-11

Սիրելի տնօրէնութիւն,
ուսուցչական կազմ,
ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ,

Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս իր ուղեցուցիչ հռչակագիրներուն վրայ՝ յարկ մը եւս բարձրացուց եւ 2011-ը Հայ Մանուկի Տարի կոչեց:

Վեհափառ Հայրապետը սփիւռքացեալ մեր ժողովուրդի զաւակները հրաւիրեց, որ յատուկ սեւեռումով մը անդրադառնան Հայ մանուկի արժէքին:

Մանուկները ժողովուրդի մը ապագան են: Հայ մանուկներն ալ՝ հայ ժողովուրդի ապագան են: Հետեւաբար, պատասխանատու դաստիարակութեամբ զանոնք պէտք է կրթել: Այսինքն՝ կրթել այնպէս՝ որ հայ մանուկները աճին երկնային ազատութիւնը շնչելով, զարգանան՝ սորվելով տեսնել բարին, գեղեցիկը եւ ազնիւը:

Մեր համայնքը իր կրթական հաստատութիւններէն Կիրակնօրեան հիմնելով՝ պատասխանատու դաստիարակութեան կարեւոր քայլ մը առած էր: Հարիւրաւոր մանուկներ այնտեղ Հայ Եկեղեցւոյ ոգիին մէջ աճեցան ու կ'աճին: Այն ոգին ուղեղի լուսցում չ'ուղեր, այլ կը պահանջէ յարգել անհատին զարգացումը՝ իբր քաղաքացի Աստուծոյ արքայութեան: Հայ Եկեղեցին Աստուծոյ արքայութեան մէկ համեստ նահանգն է. զայն շէնցնելու պարտքը ունինք իւրաքանչիւրս:

Սփիւռքի հայութիւնը իր ապագան շէնցնելու համար՝ ստիպողութեան առջեւ է նոր սերունդին քայլերը ի շարս այլ կենսական կառոյցներու, նաեւ դէպի Հայ Եկեղեցի առաջնորդելու: Կիրակնօրեան այդ նպատակին ծառայող ճամբայ է: Հայ մանուկը թող չօտարանայ Հայ Եկեղեցիէն, որովհետեւ անիկա մեր ինքնութեան անցեալն ու ներկան է: Հայ Եկեղեցիէն օտարացած սերունդը՝ պիտի օտարացած ըլլայ նոյն ատեն իր ինքնութեան անցեալէն ու ներկայէն:

Ի սրտէ կը գնահատենք մեր Կիրակնօրեային տնօրէն՝ պրն. Թորոս Պապիկեանը, ուսուցչական փոքրաթիւ, այլ նուիրեալ կազմը, նաեւ ծնողները՝ որոնք պարտականութեան խոր գիտակցութեամբ իրենց զաւակները Յիսուսաբոյր Ս. Յակոբեան օճախը կը բերեն: Իսկ մեր աշակերտ-աշակերտուհիներուն կը վստահեցնենք, որ Կիրակնօրեայէն իրենց սորվածները՝ իրենց ապագային մէջ լուսատու գեղեցիկ ջահեր պիտի ըլլան:

Հաւաքոյն մաղթանքով՝

ՀՈՎԻՒՄԷ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Ս. ՁԱԿՈՐ ԱՌԱՋԱՌԱՐԱՆՈՒՄ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2010-11 ՏԱՐԵՇՐՁԱՆԷՆ



ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅԻ 2010-11 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2010-11 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ աւարտել մեր 31-րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 18-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնին օրը՝ Դեկտեմբեր 2010-ին տօնեցինք մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին տասնամեակը:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքերը, որոնք Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն են, կը փսան հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսուսի, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ:

Հայ Մանուկի Տարի

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները հիմնուեցան Հայ մանուկներուն համար: Հետեւաբար, նախ եւ առաջ, Հայ Մանուկի տարին պէտք է ըլլայ Կիրակնօրեայ Դպրոցներու Տարին, եւ Վեհափառ հայրապետը իր Կոնդակին մէջ լայնօրէն անդրադարձաւ Կիրակնօրեայ Դպրոցներուն դերին, ուրկէ կը մէջբերենք Վեհափառ Հօր խօսքերը.

Հայ եկեղեցւոյ համար հայ մանուկին դաստիարակութիւնը՝ իր կրօնական թէ՛ ազգային տարածքներով, կը շարունակէ փսալ առաջնահերթութիւն: Այս ծիրէն ներս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր հիմնած Կիրակնօրեայ վարժարաններուն ճամբով անցեալին բարերար դեր կատարած է ու կը շարունակէ կատարել վերանորոգ թափով: Անցեալ տարի 80-ամեակն էր Կիրակնօրեայ վարժարաններու հիմնադրութեան ու գործունէութեան: Այս առիթով, Մեր հրապարակած Հայրապետական Սրբատառ Կոնդակին մէջ ըսինք հետեւեալը.-

”Կիրակնօրեայ վարժարանները անցնող տարիներուն կրօնական դաստիարակութեան մարզէն ներս հսկայ գործ կատարեցին ընդհանրապէս Սփիւռքի գաղութներէն ու մասնաւորաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներս: Կիրակնօրեայ վարժարանները սովորական ու պատահական նախաձեռնութիւններ չեղան, այլ դարձան թեմերու վարչակազմակերպչական դրութենէն ներս կարեւոր կառոյցներ՝ իրենց յատուկ կանոնադրութեամբ, ուսուցչական կազմով ու կրթական-դաստիարակչական ծրագրով: Մեր Սուրբ Աթոռին Հայրապետները ոչ

միայն քաջալերեցին Կիրակնօրեայ վարժարաններու գործունեութիւնը, այլ նաեւ Կիրակնօրեայ վարժարաններու Ընդհանուր Վարիչ Տնօրէնութիւն մը հաստատեցին Անթիլիասի Մայրավանքէն ներս, որպէսզի մօտէն հետեւին անոնց աշխատանքին:

Արդ, 80 տարիներու ընթացքին կատարուած նուիրեալ ծառայութեան ու ձեռք ձգուած իրագործումներուն դիմաց այսօր կոչուած ենք ո՛չ միայն արդարօրէն ուրախանալու, այլ նաեւ վերանորոգ յանձնառութեամբ շարունակելու նոր սերունդին կրօնա-բարոյական դաստիարակութեան այնքան հրամայական առաքելութիւնը: Այսօր շրջապատուած ենք համաշխարհայնացած աշխարհէն եկող այնպիսի հոսանքներով, որոնք ամէն օր կը խաթարեն մեր քրիստոնէական դիմագիծը, կ'ապականեն մեր ազգային ինքնութիւնը եւ կը մոլորեցնեն մեր զաւակները: Հետեւաբար, ռեւէ ժամանակէ աւելի այսօր մենք սուր կարիքը կը տեսնենք հոգեւոր ու բարոյական արժէքներով թրծելու մեր նոր սերունդին կեանքը: Ահա այս սրբազան առաքելութեան է լծուած Կիրակնօրեայ վարժարանը”:

Մանուկի դաստիարակութեան մեր մօտեցումը անհրաժեշտ է որ դառնայ համապարփակ: Նեղ հայեցակէտով, տոկմադիք ոգիով եւ ժամանակավրէյ մեթոտներով կատարուող դաստիարակութիւնը կրնայ հակառակ արդիւնքը տալ: Պէտք է գիտնանք հանգրուանային մօտեցումով ու յառաջատուական ընթացքով ի՞նչ փոխանցել մանուկին եւ ի՞նչ բանէ հեռու պահել զինք թէ՛ ընտանիքին, թէ՛ դպրոցին եւ թէ՛ Կիրակնօրեայ վարժարանին մէջ: Պէտք է նաեւ գիտնանք ինչպէ՞ս դաստիարակել մանուկը՝ դիմելով այնպիսի միջոցներու, որոնք համահունչ են կեանքի ներկայ պայմաններուն ու մտահոգութիւններուն ու նաեւ՝ գրաւիչ եւ ազդու: Այս ծիրէն ներս արդի չափանիշներու ու մեթոքեայ կարիքներու համապատասխանող մանկական գրականութեան մշակումը, լսողատեսողական կարելիութիւններու ճիշդ օգտագործումը, մանուկները հետաքրքրող հրապուրիչ ծրագիրներու պատրաստութիւնը, մանուկներու յատուկ հաւաքներու կազմակերպումը եւ այլ գրաւիչ նախաձեռնութիւններ կրնան մեծապէս օգտակար հանդիսանալ մանուկներու դաստիարակութեան աշխատանքներուն մէջ:

www.sourphagop.org-ը 10 տարեկան

Մեր այս տարուան դպրոցական տարեշրջանի ընթացքին մեր կայքէջը տօնեց իր տասնամեակը եւ շարունակեց ծաւալիլ: Հասաւ 130 երկիրներու աւելի քան 2,000 քաղաքները եւ 20,000-է աւելի «Մաշտոցի Արձագանգ» եւ 38,000- է աւելի այլ գրութիւններ բացուեցան: Մեր կայքէջին մեծ արժէքը 99 առ հարիւր արեւմտահայերէնով գրուած ըլլալն ու կամաւոր խմբակի մը անսակարկ

աշխատանքին շնորհիւ գոյութիւն ունենալն է: Ընթացքի մէջ է նախորդ տարուան սկսած մեր կայքէջին նորոգումը նոր տառատեսակով (Sylfaen):

Այս տարի նաեւ, դասագրքերու բաժին մը աւելցուցինք մեր կայքէջին վրայ հոն զետեղելով Կիրակնօրեայ Դպրոցի ուղեցոյցն ու բոլոր դասարաններու գիրքերը, եւ նոյն էջին վրայ նաեւ զետեղեցինք Ազգապատումը իր երեք հատորներով, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարան, եւ Կրօնական Գիտելիքներ:

«Մաշտոցի Արձագանգ»ի 18-ամեակ

Մեր այս դպրոցական տարուան ընթացքին հրատարակեցինք նաեւ մեր ամսաթերթը 18րդ տարին ըլլալով եւ մեր կայքէջին ծաւալումով, ծաւալեցաւ նաեւ մեր ամսաթերթի կարդացողներուն թիւը: «Մաշտոցի Արձագանգ»-ի միջոցաւ, այս տարի եւս արեւմտահայերէնով 164 քրիստոնէական դաստիարակութիւն ջամբող էջեր աւելցուցինք համացանցին վրայ:

Աշակերտութեան թիւ

Հակառակ երեք շարունակական տարիներու թիւի անկումին, անցեալ տարուան թիւի աճը մեզի այս տարուան համար յոյս ներշնչեց: Սակայն այս տարուան ընթացքին այդ յոյսերը ի դերեւ ելան : Մեր արձանագրուած աշակերտներուն թիւը եղաւ 38 իսկ միջին ներկայութիւնը 26: Պէտք է սակայն յիշել թէ այս տարի մենք ունինք 6 նախակրթարանի շրջանաւարտներ, որոնց ներկայութիւնը պիտի աշխուժացնէ մեր Երկրորդականը յաջորդող տարիներու ընթացքին:

Աստուծոյ կամքով՝ մեր 32րդ տարեշրջանը կը սկսինք Սեպտեմբեր 11, 2011-ին: Մինչ այդ, բարի արձակուրդ կը մաղթենք ձեզի:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ
2010-2011 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առաքելական Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

31-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2010-2011 տարեշրջանը 31-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 31-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Մայիսի վերջը: դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-1:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3 եւ նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի դասարան մը:

18-ամեակ «Մաշտոցի Արձագանգ» ին

Մեր 2010-11 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 18րդ տարին ըլլալով՝ մեր պարբերաթերթը, «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ www.sourphagop.org/mashdots էջին վրայէն:

10-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները:

Ճաշու Աւետարան, Տօներ, Բառարան, Եկեղեցական բառարան, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, խաղեր, Զարգացման մրցում, Church Timeline, Daily Bible:

Այս տարի նաեւ, դասագրքերու բաժին մը աւելցուցինք մեր կայքէջին վրայ հոն գետեղելով Կիրակնօրեայ Դպրոցի ուղեցոյցն ու բոլոր դասարաններու գիրքերը, ինչպէս նաեւ Ազգապատումը իր երեք հատորներով, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարան, եւ Կրօնական Գիտելիքներ:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2010-11 տարեշրջանի իրենց կամաւոր մասնակցութիւնը բերին հետեւեալ դաստիարակները ներքեւ յիշուած կարգերուն համար:

Թամար Գիզիրեան՝
 Յասմիկ Նաճարեան՝
 Յասմիկ Գանաճեան՝
 Շողիկ Նաճարեան՝
 Թորոս Պապիկեան՝

Մանկապարտեզի Ա. եւ Բ. Կարգերուն
 Մանկապարտեզի Գ., Նախակրթարանի Ա. եւ Բ.
 Նախակրթարանի Գ. Դ. Ե. եւ Զ.
 Մասնաւոր Յայտագիրներու պատասխանատու
 Երկրորդականի պատասխանատու, Տնօրէն

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արծարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ եւ այլ նիւթեր:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2010-11 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 38ն էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 26 բաժնուած 3 խումբերու:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2010-11 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան 3 խումբերու:

Մանկապարտեզի Ա. Բ. Գ. եւ Նախակրթարանի Ա. Բ. Դասարանները
 Նախակրթարանի Գ. Դ. Ե. եւ Զ. Դասարաններ
 Երկրորդական

Պահը ընթացաւ հետեւեալ ձեւով.

Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
 Բարոյալից պատմուածքներու պատմութիւն
 Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
 Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն:

Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՎ

12 Սեպտեմբեր 2010 Տարեկիզբ եւ վերամուտ

19 Սեպտեմբեր 2010 Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ

10 Հոկտեմբեր 2010 Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր

2 Յունուար 2010 Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:

9 Յունուար 2011 Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները, մասնակցութեամբ կարգ մը ծնողներու, այցելեցին Oratoire Saint-Joseph-ի թանգարանը, ուր ցուցադրուած էին նաեւ տարբեր երկիրներու մսուրները:

6 Փետրուար 2011 Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութեան

Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը:

Մարտ 7-13	Ծամոն
Մարտ 14-20	Շաքար
Մարտ 21-27	Կազային խմիչքներ
Մարտ 28-Ապրիլ 3	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Ապրիլ 4-10	Կոլոհատ, տուրմ
Ապրիլ 11-17	Chips
Ապրիլ 18-23	Հաւկիթ


16 Ապրիլ 2011 Դպրոցի ուսուցչական կազմը եւ աշակերտութեան մեծ մասը մասնակցեցան մեր Եկեղեցւոյ Գործադիր Մարմնի կողմէ կազմակերպուած նախաԾաղկազարդեան ընտանեկան հաւաքոյթին:

17 Ապրիլ 2011 Դպրոցը փակ էր Ծաղկազարդ առիթով


24 Ապրիլ 2011 Սուրբ Զատիկուայ եւ Ցեղասպանութեան յատուկ նշում:

22 Մայիս 2011 Ամաւերջի Հանդէս

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2010 - 2011 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2010-2011 տաեշրջանի իւրաքանչիւր Կիրակի Օրուայ ներկայութիւն

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅԻ 2010-11 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Սեպտեմբեր **2010** (ԺԸ տարի թիւ 1)

Այս թիւով.....

Փոխան Խմբագրականի՝
Հայրապետական Կոնդակ Կիրակնօրեայ
Դպրոցներու: Էջ 2-3

Սեպտեմբեր ամսուան բացատրական
բառարան: Էջ 4-5

Նիկիոյ Ժողով,
Խաչվերաց,
Ս. Գեորգ Զօրավար,
Վարազդայ Ս. Խաչ:

Համացանցէն քաղուած Էջ 6

Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցին Էջ 7

Եզակի Գիրեր Էջ 7

Յիսուս եւ Զակրէոս Էջ 8

Յիսուս եւ Սամարացի Կինը Էջ 9

Այրի Կնոջ լուման Էջ 10

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 11-14

Կիրակնօրեայ Դպրոցի Ամսփերջի
Հանդէս Էջ 15-16

Ամսուան Համարը
«Գալով ինձի, քաւ լիցի որ մեր Տիրոջ
Յիսուս քրիստոսի խաչէն գատ ուրիշ
բանով պարծենամ,»

Պօղոս Առաքեալ
Գաղատացիներուն 6.14



Խաչքարի Հեղինակ:
Ժողովրդական Վարպետ՝
Վարազդատ Համբարձումյան

ԹԵՄԱԿԱԼ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՅ, ԱԶԳԱՅԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ, ՊԱՏԳԱՍՍԱՌՐԱԿԱՆ, ԳԱՒԱՌԱԿԱՆ
ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՅ, ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՅ
ԵՒ ԾԱՌԱՅԻՅ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ ՈՒՍՈՒՅՉԱՅ ԵՒ ՄԱՍԼՈՅ ՍՊԱՍԱՌՐԱՅ
ԵՒ ՀԱՄՕՐԷՆ ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ՀԱՐԱԶԱՏԱՅ ՄԵՐՈՅ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԱԶԳԻ ՈՐ Ի ՍՓԻՒՍ ԱՇԽԱՐՀԻ:
ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՄԻՐՈՅ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՁՈՅՆ Ի ՄԷՆՁ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՌՐԱՉԻՆ:
ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ, ՄԷՐ ՈՐԴԻՈՅՆ ՄԻԱԾՆԻ
ԵՒ ՇՆՈՐՀՔ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ ԸՆԴ ԱՍԵՆԵՍԵԱՆԴ. ԱՄԷՆ:

Կիրակնօրեայ վարժարաններու հաստատումը հռչակող 28 Յունիս 1930-ին հրապարակած իր Հայրապետական Սրբատառ Կոնդակով, Երջանկայիշա-
տակ Սահակ Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ կը գրէր. «*Չենք կրնար թոյլ տալ, որ հայ մատաղ սերունդը հակակրօն գաղափարներով դաստիարակուի: ...
Մենք կ'ուզենք որ մեր մայրենի եկեղեցւոյն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց ընտանիքին, իրենց ազգին եւ իրենց եկեղեցւոյն: Չենք կրնար
թոյլ տալ, որ աս ու ան իր ուզած կերպով խաղայ մեր եկեղեցւոյն անուան հետ եւ մեր երիտասարդութեան ճակատագրին հետ: Վերջապէս, չենք ուզեր որ
անկրօն եւ քզէր մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը*»:

Սփիւռքի մէջ ցրուած ու անորոշութեան ճիրաններուն մէջ տուայտող իր ժողովուրդի եւ յատկապէս նոր սերունդի ապագայով խորապէս մտահոգ ծերու-
նագարդ Հայրապետը կարեւորութեամբ կը շեշտէր հոգեւոր ու բարոյական արժէքներով սնանելու հրամայականը: Արդարեւ, ցեղասպանութեան զոհ հայ ժողո-
վուրդը կորսնցուցած էր հող ու ստացուածք, եկեղեցի ու դպրոց ու դարձած գաղթական: Հայ ժողովուրդի գողգոթայէն քալած Սահակ Կաթողիկոս կոչ կ'ուղղէր
իր հօտին՝ չկորսնցնելու քրիստոնէական ու ազգային ինքնութեան հիմքը կազմող հոգեւոր ու բարոյական արժէքները եւ կառչած մնալու մեր դարաւոր եկե-
ղեցւոյ ուսուցումներուն ու աւանդութիւններուն: Եւ, իր խոր մտահոգութեան որպէս գործնական արտայայտութիւն, հայոց Հայրապետը նոյն թուականին հիմքը
կը դնէր Կիրակնօրեայ Վարժարանին:

Այդ թուականէն անցած են 80 տարիներ: Կիրակնօրեայ վարժարանները անցնող տարիներուն կրօնական դաստիարակութեան մարզէն ներս հսկայ գործ
կատարեցին ընդհանրապէս Սփիւռքի գաղութներէն ու մասնատրաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն ներս: Կիրակնօրեայ վարժարան-
ները սովորական ու պարագայական նախաձեռնութիւններ չեղան. այլ դարձան թեմերու վարչակազմակերպչական դրօշակներն ու ներս կարեւոր կառոյցներ՝
իրենց կանոնագրութեամբ, ուսուցչական կազմով ու կրթական-դաստիարակչական ծրագրով: Մեր Սուրբ Աթոռին Հայրապետները քաջալերեցին Կիրակ-
նօրեայ վարժարաններու գործունէութիւնը ու գնահատեցին անոնց առաքելութեան նուիրումը դաստիարակները. եւ ատելի՝ Կիրակնօրեայ Վարժարաններու
Ընդհանուր Վարիչ Տնօրէնութիւն մը հաստատուեցաւ Անթիլիասի Մայրավանքէն ներս, որպէսզի կաթողիկոսարանը կարենայ մօտէն հետեւիլ կրօնական
դաստիարակութեան աշխատանքին:

Բնականաբար, իւրաքանչիւր թեմ իր ներքին դրուածքին ու շրջապատին յատուկ պայմաններուն համաձայն կազմակերպեց Կիրակնօրեայ վարժարաննե-
րուն աշխատանքը: Վերջին շուրջ երկու տասնամեակներուն Կիրակնօրեայ վարժարաններուն առաքելութիւնը կրօնական դաստիարակութեան ծիրէն ներս
նոր ծաւալ ստացաւ՝ յատուկ յանձնախումբերու նշանակումով եւ նիւթական կարեւոր ներդրումներով: Կիրակնօրեայ վարժարաններուն ուսուցիչներու վերա-
որակաւորման նուիրումը համագումարներն ու դասընթացքները Կիրակնօրեայ վարժարաններուն նկատմամբ մեր Սուրբ Աթոռին ունեցած նախան-
ձախնդրութեան շօշափելի արտայայտութիւնները դարձան: Իսկ Հայ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Օժանդակ Միութիւնը (ՀԵԿԴՕՄ) իր բազմերես
գործունէութեամբ ու մանաւանդ «Դրագարկ» ամսագրի եւ այլ հրատարակութիւններու ճամբով մեծապէս քաջալեր հանդիսացաւ Կիրակնօրեայ վարժարան-
ներու գործունէութեան:

Արդ. 80 տարիներու հսկայ վաստակի մը դիմաց կը գտնուինք այսօր: Սահակ Բ. Վեհափառ Հայրապետին սրտագին կոչը իր դրական արձագանգը գտած է մեր կեանքէն ներս՝ մեր ժողովուրդի զաւակներուն գիտակից ընդառաջումով ի խնդիր նոր սերունդներու կրօնական դաստիարակութեան: 80 տարիներու ընթացքին կատարուած նուիրեալ ծառայութեան ու ձեռք ձգուած իրագործումներուն դիմաց այսօր կոչուած ենք ո՛չ միայն արդարօրէն ուրախանալու, այլ նաեւ վերանորոգ յանձնառութեամբ շարունակելու նոր սերունդին կրօնական դաստիարակութեան այնքան հրամայական առաքելութիւնը: Ճիշդ է, այսօր մեր ժողովուրդը ցեղասպանութեան յաջորդող շրջանի անորոշութեան մէջ չի գտնուիր: Հազար փառք Աստուծոյ. ունինք ազատ ու անկախ Հայաստան. ունինք կազմակերպ գաղութներ. ունինք նաեւ մարդուծի ու նիւթականի լայն կարելիութիւններ: Սակայն, այսօր շրջապատուած ենք համաշխարհայնացած աշխարհէն եկող ու մեր կեանքէն ներս թափանցող այնպիսի վատառողջ հոսանքներով, որոնք ամէն օր ու ամէն տեղ կը խաթարեն մեր քրիստոնէական նկարագիրը, կ'ապականեն մեր ազգային ինքնութիւնը եւ կը մոլորեցնեն մեր զաւակները:

Արդ. ռեւէ ժամանակէ աւելի այսօր Մենք, որպէս Հովուապետ, կարիքը կը տեսնենք հոգեւոր ու բարոյական արժէքներով թրծելու մեր նոր սերունդին կեանքը: Հայակերտումի առանցքը պէտք է դառնայ հոգեկերտումը: Այս սրբազան առաքելութեան է լծուած Կիրակնօրեայ վարժարանը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը անվերապահօրէն զօրակից կը մնայ Կիրակնօրեայ վարժարանին վստահուած այս վեհ աշխատանքին: Հետեւաբար, Հայրապետական ներկայ Կոնդակով կոչ կ'ուղղենք մեր բոլոր թեմերուն.՝

Ա) Կիրակի, 4 Յուլիսին, 2010, մեր բոլոր թեմերէն ներս յընթացս սուրբ եւ անմահ պատարագին ընթեռնուլ ներկայ Կոնդակը, քարոզի ընթացքին անդրադառնալ Կիրակնօրեայ վարժարաններու առաքելութեան եւ կատարել հանդիսաւոր հոգեհանգիստ Երջանկայիշատակ Սահակ Բ. Կաթողիկոսի ինչպէս նաեւ Կիրակնօրեայ Վարժարաններու ծառայութեան նուիրումը մնջեցեալ վարիչ-տնօրէններու, տնօրէններու, ուսուցիչներու ու բարերարներու յիշատակին համար:

Բ) Ներկայ տարուան ընթացքին իւրաքանչիւր թեմ յատուկ հանդիսութիւններ կազմակերպել Կիրակնօրեայ վարժարաններուն 80-ամեակը նշող՝ միշտ շեշտը դնելով ներկայ ժամանակներուն կրօնական դաստիարակութեան կարեւորութեան ու Կիրակնօրեայ վարժարաններուն վիճակուած կենսական դերին վրայ:

Գ) 80-ամեակը պատեհ առիթի վերածել մեր թեմերէն ներս Կիրակնօրեայ վարժարաններու գործունէութիւնը վերակազմակերպելու ու վերաշխուծացնելու:

Կ'աղօթենք Կիրակնօրեայ վարժարաններու գործունէութեան իրենց ներդրումը կատարած եւ այս աշխարհէն մեկնած բոլոր վարիչ-տնօրէններուն, տնօրէններուն, ուսուցիչներուն ու բարերարներուն հոգիներուն համար: Հայրապետական օրհնութեամբ ու գնահատանքով կ'ողջունենք Կիրակնօրեայ վարժարաններու ծառայութեան լծուած մեր տնօրէններն ու ուսուցիչները, եւ կ'օրհնենք Կիրակնօրեայ վարժարան յաճախող մեր բոլոր զաւակները:

Այս առիթով 80 տարիներու խորքէն եկող Սահակ Կաթողիկոսի հայրական կոչին միացնելով Մեր ձայնը, ջերմօրէն կը թելադրենք մեր ծնողներուն իրենց զաւակները դրկելու Կիրակնօրեայ վարժարան, որպէսզի անոնք հոն դաստիարակուին հոգեւոր ու բարոյական արժէքներով:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւետ օրինեալ ի մէնջ. Ամէն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

*Տուաւ Հայրապետական կոնդակս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 16-ն Մարտի, 2010 թուին Բրիսբան, եւ
Ի թուին Հայոց ՌՆԾԾ:
Ընդ համարաւ Շ / ՅԻԴ.*

Սեպտեմբեր ամսուան բացատրական տոնացոյց

Շրթ. 4	Նիկիոյ Ս. Ժողովի 318 Հայրապետները
Դժ. 8	Տօն Ծննդեան Ս. Կուսին Մարիամու
Կիր. 12	Խաչվերաց
Շրթ. 25	Սուրբ Գեորգ Զօրավար
Կիր. 26	Վարագայ Ս. Խաչ

ՆԻԿԻՈՅ ԺՈՂՈՎ

Արիոս Աղեքսանդրացի, իր իմաստասիրական հմտութեամբը ծանօթ անձ մըն էր, որ մինչեւ իսկ հայրապետութեան յաջորդելու աչք ունեցաւ: Այն ժամանակները կը շարունակէին Յիսուսի անձին վրայ

խնդիրներ եւ Արիոս ալ սկսաւ պաշտպանել այն տեսակետը թէ Յիսուս Քրիստոս չէ Որդի Աստուծոյ մարդացեալ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառական իմաստով առնելու չէ: Աղեքսանդր հայրապետ Աղեքսանդրիոյ կրկին գաւառական ժողովներու մէջ, 319-ին եւ 312-ին, հերքեց Արիոս երեցին կարծիքը, որ սակայն իրեն պաշտպան եպիսկոպոսներ ալ ունեցաւ եւ Եւսեբիոս արքեպիսկոպոս Նիկոմիդիոյ ուրիշ ժողովով մը արձակեց Արիոսը Աղեքսանդրիոյ ժողովներուն դատապարտութենէն: Երբ որ վեճերը ընդհանրացան եւ եկեղեցւոյ մէջ հակառակութիւնները սաստկացան, Կոստանդիանոս կայսրը ուզեց խնդիրը ընդհանուր ժողովի մը մէջ լուծել, եւ բոլոր քրիստոնէայ աշխարհի եպիսկոպոսները հրաւիրեց Նիկիա քաղաքը 325-ին, ուր ժողովը բացուեցաւ Յունիս 19-ին: Հրաւիրուած էին նաեւ Տրդատ եւ Գրիգոր որոնք կամ չուզելով, կամ չկրնալով անձամբ երթալ, Արիստակէսը իրենց փոխանորդ նշանակեցին, եւ իրենց կարծիքին ու դաւանութեան յայտարարութիւնն ալ գրաւոր անոր յանձնեցին եւ ճամբայ հանեցին (ԽՈՐ. 176): Արիստակէս եղաւ Նիկիոյ 318 հայրապետներէն մին, որոնք միայն քանի մը հոգիի տարաձայնութեամբ, Արիոսական վարդապետութիւնը դատապարտեցին, եւ Արիոսը նզովեցին, եւ Կոստանդիանոս ալ զայն աքսորեց: Նիկիոյ ժողովին հայրապետներուն կը կարդացուի Հայոց Մեծաց Արիստարքոս կամ Արիստակիսոս կամ Արսափիոս անունով եպիսկոպոսը, որ մեր Արիստակէսն է, թէպէտ օրինակէ օրինակ անունը աղաւաղուած: Յատուկ գործունէութեանը կամ բանախօսութեանը յիշատակ մը չունինք, բայց արդէն այնչափ եպիսկոպոսներուն մէջէն միայն քանի մը հատ պայքարողներու անունները միայն կը տեսնուին ժողովին ատենագրութեանց մէջ: Արիստակէս ժողովէն շիտակ վերադարձաւ Վաղարշապատ արժանահաւատ բանիւ, եւ քսան կանոնեալ գլխովը ժողովոյն (ԽՈՐ. 177), եւ Գրիգոր ուղղափառ հաւատքի յաղթանակին վրայ ուրախանալով կ'ընդունի եւ կը հռչակէ Նիկիային կանոնները, եւ սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու (ԽՈՐ. 177):

ԽԱՉՎԵՐԱՑը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն վերջինն է: Այն Խաչին նուիրուած տօներուն մէջ ամենակարեւորն է, որովհետեւ նուիրուած է գերութիւնէն խաչի վերադարձի, անոր բարձրացման և փառաբանութեան պատմական յիշատակին: Հայաստանեայց Եկեղեցին Խաչվերացը կը տօնէ Սեպտեմբերի 11-17 ժամանակահատուածին հանդիպող Կիրակի օրը, իսկ տօնի յաջորդ օրը մեռելոց է:



610 թ. պարսից Խոսրով արքան մեծաքանակ զորքով կը յարձակի Բիզանդական կայսրութեան վրայ: Սկզբնական յաջողութիւններէն ոգևորուած՝ պարսկական զօրքերը 614 թ. կը մտնեն Երուսաղէմ: Շատերուն կը սպաննեն եւ շատերն ալ գերի կը վերցնեն: Վերջիններու մէջ էր նաև Երուսաղէմի Զաքարիա հայրապետը: Բայց պարսիկներն այսքանով չեն բաւարարուիր. կը մտնեն Ս. Յարութեան տաճար և գերի կը վերցնեն այնտեղ պահուող Աստուածընկալ Ս. Խաչը, որը Դ դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մօր Հեղինէի ձեռքով գտնուէր և պաշտամունքի առարկայ էր դարձեր բոլոր քրիստոնէաներու համար:

628 թ. բիզանդական զօրքերը Հերակլ կայսեր գլխաւորութեամբ խաչափայտը վերադարձնելու համար կը պատերազմին պարսիկներու դէմ: Բիզանդական զօրքին կ'օժանդակէ նաև հայկական զօրախումբը ՄԺԺ Գնունիի գլխաւորութեամբ: Տիրոջ օգնութեամբ բիզանդացիները յաղթանակ կը տանին:

Ս. Խաչը հանդիսաւոր թափօրով կը տեղափոխուի հայոց Կարին քաղաքը: Իսկ Կարինէն գայն կը տեղափոխեն Կ. Պոլիս, ապա Երուսաղէմ: Գերեղարձի ճանապարհին Տիրոջ խաչափայտը կը բարձրացուէր և ցնծութեան առիթ կ'ըլլար ժողովուրդի համար:

Խաչը քրիստոնէաներու համար Աստուծոյ զորութիւնն է ու պարծանքներու պարծանքը, որուն վրայ իր անմեղ արիւնը թափեց Քրիստոս՝ տալով մեզ յաղթութեան զէնքը՝ ընդդէմ սատանայի ու անոր խաբկանքներուն: Յիսուս խաչի վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրը մարդկութեան հանդէպ, և խաչը դարձաւ մեզ համար յոյսի, սիրոյ և փրկութեան երաշխիք:

Սեպտեմբեր 25 Սուրբ Գէորգ զօրավար

Խաչվերացէն 13 օր ետք եկող շաբաթ օրը Ս. Գէորգ է: Նահատակուած է մօտաւորապէս 303 ՔԵ, Նիկոմեդիոյ մէջ:

Մեծցեր է քրիստոնէայ ընտանիքի մէջ: Երբ Հռոմէացի Դիոկղետիանոս կայսրը (284-305) հրովարտակ կը հրատարակէ քրիստոնէաներուն դէմ, Գէորգ զօրավարը կը պատուէ Նիկոմեդիա քաղաքի հրապարակին վրայ կախուած այս արքունական հրամանը: Այս պատճառով կը չարչարուի եւ կը նահատակուի որովհետեւ կը մերժէ ուրանալ իր քրիստոնէութիւնը:

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գէորգի մասին: Ասոցմէ անենածանօթը այն է որ Գէորգը սպաննելով վիշապի մը ազատեր է կոյսի մը, եւ ասոր համար կ'ընդունուի որպէս վիշապասպան սուրբ:



Անգլիացիները իրենց պահապան սուրբը կը համարեն Ս. Գէորգը «St. George»: Սուրբ Գէորգի անունով եկեղեցիներ ունին Հայերը եւ եւրոպական ժողովուրդները:

Սեպտեմբեր 26 Վարագայ Սուրբ Խաչ

Ամէն տարի, Սուրբ Գէորգին յաջորդող Կիրակին որ միշտ Սեպտեմբեր 28-ի ամենէն մօտ Կիրակին է, Հայաստանեայց եկեղեցին կը նշէ խաչին նուիրուած Վարագայ Ս. խաչի տօնը:

Այս տօնը կը վերագրուի Ս. խաչի երեւման Վարագ լեռներու բարձունքներուն վրայ կառուցուած վանքին մէջ: Ըստ աւանդութեան, Ս. Հռիփսիմէն այդ տեղ պահեր է իր վիզի խաչը: Հոն, 653 թուականին շուրջ, երկու ճգնաւորներ, Յովէլ եւ Թողիկ տեսիլք մը կ'ունենան ուր հրաշալի լուսաւորութիւն մը զիրենք կ'առաջնորդէ դէպի Վանի Վարագ լեռներ ուր լուսաւորութիւնը կը կեդրոնանայ ու ի յայտ կու գայ խաչ մը:



Վարագավանք

Կը գտնուի Վան քաղաքին հարաւ արեւելեան կողմը, Վարագ լեռան արեւմտեան լանջին: 653 ին, երբ յայտնի կը դառնայ Վարագայ Ս. Խաչի «Նշանի» տեղը, Ներսէս Գ. կաթողիկոս Տայեցին, կը կառուցէ Ս. Նշան եկեղեցին եւ կը հաստատէ Վարագայ Ս. Խաչի տօնը:

870 ին արաբները կը գրաւեն Վարագավանքը, սակայն շատ չանցած Աշոտ Արծրունի իշխանը կ'ազատագրէ զայն:

1857 ին Վարագավանքի վանահայր է նշանակուել Խրիմեան Հայրիկը «Մկրտիչ Ա. Վանեցի»: 1915 ին լքուել է Վարագավանքը եւ ներկայիս աւերակ վիճակի մէջ է:

Համացանցէն քաղուած

Քիչ է թիւր անոնց, որոնք այս օրերուն ե-նամակի հասցէ չունենան, եւ օրական առ նոպա մէկ անգամ չկարդան իրենց նամակները:

Ամէն օր զանազան տեսակի ծանուցումներ, զաւեշտներ, տեղեկութիւններ եւ ծիծաղներ կը ստանանք ե-նամակի միջոցաւ, երբեմն զուարճալի, երբեմն զարմանալի, երբեմն օգտակար իսկ երբեմն անտեղի էջեր: Կը պատահի նաեւ, որ հետաքրքրական եւ հաճելի ըլլան անոնք:

Այս էջով ձեզի պիտի փոխանցենք ե-նամակով մեր ստացած դրուագներէն՝ մի քանին:

Դուն կ'ըսես	Աստուած կ'ըսէ	Աստուածաշունչի Համարք
Անկարելի է	Ամէն բան կարելի է	Ղուկաս (18:27)
Շատ յոգնած եմ	Քեզի պիտի յանգչեցնեմ	Մատթէոս (11:28-30)
Զիս սիրող չկայ	Քեզ կը սիրեմ	Յովհաննէս (3:16) եւ Յովհաննէս (3:34)
Չեմ կրնար շարունակել	Շնորհքս կը բաւէ քեզի	Բ. Կորնթացիներուն(12:9) եւ Սաղմոս (91:15)
Չեմ գիտեր ինչ ընել	Քու քայլերդ պիտի ուղեմ	Առակաց (3:5-6)
Չեմ կրնար այս բանը ընել	Ամէն բան կրնաս ընել	Փիլիպպեցիներուն (4:13)
Կարող չեմ	Կարող ես	Բ. Կորնթացիներուն(9:8)
Ինքզինքիս չեմ ներեր	Քեզի կը ներեմ	Ա. Յովհաննէսի (1:9) եւ Հռոմայեցիներուն (8:1)
Չեմ հասնիր բոլորին	Պիտի հոգամ բոլոր պետքերդ	Փիլիպպեցիներուն (4:19)
Կը վախնամ	Մի վախնար	Բ. Տիմոթէոսին (1:7)
Միշտ մտահոգ եմ	Հոգերդ վրաս ձգէ	Ա. Պետրոսի (5:7)
Խելացի չեմ	Քեզի իմաստութիւն կուտամ	Ա. Կորնթացիներուն(1:30)
Առանձին կը զգամ	Քեզ բնաւ մինակ պիտի չթողում	Եբրայեցիներուն (13:5)



ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՆ

Վանայ լճի հարաւ-արեւելքին կը գտնուի Աղթամար կղզին, իսկ կղզին մէջ՝ նոյնանուն վանքը: Այն բաղկացած է մի քանի եկեղեցիներէ՝ կառուցուած տարբեր ժամանակներու. անոնցմէ այժմ կանգուն է միայն մէկը: 912-921 թթ. Գագիկ Արծրունի յանձնարարութեամբ մեծն ճարտարապետ Մանուէլը կառուցած է Աղթամարի Ս. Խաչը՝ քառախորան, խաչաձեւ գմբեթաւոր կառուցուածքով եկեղեցին՝ ճարտարապետական առումով կրկնօրինակը Զօրադիրի Ս. Խաչի: Այս եկեղեցին բացառիկ նմուշ մըն է ոչ միայն հայ քրիստոնէական, այլեւ համաշխարհային արուեստի մէջ: Այն դուրսէն ամբողջութեամբ պատուած է պատկերաքանդակներով, իսկ ներսէն՝ որմանկարներով:

Պատկերաքանդակներու թեմաները եւ աստուածաշնչական են, եւ աշխարհիկ: Յստակօրէն կարելի է գտել պատկերաքանդակներու վեց գօտիի: Ստորինը՝ նեղ բուսական զարդաքանդակներով:

Երկրորդ գօտին, որ կը կոչուի նաեւ գլխաւոր, կը ներկայացնէ քանդակային հիասքանչ շարք մը, պատկերներ, որոնք թէեւ առաջին հայեացքէն իրար հետ կապ չունին, սակայն ուշադիր դիտելով հասկնալի կը դառնայ անոնց միջեւ եղած գաղափարական կապը:

Հիւսիսային ճակատին (հիւսիսային կողմը, որպէս կանոն, պաշտամունքային պատկերացումներու մէջ կը խորհրդանշէ մահը) պատկերուած են նախամեղքը՝ Ադամն ու Եւան, կենաց ծառը՝ անոր փաթթուած օձով. մեղսագործութիւնէն ետք Աստուած ըսաւ, որ օձն այսուհետեւ կը սողայ փորի վրայ, ուստի ճարտարապետը զայն ոտքերով է գծած:

Պատկերուած է Սամսոնը փղշտացին սպանելէ, յետոյ նոյն Սամսոնը՝ առիծին յաղթելու ընթացքին: Հին կտակարանեան այս դէպքերը նոյնացած են քրիստոնէայ հերոս գինուորներու վիշապամարտի հետ: Պատկերուած են նաեւ սուրբեր Թեոդորոսը, Սարգիսը եւ Գեորգը վիշապին նետահարելու վիճակի մէջ: Որոշ հին կրօններու համար վիշապը կը խորհրդանշէ մեղքը, եւ միայն վիշապամարտէն յետոյ կարող էր հաստատուիլ ճշմարտութիւնն ու արդարութիւնը: Այս գաղափարը առկայ է նաեւ հայ մանրանկարչութեան՝ Յիսուսի մկրտութեան պատկերագրութեան մէջ. Յորդանանի ջուրերուն՝ Յիսուսի ոտքերու տակ, պատկերուած է պարտուած վիշապը: Յաղթանակը խորհրդանշող հին կտակարանեան պատմութիւններէն պատկերաքանդակներու մէջ տեղ են գտեր նաեւ «Դանիէլը առիծներու գութին մէջ», «Երեք պատանիները հնոցին մէջ» պատումները: «Շար. 1»

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

բ	է		գ				ե	թ
	թ			ե			ը	
	գ	ը			ա	բ	զ	
			բ			դ		ը
		ա				զ		
դ		ե		է	զ			
	ե	գ	ը			է	դ	
	դ						թ	
է	ա				դ		գ	զ

Յիսուս եւ Զակքէս


Կարդա՛ Դուկասի անտարան 19:1-10: Գտի՛ր իւրաքանչիւր նախադասութենէն պակսող բառը, ապա գտած բառերովդ ամբողջացուր խաչբառը:

Հորիզոնական

2. Ան _____ էր (հ 1-2)
3. Ան կ'ուզէր _____ թէ ով է Յիսուսը (հ 3)
13. Ըսաւ _____, քանի այս մարդն ալ Աբրահամի զաւակ է: (հ 9)

Ուղղահայեաց

1. Երիթովի մէջ _____ անունով մարդ մը կար (հ 1-2)
4. Ան կարճահասակ էր եւ ժանտաթզեմիի մը _____ ելաւ (հ 3-4)
5. Յիսուս երբ հասաւ այդ _____ (հ 5)
6. _____ նայեցաւ եւ ըսաւ (հ 5)
7. Զակքէս _____ (հ 5)
8. _____ իջիր (հ 5)
9. Որովհետեւ պէտք է որ տունդ _____ (հ 5)
10. Բոլոր անոնք որ տեսան ըսին - «Այս _____ մեղաւորի մը տունը գնաց, հիւր եղաւ» (հ 7)
11. Զակքէս ըսաւ - Տէ՛ր ահա ունեցածիս _____ աղքատներուն պիտի տամ (հ 8)
12. Այսօր, այս _____ փրկուեցաւ (հ 9)
14. Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փնտռելու եւ _____



Յիսուս եւ Սամարացի Կինը

Յովհաննէս 4:1-42

Հարցումներուն պատասխանները գտիր վարի բառերու տուփին մէջ:

Մնացեալ բառերով ամբողջացուր վարի համարը:

- 1 - Յիսուս ո՞ր կեցաւ երբ Սամարիայէն կ'անցնէր Գալիլիա երթալու համար _____
- 2 - Յիսուս որո՞ւ ջրհորին քով նստաւ _____
- 3 - Յիսուս օրուան ո՞ր ժամուն նստաւ _____
- 4 - Յիսուսի աշակերտները ու՞ր գացած էին _____
- 5 - Ի՞նչ գնելու գացած էին _____
- 6- Յիսուս խմելու ջուրին փոխարէն ի՞նչ ջուր պիտի տար կնոջ _____
(կենդանի ջուր, այսինքն հոսուն ջուր)
- 7- Հրեաները ի՞նչ բաներ չէին գործածէր եթէ Սամարացիները գործածած ըլլային _____
- 8 - Յիսուս տալիք ջուրը ի՞նչ կուտայ _____
- 9 - Կինը Յիսուսին ի՞նչ կարծեց _____
- 10 - Ո՞վ պիտի գայ ըսաւ կինը ամէն բան պատմելու _____
- 11 - Այս քաղաքէն ո՞ր ազգին պատկանողներ հաւատացին Յիսուսի, կնոջ տուած վկայութեան վրայ _____
- 12 - Ասկէ ետք կը հաւատանք՝ ոչ թէ խօսքիդ համար այլ որովհետեւ մենք անձամբ լսեցինք զինք եւ գիտենք թէ ճշմարտապէս, _____

կ	ե	ն	ս	ա	տ	ո	ւ	ջ	ո	ւ	ր	մ	ե	ս	ի	ա	ն
ո	ւ	տ	ե	լ	ի	ք	Ս	ա	մ	ա	ր	ա	ց	ի	ն	ե	ր
ք	ա	ղ	ա	ք	Փ	ր	կ	ի	չ	ը	կ	է	ս	օ	ր	ի	ն
յ	ա	ւ	ի	տ	ե	ն	ա	կ	ա	ն	ա	շ	խ	ա	ր	հ	ի
է	ա	ն	օ	թ	ն	ե	ր	ի	ն	ք	ն	Ս	ի	ւ	ք	ա	ր
կ	ե	ա	ն	ք	Յ	ա	կ	ո	ք	ի	մ	ա	ր	գ	ա	ր	է

Այրի Կնոջ Լուման
Մարկոս 12:41-44 Դուկաս 21:1-4



Մեծահարուստները մեծ գումարներ
նետեցին տաճարի գանձանակին
մէջ

Աղքատ այրի կինը երկու լումայ
նետեց տաճարի գանձանակին մէջ

Յիսուս ըսաւ՝ «Այրին բոլորէն շատ
դրամ նետած եղաւ գանձանակին
մէջ, որովհետեւ իր ամբողջ
ունեցածը տուաւ»

Գծիկով մը խօսքերը միացուր յարմար նկարին՝



հարուստ է
քիչ դրամ ունի
Աստուծոյ կը սիրէ
Աղքատ է
ինքզինքն ալ կը մտածէ
շատ դրամ ունի



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դպրոցներու նշանաբանը: Մարկոս **10.14**

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,
արքայութիւնը

----- ըսաւ.

«Ձգեցէք որ ----- ինծի գան,
----- մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ
----- է Աստուծոյ
-----:»

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
«Հայաստանեայց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներ»ը:
ա.- 1900
բ.- 1929
գ.- 1979
դ.- 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
Մոնթրէալի Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցը:
ա.- 1900
բ.- 1929
գ.- 1979
դ.- 1980

3.- Այս տարի «Մաշտոցի
Արձագանգ» ին քանիերորդ ամեակն
է:
ա.- 6
բ.- 11
գ.- 18
դ.- 21

4.- Աստուածաշունչը կը բաղկանայ
երկու մասերէ: Առաջին մասը կը
կոչուի --- ----- իսկ երկրորդ՝
--- -----: Առաջին մասը գրուել
է ----- առաջ, իսկ երկրորդը
Քրիստոսէ ---:

5.- Ի՞նչ կը կոչուի տաղաւարը որ
կը տօնենք Սեպտեմբեր ամսուան
ընթացքին:
ա.- Սուրբ Ծնունդ
բ.- Սուրբ Զատիկ
գ.- Սուրբ Աստուածածնի
Վերափոխում

դ.- Խաչվերաց

6.- Հետեւեալ սուրբերէն որո՞նք տօնը
կը տօնենք Սեպտեմբերին:
ա.- Սուրբ Սարգիս
բ.- Սուրբ Գէորգ
գ.- Սուրբ Թադէոս
դ.- Սուրբ Պետրոս

7.- Ի՞նչ կը կոչուի խաչին
կեդրոնական մասը:

8.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ
մկրտուեցաւ
ա. 1
բ. 2
գ. 30
դ. 33

9.- Ամբողջացո՞ւր Հայաստանեայց
Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին առաջին 4 տողերը:
Կիրակնօրեայ Սուրբ յարկին
մենք ----- ենք լուսաբաղձ,
Կայծերու պէս -----
Ցայտած՝ սրտէն պերճ -----:

10.- Ամբողջացո՞ւր Հայաստանեայց
Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին երկրորդ 4 տողերը:
Ուստի քալենք -----,
Ո՛վ հարազատ զարմ -----,
----- գընացքով
Լոյս-աղբիւրին -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

դ. անունը Քրիստոսի

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն

Կիլիկիոյ Կաթողիկոսը:

ա. Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան

բ. Արամ Ա. Կաթողիկոս

գ. Գարեգին Ա. Կաթողիկոս

դ. Գարեգին Բ. Կաթողիկոս

6.- Պատարագի ընթացքին

գործածուող ձայն հանող սպասն է...

ա. Սկիհ

բ. Մաղճմայ

գ. Աշտանակ

դ. Քշոց

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց

Կաթողիկոսը:

ա. Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան

բ. Արամ Ա. Կաթողիկոս

գ. Գարեգին Ա. Կաթողիկոս

դ. Գարեգին Բ. Կաթողիկոս

7.- «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»
կ'երգուի...

ա. Ողջոյնի ատեն

բ. Հաղորդութեան ատեն

գ. Արձակման ատեն

դ. Խոստովանանքի ատեն

3.- Ըստ Ա. Կորնթացիներուն 13

ին երեք հիմնական շնորհներն են

Հաւատքը, Յոյսը եւ Սէրը եւ այս

երեքէն ամենէն մեծն է...

ա. հաւատքը

բ. յոյսը

գ. սէրը

դ. Աստուածային հիմնական շնորհները
թիւով չորս են:

8.- Խորհուրդ մեծ եւ սքանչելին...

ա. Սաղմոս է

բ. Աղօթք է

գ. Ծարական է

դ. Ընթերցանութիւն է

4.-Վերջին ընթրիքի ընթացքին Յիսուս

հաստատեց Հաղորդութեան խորհուրդը.

Աւագ շաբթուան ո՞ր օրն էր այդ...

ա- Երկուշաբթի

բ. Ուրբաթ

գ. Հինգշաբթի

դ. Չորեքշաբթի

9.- Հինգ տաղաւարներն են.-

Ծնունդ, Զատիկ, Վարդավառ,
Վերափոխում Ս. Աստուածածնի եւ...

ա. Մեռելոց

բ. Խաչվերաց

գ. Ծաղկազարդ

դ. Համբարձում

5.- Սուրբ Ծնունդի մաղթանքն է.-

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, օրհնեալ
է...

ա. Ծնունդը Քրիստոսի

բ. յայտնութիւնը Քրիստոսի

գ. յարութիւնը Քրիստոսի

10.- Սուրբ Զատիկէն 40 օր ետք կը
տօնենք

ա. Համբարձում

բ. Երեւում

գ. Այլակերպութիւն

դ. Յայտնութիւն

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկին

1. Ո՞ր Կաթողիկոսը 1929 թուականին հաստատուած Կիրակնօրեայ Դպրոցներու մասին Կոնդակ մը հրապարակեց 1930 ին:

- ա. Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան
- բ. Արամ Ա. Կաթողիկոս
- գ. Գարեգին Ա. Կաթողիկոս
- դ. Գարեգին Բ. Կաթողիկոս

2. Ո՞ր Կաթողիկոսը 2010 թուականին Կիրակնօրեայ Դպրոցներու մասին Կոնդակ մը հրապարակեց:

- ա. Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան
- բ. Արամ Ա. Կաթողիկոս
- գ. Գարեգին Ա. Կաթողիկոս
- դ. Գարեգին Բ. Կաթողիկոս

3. Ամբողջացո՞ւր:

Ա. Տիեզերական ժողովը տեղի ունեցաւ --- թուականին Ն-- -- քաղաքին մէջ: Այդ ժողովին Հայաստանեայց Եկեղեցին ներկայացուեցաւ Ս. Գ----- Լու-----ի որդի Ա-----ի կողմէ:

4. Խաչվերացի ընթացքին 628 թուականին հայոց ո՞ր քաղաքը փոխադրուեցաւ Ս. Խաչը: -----

5. Ս. Գէորգ ո՞ր քաղաքին մէջ նահատակուած է, մօտաւորապէս ո՞ր թուականին:

- ա. Ն-----
- բ. --3 Ք.Ե.

6. ա. Վարագավանքի խաչը որո՞ւն վիզին խաչն էր: Հ-----

բ. Որո՞նք էին Վարագավանքի ճգնաւորները: Յ---- եւ Թ-----:

գ. Ե՞րբ հաստատուեցաւ Վարագայ Ս. Խաչի տօնը:

դ. Ո՞ր կաթողիկոսին կողմէ: ----- Գ. Տայեցի:

7. Ամբողջացո՞ւր:

Ախթամարի Ս. Խաչ եկեղեցին կը գտնուի ----- լճին մէջ: Կառուցուած է 912-921 թուականներուն Գ--- -- Ա----- յանձնարարութեամբ: Ճարտարապետն է ----- :

8. Ի՞նչ էր Զակքէոսի գործը:

Մ-----:

9. Ըստ Յովհաննէս 4.14 ին Յիսուսի տուած ջուրը ի՞նչ կու տայ:

10. Այրի կինը երկու լումայ դրաւ գանձանակին մէջ: Շատ մը ուրիշներ մեծ գումարներ դրին: Յիսուս Թուաբանական ի՞նչ հիման վրայ հաստատեց թէ թշուառ այրին բոլորէն շատ դրամ նետած եղաւ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Մոնթրէալի Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի Ամաւերջի Հանդէս



Մայիս 23, 2010-ի յետմիջօրէին, Կիրակնօրեայ Դպրոցը տօնախմբեց բերքահաւաքի իր 30-րդ տարերշրջանի ամաւերջի հանդէսը, Սուրբ Յակոբ Վարժարանի, Բաստրմանեան Սրահէն ներս: Հանդիսութեան ներկայ էր Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ներկայացուցիչ՝ Տիար Սարգիս Գուլումճեան, բազմաթիւ ծնողներ եւ Կիրակնօրեայ Դպրոցի բարեկամներ:

Յայտագիրը սկսաւ վարժարանի աշակերտ-աշակերտուհիներու խմբային մենաբանութեամբ/երգեցողութեամբ «Հայր Մեր», «Մաղթանք» եւ «Մաղթերգ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու» աղօթք-երգերով:

Ապա, բեմ բարձրանալով բացման խօսքը արտասանեց Կիրակնօրեայ դպրոցի Երկր. Բ. դասարանի աշակերտ Առէն Պապիկեան: Ան իր խօսքին մէջ, բոլորին բարի գալուստ մաղթելէ ետք, ըսաւ. «Ինչպէս գիտէք, այս տարին, 2010ն Արամ վեհափառի կողմէ հռչակուեցաւ «Հայ Կնոջ Տարին»: Այս առիթով, որպէս այս տարեշրջանի վերջին օրը, փոքր յայտագիր մը պատրաստեք ենք ձեզի համար: Ձեր յայտագիրներուն մէջ կը տեսնէք թէ մեր կենդանի պատկերը Սբ. Հովսիսիմէի մասին է:» եւ աւելցուց. «Մեզի համար, Հայ Կնոջ տարին, ըլլալով նախ եւ առաջ մեր Մայրերուն տարին, տարին է նաեւ Մեր Կիրակնօրեայ Դպրոցի Ուսուցչուհիներուն առանց որոնց հաւանաբար մեր Կիրակնօրեան, ինչպէս նաեւ շատ մը ուրիշ կիրակնօրեաներ նոյնիսկ կարելի պիտի չըլլար շարունակել»:

Հանդէսը ընթացք առաւ Կիրակնօրեայի նախակրթարանի աշակերտներու կատարողութեամբ Կենդանի Պատկերին որուն ընթացքին ընթերցեցին՝ Արշակ Խշիշեան, Միհր Պանքեան Նախ. Ե. Էն, Կասիա Արմութլու Երկր. Ա. եւ Լոռի Չինչինեան եւ Առէն Պապիկեան Երկր. Բ.::

Ասոր յաջորդեց «Ով մեծ Աստուած» եւ «Ով բարերար» աղօթքները Մանկապարտէզ եւ Նախ. Ա. ի աշակերտներուն կողմէ, որմէ ետք Երկրորդականի աշակերտները արտասանեցին 23րդ «ԻԲ» Սաղմոսը: Որմէ ետք խօսք առաւ Տնօրէնը՝ Թորոս Պապիկեան: Պարոն Տնօրէնը իր խօսքին մէջ ըսաւ թէ «Պէտք է վերադառնալ մեր արմատներուն, եւ մեր արմատը մեր հայ Քրիստոնէութիւնն է, եւ եթէ մենք որոշենք թեթեւցնել մեր Հայ Քրիստոնէութիւնը, շատ դժուար պիտի ըլլայ մեր հայապահպանումը այս օտար ափերուն վրայ:

Ան աւելցուց թէ մենք այս աշխարհին վրայ Զինուորեալ Եկեղեցի ենք, եւ միշտ պայքարի մէջ ենք չարին դէմ: Մեր պզտիկները պէտք է սկիզբէն վստահ ըլլան որ իրենց ինքնութիւնը Հայ Քրիստոնեայ Ինքնութիւն է, եւ թէ իրենք այս աշխարհին Բարիի եւ Չարի պայքարին մէջ, Բարիին կողմն են»:

Ապա, Նախակրթարանի Զ. դասարանը աւարտելուն համար վկայագիր ստացան՝ Կասիա Արմութլու (2009) եւ Արազ Գեպթանճեան (2010): Նուէրներ տրուեցան նաեւ այն աշակերտներուն որոնք ընթացիկ տարուան ընթացքին տարբեր մարզերու մէջ յաւելեալ յաջողութիւններ արձանագրած են իրենց ջանասիրութեամբ, կարգապահութեամբ, ծառայասիրութեամբ կամ ներկայութեամբ:

Ցայտագրի վերջաւորութեան աշակերտութեան ու ներկաներու կողմէ միաձայնութեամբ երգուեցաւ ԿԻԼԻԿԻԱՆ:

Հանդէսը վերջացնելու լաւագոյն բաժինն այն էր, երբ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմն ու աշխատակիցները ներկայացուելով Տնօրէնութեան կողմէ, բարձրացան բեմ, որոնց փոխանցուեցաւ ծաղկեկողովներ, որպէս երախտագիտութեան դոյզն արտայայտութիւն:



Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
Հոկտեմբեր 2010 (ԺԸ տարի թիւ 2)

Այս թիւով.....

Փոխան Խմբագրականի՝
Ախթամարի Ս. Խաչ Եկեղեցին Էջ 2-3

Սեպտեմբեր ամսուան բացատրական
բառարան: Էջ 4-6

Տօն՝ Եօթանասուններկու
աշակերտներ Քրիստոսի,

Ս. Թարգմանիչներու տօն
Ս. Մեսրոպ Մաշտոց
Ս. Եղիշէ Պատմիչ
Ս. Դաւիթ Անյաղթ
Ս. Մովսէս Քերթոզ
Ս. Գրիգոր Նարեկացի
Ս. Ներսէս Շնորհալի

Ս. Աւետարանիչներ
Ս. Մատթէոս
Ս. Մարկոս
Ս. Դուկաս
Ս. Յովհաննէս

Համացանցէն քաղուած Էջ 7

Խոհեր՝ Թարգմանչացի առիթով Էջ 8

Եզակի Գիրքեր Էջ 8

Յիսուս 10 բորոտները կը բուժէ Էջ 9

Յիսուս եւ Զակարիա Էջ 10

Լոյսը Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Կարճ լուրեր Կիրակնօրեայէն Էջ 16



Թ...Թարգմանչաց

Խաչքարի հեղինակ՝
Ժողովրդական վարպետ,
ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամսուան Համարները

«Ճանաչել զԻմաստութիւն եւ զԽրատ
Իմանալ զԲանս հանճարոյ:»

Առակաց 1.2

«Իմաստութեան սկիզբը Տիրոջը վախն է:

Առակաց 1.7

ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ «շար. 2»

Հարաւային ճակատին վրայ պատկերուած են Քրիստոսն ու Տիրամայրը: Իսկ մինչ այդ՝ Դաւիթն ու Գողիաթը, յետոյ Իսահակի զոհաբերութիւնն է, քանզի այն նախօրինակն է Քրիստոսի զոհաբերութեան: Պատկերուած է նաեւ Ստեփանոս Նախավկան՝ առաջին քրիստոնէայ նահատակը, ապա՝ յանուն Քրիստոսի եւ յանուն հայրենիքի՝ արաբներու դէմ մղուած կռիւներուն նահատակուած Համազասպ եւ Սահակ



Արծրունիներու դիմաքանդակներն են: Փրկագործութեան հետ կ'առնչուի նաեւ Յովսէփի պատմութիւնը: Այս պատումները ճարտարապետը հերթով քանդակել է: Կեդրոնական մասին մէջ, ինչպէս ըսինք, Որդին է՝ զահին նստած, եւ Ս. Կոյսը՝ Մանկան հետ, իսկ անոր երկու կողմերուն՝ Գաբրիէլ ու Միքայէլ հրեշտակները:



Արեւելեան ճակատին Աղամի կիսանդրին է. հիւսկտակարանեան ալիւթաւակաւն քաղաքոթեան համաձայն՝ Քրիստոսն ունէր Աղամի տեսքը: Ապա՝ Յովհաննէս Մկրտիչը, ան, ով նախապատրաստեց մարդոց ընդունելու Աստուծոյ Որդին. երբ Յովհաննէսը կը մկրտէր, «որք ի փարիսեցոց անտի» էին, եկան անոր մօտ եւ հարցուցին՝ Դուն Եղիա՞ն ես (Յովհ. Ա 19-28). ուստի

եւ անոր կողքին Եղիան է, իսկ Եղիայի մօտ ծնկաչոք՝ սարեպթացի այրին, քանզի շատ որբեր կային այդ օրերուն Իսրայէլի մէջ, բայց Եղիային Աստուած ուղարկեց հեթանոս Սարեփթա քաղաքի այրիին մօտ, որ կը խորհրդանշէ հեթանոսներուն, որոնք, ի տարբերութիւն հրեաներուն, ընդունեցին Աստուծոյ Որդիին (Ղուկ. Դ 25): Ապա Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը քարոզած Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալներու, իսկ յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորչի պատկերաքանդակներն են:

Արեւմտեան ճակատին Քրիստոսի եւ Գազիկ արքայի պատկերաքանդակներն են՝ խորհրդանշելով երկրային եւ երկնային



արքայությունները եւ անոնց միջեւ կամուրջ հանդիսացող եկեղեցին: Գագիկը ձեռքին բռներ է եկեղեցւոյ մանրակերտը: Քրիստոսը ձախ ձեռքին բռներ է Աստուածաշունչը՝ «Ես եմ Լոյսն աշխարհի» մակագրութեամբ, իսկ աջ ձեռքով կ'օրհնէ: Գագիկի կողքին կայ կնոջ երկու դիմաքանդակ. ըստ երեւոյթին՝ մէկը մայրն է, միւսը՝ կինը՝ Մլքե թագուհին, որը 922 թ. Վարազդավանքին է նուիրեր Աւետարան մը, որը յայտնի է իր անունով:



Երրորդ գոտիին մէջ կենդանիներու քանդակներ են, չորրորդին՝ խաղողի չընդհատուող որդագալարը կենցաղային տարբեր տեսարաններով: Հինգերորդ գոտին զինանշաններու եւ տոհմանշաններու գոտին է, իսկ վեցերորդին մէջ պատկերուած են առիւծներէ եւ յովագներէ փախչող եղնիկները եւ այծեաճները: Եկեղեցւոյ ճակատներուն քանդակուած են չորս աւետարանիչները՝ ի նշան այն բանի, որ քրիստոնէութիւնը ճշմարիտ Աստուծոյ կրօնը քարոզուեցաւ եւ իր լոյսը սփռեց աշխարհի չորս կողմերուն:

Ներսէն եկեղեցին ամբողջովին պատուած է որմանկարներով, որոնք կատարուել են քանդակագործութեանը զուգընթաց: Ասոնք իրենց ոճով նման են Լմբադի, Թալինի (5-7-րդ դդ.) եկեղեցիներու որմանկարներուն: Այսպէս, այս թոյլ կու տայ ենթադրել, որ որմանկարչութիւնը հայկական եկեղեցիներուն երբեք արգիլուած չէ եղեր: Արեւելեան պատին մարդու ստեղծումն է պատկերուած, ապա՝ մեղսագործութիւնն ու դրախտէն արտաքսումը: Միւս երեք պատերը նկարագարուած են նորկտակարանեան թեմաներով՝ գրեթէ լիովին ներկայացնելով Յիսուսի երկրային կեանքը: Ընդհանուր առմամբ եկեղեցին կը ներկայացնէ դրախտի պատկերը: Ան կը ներկայացնէ կորուսեալ դրախտը, մարդկային կեանքը, պայքարը յանուն փրկութեան եւ կրկին դէպի դրախտ տանող ճանապարհը: Զուր չէ որ այս եկեղեցին Ս. Խաչ. չէ որ խաչի վրայ պարտուեցան մեղքն ու մահը:



Բայց խաւարը միշտ կը փորձէ նուաճել լոյսը. թուրք ոսոխներու կողմէ իրականացուած եղեռնի հետեւանքով աշխարհի երեսէն իսպառ անհետացան կամ կիսաւեր դարձան հայ մշակոյթի շատ ու շատ անգնահատելի արժէքներ: Հազար ու մի եկեղեցիներ ոչնչացուցած, բիրաւոր ձեռագրեր այրած թուրքերը, չմեղադրուելու համար մշակութային ցեղասպանութեան մէջ, այսօր «կը նորոգեն» Ս. Խաչը. բայց արդէս ք կարելի է նորոգում անուանել այլոց մշակութային արժէքը ձեւափոխելով իւրացնելը: Արուեստի հրաշափառ այս կոթողի ճշմարիտ տերերը՝ հայերը, այլեւս հեռու են անկէ, եւ լքուածութեան ու լռութեան շունչն իջեր ու պարուրեր է այն: Ու կը թուի, թէ խորհրդաւոր այդ լռութեան մէջ, եկեղեցւոյ քարերն անգամ Աստուծմէ փրկութիւն կ'աղերսեն:

Հոկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 2	Եօթանասուններկու Աշատերտներ Քրիստոսի
Շբթ. 9	Սց. Թարգմանչաց Վարդապետացն մերոց
Շբթ. 16	Ս. Աւետարանիչներ՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս
Կիր. 24	Գիւտ Ս. Խաչի
Շբթ. 30	Ս. Յովհան Ոսկեբերան Հայրապետ

Տօն՝ Եօթանասուններկու աշակերտներ Քրիստոսի

72 Աշակերտներուն մասին մենք կը կարդանք Ղուկասի 10.1-24 ին մէջ հետեւեալը:

1. Այս դէպքէն ետք՝ Յիսուս եօթանասուններկու աշակերտներ եւս նշանակեց եւ զանոնք զոյգ-զոյգ իրմէ առաջ ղրկեց իր երթալիք բոլոր քաղաքներն ու շրջանները: 2. Անոնց ըսաւ.

- Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ. հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ պատրաստէ ու ղրկէ:.....

17. Եօթանասուններկու աշակերտները ուրախութեամբ վերադարձան եւ ըսին Յիսուսի.

- Տէ՛ր, նոյնիսկ չար ոգիները մեզի կը հնազանդին, երբ քու անունովդ կը հրամայենք:

18. Յիսուս ըսաւ անոնց.20. Սակայն մի՛ ուրախանաք որ չար ոգիները կը հնազանդին ձեզի, այլ ուրախացէք որ ձեր անունները երկինքի մէջ գրուած են:....

Ս. Թարգմանիչներու տօն



Մեսրոպ Մաշտոց, Մատենադարանի մուտքին

Հայ գիրերու գիտէն ետք ծնունդ առաւ թարգմանչաց շարժումը որուն առաջին եւ գերագոյն նպատակն էր Աստուածաշունչը թարգմանել հայերէնի եւ եկեղեցական ծէսերը հայացնել:

Թարգմանիչ անուան տակ ծանօթ են հայ գիրերու հեղինակ Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց կաթողիկոս Սահակ Ա. Պարթեի շուրջ հաւաքուած 100 սաները, որոնք անմիջական աշակերտները եղած են անոնց: Իսկ այս աշակերտներու աշակերտները իրենց կարգին կոչուած են «կրտսեր թարգմանիչներ»:

Հայաստանեայց եկեղեցին Թարգմանչաց օրը կը տօնէ վեց գլխաւոր թարգմանիչներու յիշատակը որոնք են՝

Ս. Մեսրոպ Մաշտոց (~362-440) որ ստեղծեց մեր Այբուբենը **405** թուականին:

Ծներ է Տարօն գաւառի Հացեկաց գիւղին մէջ մօտաւորապէս 362 թուականին: Ծառ լաւ գիտէր նաեւ Յունարէն, պարսկերէն, ասորերէն, եւ վրացերէն: Արքունիքի ատենադպիր, եւ ապա զինուորական ծառայութիւն մտնելէ ետք 394 թուականին դարձաւ վանական: Հայաստանի տարբեր շրջանները քարոզելով՝ Մաշտոցը խորապէս գիտակցեցաւ իր ժողովուրդին սպառնացող վտանգը երկրին մէջ տիրող օտար ազդեցութիւններու հետեւանքով եւ վճռեց ստեղծել հայոց գիրերը: Այդ նպատակով Սահակ Պարթեւ կաթողիկոսի եւ Վռամշապուհ թագաւորի աջակցութեամբ ան ուղուեցաւ Ասորիք: Բաւական նեղութիւններէ ետք 405 թուականին Մաշտոցը վերդարձաւ հայրենիք իր հետ բերելով իր ստեղծած 36 գիրերը: Անկէ ետք օգնեց Ս. Սահակ Հայրապետին հետ Հայ դպրութեան տարածման: Բացաւ դպրոցներ, եկեղեցական արարողութիւնները հայացնելու նպատակով կազմեց Պատարագամատոյցը « Մաշտոցի եւ Ժամագրքի նախնական տարբերակները», սկսաւ Աստուածաշունչի թարգմանութիւնը, գրեց քարոզներ: Վախճանեցաւ 17 Փետրուար 440 ին Վաղարշապատի մէջ եւ թաղուեցաւ Օշական գիւղին մէջ:

Ս. Եղիշէ Պատմիչ (~410~470) որ գրեց «Վարդանանց եւ հայոց պատերազմի մասին» Հայ մեծ պատմիչ եւ աստուածաբան եւ կրօնական աշակերտ Ս. Սահակ Պարթեւի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի: 434-411 կ'ուսանի Աղեքսանդրիոյ մէջ: Հայաստան վերադառնալէ ետք կը ծառայէ Վարդան Մամիկոնեանին որպէս զինուոր եւ դպրապետ: 450-451 Վարդանանց պատերազմին մասնակցելէ ետք կը ձգէ զինուորական ասպարէզը, կը հեռանայ աշխարհական կեանքէն եւ կը դառնայ մենակեաց:

Ս. Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայ (~475~550) Հայ մեծ իմաստասէր, ծներ է Տարօնի Ներգին գիւղին մէջ: Իր ուսումը ստացեր է Աղեքսանդրիոյ մէջ: Հրապարակային փիլիսոփայական վէճերու մէջ իր յաղթանակներուն համար ստացեր է Անյաղթ տիտղոսը: Դ.Ա. հիմնադիրն է Հայաստանի մէջ տրամաբանական գիտութիւններու: Ան փիլիսոփայութեան տուեր է բարոյագիտական ուղուածութիւն: Դ. Ա. ի մեծագոյն գրական գործը «Սահմանք Իմաստասիրութեան» գործն է որ մէկ հազարամեակ եղեր է մեկնողական աշխատութիւններու առարկայ: Դ. Ա. նաեւ ստեղծեր է բազմաթիւ երգեր Եկեղեցւոյ համար:

Ս. Մովսէս Քերթով Սիւնեցի (Է. Դար) Իր ծննդեան ու մահուան թուականները անյայտ են: Եղած է Է. դարու երկրորդ կէսի աստուածաբան, թարգմանիչ, ծիսագէտ եւ երաժիշտ-տեսաբան:

Ս. Գրիգոր Նարեկացի (951- 1003) Բանաստեղծ, երաժիշտ, հայ առաքելական եկեղեցւոյ տօնելի սուրբերէն: Անոր ամենէն աւելի ծանօթ ստեղծագործութիւնն է «Մատենան Ողբերգութեան»ը, որ աւելի հանրածանօթ է իբր «Նարեկ» աղօթագիրք:

Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան»-ը հրատարակուած է գրաբար, աշխարհաբար՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն եւ թարգմանուած է բազմաթիւ լեզուներու ինչպէս ֆրանսերէն, անգլերէն, պարսկերէն, իտալերէն, գերմաներէն, սպաներէն: Հետաքրքրական է նաեւ թէ նոյն այս գլուխ գործոցի գրչագիր ընդօրինակութիւններէն մեզի հասած է 150-էն աւելի օրինակներ:

Ս. Ներսէս Շնորհալի (1102 - 1173) Բանաստեղծ, երաժիշտ, Ամենայն հայոց կաթողիկոս Ներսէս Դ. Կլայեցի, կոչուեր է «Շնորհալի» իր բացառիկ գիտութեան, առաքինի վարքին համապատասխան: Ան կրած է նաեւ բազմաթիւ այլ որակաւորներ, որոնցմէ են «Երկրորդ լուսաւորիչ», «Եռամեծ վարդապետ», «Երանաշնորհ սուրբ», «համահրեշտակ», եւայլն:

Ներսէս Շնորհալիի հոգեւոր բանաստեղծութիւնները թիւով շատ են: Անոնցմէ ամենէն աւելի ծանօթ է «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որ 24 տուներէ բաղկացած գեղեցիկ բանաստեղծութիւն մը կարելի է համարել: Այս տուններէն իւրաքանչիւրը կը վերագրուի օրուան 24 ժամերէն իւրաքանչիւրին, ու պարզ բայց նոյն ատեն խորաթափանց աղօթք մըն է:

Սուրբ Աւետարանիչներ՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս



Ս. Մատթեոս



Ս. Մարկոս



Ս. Ղուկաս



Ս. Յովհաննէս

Այս տարի Հոկտեմբեր 16ին Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ տօնը Քրիստոսի կեանքն ու քարոզչութիւնը պատմող աւետարաններու հեղինակներուն՝ Սուրբ աւետարանիչներ՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի:

Մատթեոս պաշտօնով մաքսաւոր էր, այսինքն հարկահաւաք, երբ Յիսուս զինք իր 12 առաքեալներէն մէկը ըլլալու կանչեց:

Մարկոսի Աւետարանը չորս աւետարաններէն ամենէն կարճն է եւ գրուած է բոլորէն առաջ:

Ղուկաս յոյն բժիշկ մըն էր, որ աշակերտած էր Պօղոս առաքելի եւ դարձած անոր հաւատարիմ գործակիցը եւ բազմաթիւ անգամներ անոր հետ ճամբորդած:

Յովհաննէս՝ Յիսուսի 12 Առաքեալներէն կրտսերագոյնն է: Իր աւետարանը յատկանշական կերպով տարբեր է միւս աւետարաններէն: Անիկա Յիսուսը կը ներկայացնէ որպէս Աստուծոյ Խօսքը որ մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Սեպտեմբեր ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն, արքայութիւնը

Քրիստոսի 6. դ. քնոց 7. ա. Ողջոյնի ատեն 8. գ. Շարական է 9. բ. Խաչվերաց 10. ա. Համբարձում

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ. 1929 2. դ. 1980 3. գ. 18 4. Նոր կտակարան, Հին կտակարան, Յիսուսէ, ետք 5. դ. Խաչվերաց 6. բ. Ս. Գեորգ 7. Ակ 8. գ. 30 9. սաներն, լուսածին, նախնեաց 10. անխոռվ, արի, հաւատաւոր, ցանկալի

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. բ. Արամ Ա. 2. դ. Գարեգին Բ. 3. գ. Սէրը 4. գ. Հինգշաբթի 5. բ. յայտնութիւնը

Երկրորդականի անկիւն

1. ա. Սահակ Բ. Կաթողիկոս Խաչայեան 2. բ. Արամ Ա. կաթողիկոս 3. 325, Նիկիա, Ս. Գրիգոր Լուսաւորիչի որդի Արիստակէսի կողմէ 4. Կարին քաղաքը 5. Նիկումեդիա 6. Հռիփսիմէ, Յովել եւ Թողիկ, 653, Ներսէս, 7. Վանայ, Գագիկ Ա. Արծրունի, Մանուէլ 8. Մաքսապետ 9. Յաւիտենական Կեանք 10. Համեմատութիւն ան իր ունեցածին 100% ը տուաւ մինչ ուրիշներ աւելի նուազ տուին:

Համացանցէն Քաղուած

Անծանօթ հեղինակ

Դեկտեմբերեան պաղ օր մը, Նիւ Եորքի մէջ, 10 տարեկան փոքրիկ տղայ մը, բոպիկ ոտքերով կեցած էր կօշիկի խանութի մը ցուցափեղկին առջեւ: Ան պաղէն կը թողար ու կը դիտէր պատուհանէն ներս:

Տիկին մը իրեն մօտենալով կը հարցնէ՝ «Ի՞նչ կը նայիս այդպէս կեցած»:

Տղան կը պատասխանէ՝ « Աստուծմէ կը խնդրէի որ ինծի գոյգ մը կօշիկ տայ»:

Տիկինը, փոքր տղուն ձեռքէն բռնելով կը մտնէ խանութ եւ աշխատողէն կը խնդրէ քանի մը գոյգ գուլպայ, պզտիկ տղուն համար: Ապա խանութպանին կը հարցնէ եթէ թաց լաթ մը ու անձեռոց մը կրնայ բերել նաեւ:

Այս բոլորը հաւաքած, կը ծոխ տղուն առջեւ, կը սրբէ անոր ոտքերը, կը չորցնէ ու տաքուկ գուլպաներ կ'անցնէ փոքրիկ տղուն ոտքերուն: Ապա կը գնէ նաեւ կօշիկներ՝ եւ աւելորդ գուլպաները պայուսակի մը մէջ դնելով կ'երկարէ պզտիկ տղուն ու կ'ըսէ՝ «Վստահաբար աւելի հանգիստ կը զգաս հիմա»:


Երբ տիկինը կը դառնայ որ մեկնի, փոքրիկ տղան ձեռքը սեղմելով ու արցունքոտ աչուկներով կ'ըսէ իրեն «Դուք Աստուծոյ տիկինն է՞ք»:

* * *

Այս պատմութիւնը մեզի կը յիշեցնէ Մատթէոսի աւետարանին 25. 34-40 հատուածը:

...«Եկէ՛ք Զօրս կողմէ օրհնեալներ, եւ ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը, որ ձեզի համար աշխարհի սկիզբէն պատրաստուած է: Որովհետեւ անօթի էի եւ զիս կերակրեցիք, ծարաւ էի եւ ջուր տուիք, օտարական էի եւ ընդունեցիք զիս, մերկ էի եւ հագցուցիք ինծի, հիւանդ էի եւ հոգ տարիք ինծի, բանտի մէջ էի եւ այցելեցիք ինծի»:

Այն ատեն արդարները պիտի հարցնեն. «Տէ՛ր, քեզ ե՛րբ անօթի տեսանք եւ կերակրեցինք, կամ ծարաւ տեսանք եւ ջուր տուինք: Քեզ ե՛րբ օտարական տեսանք եւ ընդունեցինք կամ մերկ՝ եւ հագցուցինք: Քեզ ե՛րբ հիւանդ կամ բանտի մէջ տեսանք եւ այցի եկանք քեզի»: Թագաւորը պիտի պատասխանէ անոնց. «Կ'ըսեմ ձեզի, որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք»:



Եւան Ադամին՝ «Հագուստներդ հաւաքէ»:

Հոկտեմբերը՝ Թարգմանչաց տօնն է։ Եւ 405 թուին, ծնունդ առած հայերէնը արդէն 1605 տարեկան է։ Բոլոր լեզուներն ալ, մեզի նման կը ծնին, պատանեկութիւն եւ երիտասարդութիւն կ'ունենան, կը ծերանան ապա կը մեռնին։ Լեզու մը երիտասարդ է երբ կը յաջողի նորագոյն արուեստագիտութիւններու (technology) հետ քայլ պահել։ Փոխադարձաբար, նորոգուող ու յառաջդիմող արուեստագիտութիւնը իր կարգին, կ'օգնէ որ լեզուները ծաւալին ու զարգանան։ Արդեօք լեզու մը կա՞ր որ չօգտագործեց 15-րդ դարուն Կիլիկիայի տպագրութեան գիտք։ Ոչ, որովհետեւ այն լեզուները որոնք տպագրութիւն չունեցան, մեռան։

Մեզմէ իւրաքանչիւրին պարտականութիւնն է Հայերէն լեզուն ողջ պահելը. եւ այդ ամենէն պարզ ու դիւրին ձեւով, այսինքն զայն գործածելով մեր առօրեային մէջ: Հայերէ՛ն խօսինք, կարելի եղած չափով մաքուր անաղարտ հայերէն, երբ կը խօսինք իրարու հետ: Հայերէ՛ն գիրերով կարդանք, ըլլան անոնք գիրքեր, համացանցի էջեր, օրաթերթեր, ամսաթերթեր... Հայերէ՛ն գրենք, հայերէն տառերով հաղորդակցինք, ըլլայ այդ թուղթի, համակարգիչի թէ համացանցի պաստառներուն վրայ: Վերջապէս, իմաստալից ձեւով յիշատակենք Թարգմանչաց տօնը, կարդալով Աստուածաշունչը, որուն թարգմանութեան համար յատկապէս հայերէն գիրերը կեանք առին:

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku										ը	դ			զ			
բ	է	դ	գ	զ	ը	ա	ե	թ		թ			է	ա	ե		զ
ա	թ	զ	է	ե	բ	գ	ը	դ	զ					ե		թ	զ
ե	գ	ը	թ	դ	ա	բ	զ	է		զ	զ			ը			դ
գ	զ	է	բ	թ	ե	դ	ա	ը			ը	բ		թ	ա		
թ	բ	ա	դ	ը	գ	զ	է	ե	է			զ			զ	բ	
դ	ը	ե	ա	է	զ	թ	բ	գ	ա	բ		թ					ե
զ	ե	գ	ը	ա	թ	է	դ	բ	թ		է		դ			ը	
է	ա	թ	ե	բ	դ	ը	գ	զ				ա			բ	է	

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պալմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Յիսուս տասը բորոտները կը բուժէ Ղուկասի աւետարան 17:11-19

Պակսող բառերը գտիր նկարներուն մէջէն եւ գրէ գծիկներուն վրայ:


Յիսուսի հանդիպեցան տասը ----- որոնք հեռուն կեցան եւ բարձր ձայնով ըսին- «Յիսուս վարդապետ, ----- մեզի».

Յիսուս ըսաւ «գացէ՛ք եւ դուք ձեզ ----- ցոյց տուէք»:

Եւ մինչդեռ կ'երթային, արդէն իսկ -----:

Անոնցմէ մէկը որ ----- մըն էր երբ տեսաւ որ ----- վերադարձաւ
եւ սկսաւ բարձրաձայն զԱստուած -----:

Երեսին վրայ գետին ----- Յիսուսի ----- առջեւ եւ -----
յայտնեց:



Բորոտութիւն

Մորթի հիւանդութիւն, այդ շրջանին անբուժելի:

Բորոտներուն արգիլուած էր ժողովուրդին մօտենալ:

Քահանաները պէտք էին քննել եւ վստահ ըլլալ որ բորոտները առողջացած են եւ կրնան վերադառնալ իրենց ընտանիքներուն:


Յիսուս եւ Զակքէոս

Ղուկաս 19:1-10

Յիսուս Երիթով մտաւ եւ երբ հասաւ ժանտաթզենիին, վեր նայեցաւ եւ ըսաւ - -----

Գտիր Յիսուսի խօսքերը թուագրուած տերէններէն:

Գրէ գծիկներուն վրայ թուաբանական լուծումներուն յարմարցնելով:



----- , ----- :
 4×7 $39 - 17$ $42 / 7$ $117 - 91$

 3×5 $12 + 7$ $47 - 39$ $16 + 9$

----- :
 $24 + 7$ $26 - 15$ 7×7

Լոյսը Աստուծոյ խօսքը կեանքի լոյս է: Մաղմուս 119 (14)

Յիսուսէն առաջ, Աստուած լոյսը գործածած է որպէս խորհրդանշան
Աստուածաշունչին մէջ:

Յիսուսի խօսքը «Ես եմ աշխարհի լոյսը» կրնանք գտնել Ս. Գիրքի տարբեր
բաժիններու մէջ:

Կարդայ համարները եւ յարմար լոյսերուն միացու՛ր:


Մաղմուս 139:11-12 Եթէ ըսեմ՝ «խաւարը թող զիս պարուրէ, ցերեկը թող
զիշեր դառնայ իմ շուրջս» նոյնիսկ խաւարը քեզի համար խաւար չէ եւ
զիշերը ցերեկի պէս լուսաւոր է: Խաւար եւ լոյս քեզի համար միեւնոյնն են:

Մաղմուս 27:1 Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես: Տէրն է
կեանքիս ապաւենը, որմէ պիտի դողամ ես:

Մաղմուս 37:6 Յերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ, իրաւունքդ՝
կէսօրուան արեւուն պէս:

Մաղմուս 119:105 Խօսքդ ճրագ է քայլերուս, լուսաւորող ճամբաներուս

Եզեկիէլ 1:4 Բռնկած կրակ կուգար որուն բոլորտիքը պայծառութիւն



Ո՞րն է ճիշդ պատասխանը



Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.12-13
կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամալի, ուտելիքը, ձուկ,
հաց, բաւականաչափ

Երբ օրը -----, տասներկու աշակերտները
մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- ----- ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերն
ու ագարակները, հանգչին եւ ուտելիք -----, որովհետեւ
հոս ----- տեղ ենք:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւք տուէք անոնց -----:

Անոնք ըսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ ----- եւ երկու -----

է. բայց եթէ կ'ուզես, կ'երթանք ժողովուրդին համար

----- կերակուր կը գնենք:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ հայ գիրերու գիւտը:

- ա.- 301
- բ.- 405
- գ.- 451
- դ.- 1

2.- Ո՞ր գիրքը առաջին անգամ հայերէնի թարգմանուեցաւ:

- ա.- մեր հայերէնի գիրքը
- բ.- կարմիր գլխարկիկը
- գ.- Աստուածաշունչը
- դ.- Յայսմաւուրքը

3.- Ո՞վ ստեղծեց հայ Գիրերը:

Սուրբ Մ-----g

4.- Ո՞ր էր հայ գրչութեան առաջին կեդրոնը:

Վ-----տ

5.- Ո՞վ է այն Սուրբ թարգմանիչը որ գրած է «Հաւատով Խոստովանիմ»ը:

- ա.- Ս. Եղիշէ Պատմիչ
- բ.- Ս. Դաւիթ Անյաղթ
- գ.- Ս. Մովսէս Քերթող
- դ.- Ս. Ներսէս Շնորհալի

6.- Ո՞վ է այն Սուրբ թարգմանիչը որ գրած է «Նարեկ»ը:

- ա.- Ս. Եղիշէ Պատմիչ
- բ.- Ս. Դաւիթ Անյաղթ
- գ.- Ս. Մովսէս Քերթող
- դ.- Ս. Գրիգոր Նարեկացի

7.- Այս չորս Ս. Աւետարանիչներէն ո՞վ բժիշկ էր:

- ա.- Ս. Մատթէոս
- բ.- Ս. Մարկոս
- գ.- Ս. Դուկաս
- դ.- Ս. Յովհաննէս

8.- Այս տարի Հոկտեմբերի ո՞ր օրը Ս. Խաչին Գիւտը կը տօնենք:

- ա.- 10
- բ.- 17
- գ.- 24
- դ.- 29

9.- Յիսուս ի՞նչ չափի ճաշով կերակրեց 5,000 ը:

- ա.- 5 հաց եւ երկու ձուկ
- բ.- 5 ձուկ եւ երկու հաց
- գ.- 5 հաց եւ հինգ ձուկ
- դ.- 2 հաց եւ երկու ձուկ

10.- Քանի՞ կողով ճաշ աւելցաւ:

- ա.- 2
- բ.- 5
- գ.- 12
- դ.- 5,000

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1. Ամբողջացո՛ւր:

Ախթամարի Ս. Խաչ եկեղեցին կը
գտնուի ----- լճին մէջ: Կառուցուած է
912-921 թուականներունԳ----- Ա----- յանձնարարութեամբ:
Ճարտարապետն է ----- :2. Վերի նկարը, Ախթամարի Ս. Խաչ
եկեղեցւոյ, առնուած է Սեպտեմբեր
10, 2010 ին: Ի՞նչ սխալ կայ այս
նկարին մէջ:3. Ղուկաս 10.3 ին մէջ Յիսուս
որո՞նց ըսաւ «Հունձքը առատ է,
բայց մշակները՝ քիչ. հետեւաբար
խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ
իր հունձքին համար մշակներ
պատրաստէ եւ դրկէ:

----- աշակերտներուն:

4. Հետեւեալներէն ո՞վ Ս.
Թարգմանիչներուն մաս չի կազմեր:

ա. Եղիշէ

բ. Ներսէս Շնորհալի

գ. Դաւիթ Անյաղթ

դ. Թորոս Ռոսլին

5. Գրէ՛ հայերէնի թարգմանուած
առաջին նախադասութիւնը:Ճ----- գ----- եւ գ---- Իմանալ
գ---- հ-----6. Ո՞վ էր Քրիստոսի կրտսերագոյն
Առաքեալը:

ա. Մատթէոս

բ. Մարկոս

գ. Ղուկաս

դ. Յովհաննէս

7. Յիսուս 10 բորոտներ բժշկեց
ինչպէս կը կարդանք Ղուկաս 17.11-
19 ին մէջ: Այս բորոտներէն քանի՞
հոգին Յիսուսի շնորհակալութիւն
յայտնեց:

ա. 1

բ. 3

գ. 7

դ. 10

8. Ի՞նչ էր Զակքէոսի գործը:

Մ-----:

9. Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս. Խաչի
գիւտը:

Կիրակի՝ Հոկտեմբեր --, 2010:

10. Ըսէ՛ մէկ բառով՝
Ոսկի Բերան Ունեցող

Ս. Յովհանն Ռ-----

Ո՞րն է Ճիշդ պատասխանը Երկրորդականի անկին

1. Ախթամարի Ս. Խաչ եկեղեցույ
հարաւային ճակատին վրայ
քանդակուած է Բսահակի
գոհաբերութիւնը: Ասիկա որո՞ւ
գոհաբերութեան նախօրինակն է:

2. Ըստ հին կտակարանեան
այլաբանական բացատրութեան,
Քրիստոս որո՞ւ տեսքը ունէր:

3. Աստուածաշունչի հայերէնի
առաջին թարգմանութիւնը
կատարուեցաւ հետեւեալ յունարէն
թարգմանութենէն:

Եօթ----- կամ Septuagint LXX

4. Ո՞վ է «Աշխարհի լոյսը»:

5. Թո՛ւ է 6 սուրբ թարգմանիչները՝
ժամակագրական կարգով:

ա. -----

բ. -----

գ. -----

դ. -----

ե. -----

զ. -----

.

6. Սուրբ թարգմանիչներէն ո՞ր
երկուքը 5րդ դարու թարգմանիչներու
խումբին կը պատկանին:

ա. -----

բ. -----

7. Ո՞ր սուրբ թարգմանիչն է
«Վարդանանց եւ հայոց պատերազմի
մասին» հատորին հեղինակը

8. Ո՞ր սուրբ թարգմանիչն է
«Մատեան Ողբերգութեան»
հատորին հեղինակը:

9. Ո՞ր սուրբ թարգմանիչն է
«Հաւատով Խոստովանիմ» աղօթքին
հեղինակը:

10. Ո՞ր սուրբ թարգմանիչը
փիլիսոփայական բանավէճերու մէջ
միշտ յաղթող էր:

Կարճ լուրեր Կիրակնօրեայ Դպրոցէն

. Կիրակի՝ 19 Սեպտեմբեր 2010ին Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտութիւնը, ուսուցչական կազմը ու տնօրէնը մասնակից եղան Ս. Պատարագի արարողութեան եւ հաղորդուեցան:



Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
Նոյեմբեր 2010 (ԺԸ տարի թիւ 3)

Այս թիւով.....

Նոյեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 2-4

Տօն՝ Սուրբ Հրեշտակապետերու
Գաբրիէլի եւ Միքայէլի,

Տօն՝ Սուրբ Առաքեալներու
Անդրէասի եւ Փիլիպպոսի

Յիսնակ

Սուրբ Գրիգոր Սքանչելագործ

Սուրբ Յովհան Ոսկեբերան

Սուրբ Կոյսի Տաճար ընծայումը

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Ս.
Եկեղեցւոյ պատարագին Էջ 5-7

Պ ա տ ա ր ա գ ի խ ո թ ի ու թ դ ի ն
հաստատումը

Պատարագ՝ զոհ, ընծայ, նուէր

Համացանցէն քաղուած Էջ 8

Եզակի Գիրքեր Էջ 9

Յիսուսի Այլակերպութիւնը Էջ 10

Յիսուս եւ Զակքէոս Էջ 11

Յիսուս՝ ճշմարիտ Որբատունկը Էջ 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 13-16



Հ....Հրեշտակապետ

Խաչքարի հեղինակ՝
Ժողովրդական վարպետ,
ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամսուան Համարը,

«Առաւել Աստուծոյ հնազանդիլ պետք է
քան թէ մարդոց:»

Առաքեալներուն Գործերը 5.29

Նոյեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 6	Մբ. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի
Շբթ. 13	Սց. Առաքելոց Անդրէի եւ Փիլիպպոսի
Շբթ. 20	Տօն Ամենայն Սրբոց
Կիր. 21	Բարեկենդան Յիսնակաց Պահոց, Մբ. Կոյսի Տաճար ընծայում
Շբթ. 27	Ս. Գրիգոր Սքանչելագործ

Տօն՝ Սուրբ Հրեշտակապետերու Գաբրիէլի եւ Միքայէլի




Միքայէլ հրեշտակապետը Իսրայէլի ժողովուրդի համար մարտնչելու ընթացքին: Երուսաղէմ, ձեռ. 2027, էջ 4բ, Աստուածաշունչ 1266 թ. Կիլիկիա, ծաղկող Թորոս Ռոսլին

միջնորդներ հոգեւոր եւ նիւթեղէն աշխարհներուն միջեւ: Անոնք ունին իրենց ղեկավարները որոնցմէ ամենէն աւելի ծանօթ են Գաբրիէլը եւ Միքայէլը: Հին միջնադարեան մանրանկարչութեան մէջ յատկապէս, կը գտնենք Գաբրիէլ հրեշտակապետի պատկերը, Տիրամօր աւետելու ատեն:

Տօն՝ Սուրբ Առաքելներու Անդրէասի եւ Փիլիպպոսի

Անդրէաս առաքելը Պետրոս առաքելի եղբայրն էր, որ իրեն պէս ձկնորս էր: Սկիզբը, Անդրէասը աշակերտեր է Ս. Յովհաննէս Մկրտիչին եւ Յիսուսը գտնելէ ետք, անմիջապէս իր եղբայրը Պետրոսը գտաւ ու ըսաւ անոր «Մեսիան գտանք» «Յովհ. 1.35-42»: Ըստ աւանդութեան, Ս. Անդրէաս առաքել կը քարոզէ Յունաստանի եւ փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի X ձեռով խաչի մահով, Յունաստանի մէջ:

Փիլիպպոս առաքելը Բեթսայիդէն էր, Անդրէասի եւ Պետրոսի քաղաքէն: Յիսուս էր որ երբ Գալիլիա գացած ատեն Փիլիպպոսը տեսաւ, անոր ըսաւ «Հետեւէ՛ ինծի»: Անդրէասն ալ իր կարգին գտաւ Բարթողոմէոսը «Նաթանայէլը» եւ Յիսուսի ներկայացուց «Յովհ. 1.43-51»: Ըստ աւանդութեան կը նահատակուի Եփեսոսի մէջ խաչի մահով:



Սողոմոն Իմաստուն արքայի կառուցած տաճարի մանրակերտը Յիսնակ

Յիսնակը՝ 50 օրերու միջոց մըն է՝ որուն ընթացքին կը պատրաստուինք տօնելու Յիսուսի ծնունդն ու աստուածայայտնութիւնը որ տեղի կ'ունենայ Յունուար 6ին: Յունուար 6էն 50 օրեր ետեւ հաշուելով կը հասնինք Նոյեմբեր 18ին, հետեւաբար այդ թուականին ամենէն մօտ Կիրակին Յիսնակի Բարեկենդանն է:

Կար ժամանակ, երբ Յիսնակի ամբողջ տնտրութեան պահք կը պահուէր, Ս. Յարութեան նախորդող մեծ պահքին պէս: Սակայն ներկայիս սովորական Չորեքշաբթիի եւ Ուրբաթի պահքերէն զատ երեք շաբաթներու վերածուէր է Յիսնակի Պահքը: Առաջին շաբաթը Յիսնակի Պահք, Դեկտեմբերին՝ Ս. Յակոբի պահք, իսկ Յունուարին՝ Ս. Ծննդեան պահք:

Սուրբ Գրիգոր Սքանչելագործ



Ս. Գրիգոր Սքանչելագործը ծներ է Պոնտոսի (Մեքաստիա) Նեոկեսարիա քաղաքին, ազնուական ընտանիքի մը մէջ, շուրջ 210 թ.: Գրիգորը մտադիր էր հմտանալ օրէնսգիտութեան և հռետորութեան մէջ, սակայն Աստուած անոր եւ իր եղբոր համար այլ ճանապարհ նախասահմանէր էր. Անոնք ուսում ստացան Աթենքի մէջ, ապա Պաղեստինեան Կեսարիա քաղաքին մէջ՝ աշակերտելով այն ժամանակուայ ամենահեղինակաւոր քրիստոնէայ մտաւորականին՝ Որոգինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ ան կը ձեռնադրուի քաղաքի եպիսկոպոս: Աւանդութեան համաձայն՝ Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրուելու օրերուն Նեոկեսարիոյ մէջ հազիւ 17 քրիստոնէայ կար, իսկ մահուան օրերուն՝ ընդամենը 17 հեթանոս: Իր անուան հետ կապուած բազմաթիւ հրաշքներու համար արժանացեր է «Սքանչելագործ» մականորին:

Ս. Գրիգոր աչալրջութեամբ կառավարեց թէ՛ իրեն վստահուած թեմն ու ժողովուրդին և թէ՛ եղաւ մեծ մատենագիր՝ թողելով բազմաթիւ աստուածաբանական երկեր:

Ան վախճանէր է 270 թ. խաղաղ մահուամբ: Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Գրիգոր Սքանչելագործի, Նիկողայոս Հայրապետի և Միլոն եպիսկոպոսի յիշատակը կը տօնէ Ս. Խաչի Ժ. կիրակիին յաջորդող շաբաթ օրը:

Սուրբ Յովհան Ոսկեբերան (344/54-407 թթ.)



Սուրբ Յովհան Ոսկեբերանը ընդհանրական եկեղեցույ տասներկու վարդապետներէն մէկն է: Ծնած է Անտիոքի մէջ, ազնուական ընտանիքի մէջ, ազգութեամբ՝ ասորի: Հայրը մահացեր է երբ ան տակաւին մանուկ էր: Մօր բարի խնամքի շնորհիւ ստացեր է լաւ կրթութիւն՝ ուսանելով ժամանակի հռչակավոր հռետոր և ճարտասան Լիբանիոսի մօտ:

380 թուականին Մելիտոս եպիսկոպոսի թախանձագին հարկադրանքով սարկաւագ կը ձեռնադրուի: 386 թուականին Մելիտոսին յաջորդած Փլաբիանոս հայրապետը զայն քահանայ կը ձեռնադրէ: 397 թուականին կը վախճանի Կոստանդնուպոլսոյ Նեկտարիոս պատրիարքը, Արկադիոս կայսրը, տեղեակ ըլլալով սուրբ Յովհան Ոսկեբերանի համբաւի մասին, կը պատուիրէ, որպէսզի զայն անմիջապէս, անաղմուկ բերեն Կոստանդնուպոլիս պատրիարք ձեռնադրելու: 398 թուականին տեղի կ'ունենայ անոր ձեռնադրութիւնը:

Իր հօտին նուիրուած հովիւը ոչ միայն քաղցրութեամբ կը խրատէր, այլ երբեմն յանդիմանութեամբ, այդ էր պատճառը, որ շուտով անուանի հայրապետը շատ հակառակորդներ կ'ունենայ: Այդ հակառակորդներու շարքին մէջ էր նաեւ Եղորքսիա թագուհին, որ կը յանդիմանուէր հայրապետի կողմէ արքունական յոռի բարքերու պատճառով: Իր թշնամիներու սադրանքով 403 թուականին ան կ'աքսորուի, սակայն վախճալով ժողովուրդի ցասումէն և այդ օրերուն տեղի ունեցած երկրաշարժէն՝ արքունիքը ետ կը բերէ հայրապետին: 404 թուականին Ս. Յովհան Ոսկեբերանը դարձեալ կ'աքսորուի Կիլիկիայի Կոկիսոն քաղաքը,

աւելի ուշ՝ Բիզանդիա: Չդիմանալով ճանապարհի դժուարութիւններուն 407 թուականին կը մահանայ: Անոր արտասանած վերջին բառերն են. «Փա՛ որ քեզ, Աստուա՛ծ, փա՛ որ քեզ, ամէն ինչի համար փա՛ որ քեզ»:

438թ. սուրբի մարմինը մեծ հանդիսաւորութեամբ կը բերուի եւ կ'ամփոփուի Կ. Պոլսոյ Ս. Առաքելոց եկեղեցույ մէջ:


Ընդհանրական եկեղեցույ այս անխոնջ մշակի ոսկեբերան խօսքերը դարեր շարունակ առաջնորդեր և կրթեր են բազում եկեղեցական սերունդներ: Անոր խօսքերէն կատարուած մէջբերումներու կը հանդիպինք ամենուր: Ան յայտնի է իր Աստուածաշունչ մատեանի գիրքերու մեկնութիւններով: Բազմատեսակ է անոր մատենագրական վաստակը՝ մեկնութիւններ, ճառեր, ներբողներ, թղթեր և այլն, որոնք իրենց բարերար ազդեցութիւնն են թողեր քրիստոնէական մտքի պատմութեան վրայ: Անոր գործերը հայերէնի թարգմանուէր են, արդէն իսկ իր կենդանութեան օրերուն:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յովհան Ոսկեբերանի յիշատակն ամէն տարի կը տօնէ երկու անգամ, նախ՝ Տասներկու վարդապետներու շարքին՝ Խաչվերացի Զ կիրակիին յաջորդող շաբաթ օրը, ապա՝ առանձին՝ Խաչվերացի Է կիրակիին յաջորդող շաբաթ օրը: Ս. Կոյսի Տաճար Ընծայումը

Մարիամի ծնողքը ուխտեր էին իրենց զաւակը ընծայել Տիրոջ: Երբ Մարիամ 1 տարեկան եղաւ, ծնողքը զինք Տաճար տարին՝ Աստուծոյ ընծայելու: Ծնողքը զինք ամէն տարի Տաճար տարին մինչեւ Մարիամի 7րդ տարեդարձը: Եօթը տարեկանէն սկսեալ, Մարիամը սկսաւ Տաճարին մէջ ապրիլ: Ան ստացաւ Ս. Հոգիին 7 շնորհքները՝ եւ զարդարուեցաւ 7ը առաքինութիւններով: Ան բնակեցաւ Տաճարին մէջ իբրեւ անբիծ աղանի, աճեցաւ եւ զարգացաւ հասակով եւ իմաստութեամբ: Մարիամ իր առաքինի վարքով 7ը տարիներ փաց տաճարին մէջ եւ ամէն օր հոգիով կը կրթուէր պարկեշտութեան մէջ:

Բացատրություն՝ Հայց. Առաք. Սուրբ Եկեղեցւոյ Պատարագին «շար. 1»

Վերջերս երբ կը մտածէի Ս. Պատարագի բացատրութեան ներկայացում մը ընել մեր Կիրակնօրեայ Դպրոցի ճորդ դասարանի աշակերտներուն, յիշեցի գրադարանիս մէջ ունեցած եւ ժամանակին մեծ հաճոյքով կարդացած Բերիոյ Թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ՝ Գերշ. Տ. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. պատարագի» բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկը: Հետեւաբար որպէս հիմ ունենալով այդ գրութիւնը, այս եւ յաջորդող մի քանի թիւերուն մէջ պիտի ներկայացնեմ հոն տրուած բացատրութիւնը, միշտ ի մտի ունենալով յատկապէս մեր դպրոցի ճորդ դաստարանի աշակերտները: Թորոս Պապիկեան



Պատարագի խորհուրդին հաստատումը

Հայց, Եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն մէկն է սուրբ հաղորդութիւնը որ կը տրուի սուրբ պատարագին ընդմէջէն:

Ան ոգեկոչումն է վերջին ընթրիքի յիշատակին, ուր Յիսուս ինքզինք մատուցեց առաքեալներուն՝ ըսելով ըստ Յովհաննէս աւետարանիչին թէ՝ «Ան որ չուտէ իմ մարմնէս եւ չիմէ իմ արիւնէս՝ չի կրնար յաւիտենական կեանք ժառանգել» Յովհաննոս 6.53

Յիսուս իր մարմինն ու արիւնը որպէս փրկութեան երաշխիք տուաւ մարդոց վերջին ընթրիքին, ուր ան հաստատեց մեղսաքաւիչ հաղորդութեան խորհուրդը: Սեղանէն առաւ հացը, օրհնեց, եւ աշակերտներուն տալով ըսաւ «առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին իմ՝ որ վասն ձեր եւ բազմաց բաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: Ապա գինիին բաժակը առաւ, օրհնեց, գոհացաւ, եւ աշակերտներուն տալով ըսաւ «Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ՝ նորոյ ուխտի, որ յաղաքս ձեր եւ բազմաց սեղանի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Աստուածորդին վերոյիշեալ բառերը արտասանելով յաւիտենական ուխտ մը կնքեց իր առաքեալներուն հետ, ուխտ մը որ պիտի իմաստաւորուէր իր խաչելութեան խորհուրդով եւ իր իսկ անձին պատարագումով: Քրիստոս աշխարհ եկած էր որպէս միջնորդ հաշտութեան՝ հօր Աստուծոյ եւ աղամական մեղքով այլասերած մարդկութեան միջեւ: Այս նուիրական առաքելութիւնը կ'իրագործուէր փրկագործութեան խորհուրդով: Յիսուս իր մարմինն ու արիւնը որպէս գրաւական կու տար մարդկութեան, ինչպէս Պօղոս առաքեալ հարազատօրէն մեկնաբանելով պիտի ըսէր.

«Միթե չէ՞ք գիտեր, որ ձեր մարմիններուն համար մասանաւոր զին վճարուած է, փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն մէջ» Ա Կորնթացիս 6.19

Ս. Պատարագի խորհուրդով՝ առաջին հերթին մենք կը յիշատակենք Աստուծոյ որդիին մարդեղութեան խորհուրդը. Քրիստոս մարդացաւ, որպէսզի մարդը վերստին բարձրանայ այն պատուանդանին, ուրկէ ինկած էր ան նախաձնողներու մեղանշումէն ետք: Այդ էր Աստուծոյ որդիին առաքելութիւնը եւ այդ առաքելութեան ամբողջացումը պիտի ըլլար, անոր փրկագործութեան խորհուրդը՝ Սուրբ Պատարագումը:

Պատարագը անարիւն զենուժն է Քրիստոսի, փրկագործութեան խորհուրդն է ան, որ կը կատարուի մեր մեղքերու բնաջնջման եւ մեր հոգիներու փրկութեան համար:



Խորհրդաւոր Ընթրիք

Պատարագ՝ զոհ, ընծայ, նուէր

Սուրբ Պատարագի խորհուրդով Քրիստոս որպէս Աստուածային գերազանց սիրոյ արտայայտութիւն ինքզինք կ'ընծայէ, կը զոհուի մեր փրկութեան համար: Ճշմարտօրէն Ս. Պատարագը Աստուծոյ սէրը ներկայացնող Աստուծոյ որդիին զոհաբերութեան խորհուրդն է ուր ամէն անգամ պատարագուող «Գառն Աստուծոյ» իր մարմինն ու արիւնը կու տայ մեղանշական բնութեամբ անկումի ենթակայ մարդուն, որպէս Աստուածային գերազանց սիրոյ արտայայտութիւն:

Ինչպէս վերջին ընթրիքի սեղանին վրայ հացն ու գինին Քրիստոսի օրհնութեամբ փոխակերպուեցան Փրկչին Մարմնոյն ու Արեան, նմանապէս ամէն Ս. Պատարագի խորհուրդին՝ Ս. Սեղան ընծայուող ՆՇԽԱԸ՛ն ու ԳԻՆԻ՛ն նուիրագործուելով ու սրբագործուելով գերահրաշօրէն կը փոխակերպուին եւ հաւատացեալներուն կ'ընծայուին որպէս մեղսաքաւիչ Ս. Հաղորդութիւն, որպէս Մարմին եւ Արիւն Քրիստոսի:

Յովհաննէս Ա. Մանդակունի (հաւանաբար 400-483/84 կամ 498/499), հայոց կաթողիկոս (ըստ որոշ աղբիւրներու՝ 471/472-483/84, ըստ ուրիշներու՝ 485-498/499), վարդապետ և հայրապետ, հետեւեալ բառերով կը ներկայացնէ Մեծ եւ Սքանչելի խորհուրդը հաւատացեալներուն:

«Այսուհետև որպէս լոկ հաց մի՛ նայիր անոր, եւ ոչ ալ որպէս գինի նկատի ունեցիր կամ ընդունիր զայն, որովհետև Ս. Խորհուրդին ահաւորութիւնը Թեպէտև անտեսանելի է, սակայն անոր զօրութիւնը իմանալի եւ զգալի:

Մենք ճշմարիտ հաւատքով Քրիստոսն է, որ կ'ընդունինք Ս. Սեղանին վրայ, Անոր է, որ կը մօտենանք, Ջայն կը տեսնենք, կը շօշափենք, կը համբուրենք, կը ճաշակենք՝ զայն ընդունելով մեր ներսիդին եւ կը դառնանք մարմինը, անդամներն ու որդիները Աստուծոյ»
Ճառք, էջ 168:

Յաջորդիւ պիտի ներկայացնենք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնն ու անոր բացատրութիւնը:

Նախ ըսենք, որ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ:

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում



Գօտի
ԺԸ դար, Կարս
Ս. Էջմիածնի Գանձատուն



Սուրբ սեղանի խաչ
Թ. դար սկիզբ, Ախալցխայ



Կանթեղներ
Ս. Էջմիածնի գանձատուն



Կ ա թ ո ղ ի կ ո ս ի ծ ի ս ա կ ա ն
հանդերձանքը
Ս. Էջմիածնի Մայր տաճարի
թանգարան

Համացանցէն Քաղուած

Եղեգի ծառը

Պարտիզպան մը ունէր եղեգի ծառերու խումբ մը իր պարտեզին մէջ։ Օր մը ան կեցաւ ամենաերկարին առջեւ ու ըսաւ «Քեզի պէտք ունիմ», եղեգի ծառը պատասխանեց «Պարտիզպան, զիս գործածէ ինչպէս որ կ'ուզես»։ Պարտիզպանը լրջանալով աւելցուց «Բայց քեզ գործածելու համար, պէտք է քեզ կտրեմ»։

Եղեգի ծառը զարմացաւ, վախցաւ ու հարցուց՝ «Զիս կտրե՞ս, ոչ, ես ամենագեղեցիկն եմ այս պարտեզին մէջ։ Զիս գործածէ ինչպէս որ կ'ուզես բայց կը խնդրեմ մի կտրեր զիս»։


Պարտիզպանը ըսաւ «Բայց եթէ չի կտրեմ քեզ, պիտի չկրնամ գործածել քեզ»։ Եղեգի ծառը լռութեամբ մտածեց, խոնարհեցուց գլուխը ու ըսաւ «Եթէ իրապէս միակ ձեւն է զիս գործածելու, ուրեմն կտրէ զիս»։

Պարտիզպանը կտրեց եղեգի ծառը, փրցուց անոր ճիւղերը ապա կէսէն, երկայնքին, բաժնեց երկուքի։

Մէջը փորելէ եւ պարպելէ ետք, հասցուց մինչեւ ջուրի աղբիւրը, եւ մէջէն ջուրը հոսեցնելով ջրեց իր պարտեզը։

Պարտեզը ծաղկեցաւ եւ դարձաւ պտղաբեր։

Եղեգի ծառը տուաւ իր կեանքը որպէսզի ուրիշներուն օգնէ։ Ամէն օր մեր շուրջը շատեր իրենց կեանքն ու ժամանակը կը տրամադրեն մեր լաւութեան համար, օրինակ մեր ծնողներն ու ուսուցիչները։



Կրօնի դասին մէջ սորվեցանք որ ամէն ինչի պատասխանը Յիսուսն է։

Ո՞րն է ճիշդ պատասխանը Հոկտեմբեր ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

կ'իրիկնանար, Արձակէ, գտնեն, ամայի,
ուտելիքը, հաց, ձուկ, բաւականաչափ

5. Ճանաչել զԻմաստութիւն եւ զԽրատ,
իմանալ զբանս հանճարոյ 6. դ. Յովհաննէս
7. ա. 1 8. Մաքսապետ 9. 24 10. Ոսկեբերան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. ք. 405 2. գ. Աստուածաշունչը, 3. Մեսրոպ
Մաշտոց 4. Վաղարշապատ 5. դ. Ս. Ներսէս
Շնորհալի 6. դ. Ս. Գրիգոր Նարեկացի 7. գ.
Ս. Ղուկաս 8. գ. 24 9. ա. 5 հաց եւ 2 ձուկ 10.
գ. 12

Երկրորդականի անկիւն

1. Յիսուսի 2. Ադամի 3. Եօթնասնից 4.
Քրիստոս 5. ա. Ս. Մեսրոպ Մաշտոց ք. Ս.
Եղիշէ Պատմիչ գ. Ս. Դաւիթ Անյաղթ դ. Ս.
Մովսէս Քերթոզ ե. Ս. Գրիգոր Նարեկացի.
գ. Ս. Ներսէս Շնորհալի 6. Ս. Մեսրոպ
Մաշտոց, Ս. Եղիշէ Պատմիչ 7. Ս. Եղիշէ
Պատմիչ 8. Ս. Գրիգոր Նարեկացի. 9. Ս.
Ներսէս Շնորհալի 10. Ս. Դաւիթ Անյաղթ

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. Վանայ, Գագիկ Արծրունի, Մանուէլ
2. Գմբէթին վրայ խաչ չկայ 3.
Եօթնասուներկուքին 4. դ. Թորոս Ռոսլին

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

ե	ը	դ	գ	թ	զ	է	ա	բ			ե		բ	թ		է			
զ	թ	բ	ը	է	ա	ե	դ	զ						զ	ը			ա	
զ	է	ա	դ	բ	ե	ը	թ	զ					դ		ա	է			
բ	զ	զ	է	ա	ը	թ	ե	դ				բ		է				թ	
դ	ե	ը	բ	զ	թ	ա	զ	ե			զ	է	ա					դ	
է	ա	թ	զ	ե	դ	զ	բ	ը			ը		զ					բ	
ա	բ	զ	թ	ը	է	դ	զ	ե						ա	դ	թ	է		
թ	զ	է	ե	դ	բ	զ	ը	ա					ա	դ	թ	է			
ը	դ	ե	ա	զ	զ	բ	է	թ			դ	է	է		զ				

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը



Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Յիսուսի Այլակերպութիւնը Մատթէոս 17:11-19

Լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք, ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր ...

Կտորները կարգով յարմարցուր եւ գտիր թէ ի՞նչ կ'ըսէր ձայնը



Յիսուս եւ Զակքէոս (Ղուկաս 19:1-10)

1 - Զակքէոս

ա - դրամ փոխ կուտար
բ - մաքսապետ էր
գ - պարտք կը հաւաքէր

2 - Յիսուս Երիքով մտաւ

ա - կը ծրագրէր հոն գիշերել
բ - կ'անցնէր քաղաքէն
գ - Զակքէոսը կ'ուզէր տեսնել

3 - Զակքէոս անունով մարդ մը կ'ապրէր

ա - Երուսաղէմի մէջ
բ - Կափառնաուփին մէջ
գ - Երիքովի մէջ

4 - Երբ Յիսուս խօսեցաւ

ա - Զակքէոս զինք իր տունը
հրաւիրեց
բ - ծառէն վար ինկաւ
գ - փախաւ գնաց

5 - Յիսուս խօսեցաւ Զակքէոսին երբ

ա - ձայն մը լսեց
բ - Զակքէոս զինքը կանչեց
գ - վեր նայեցաւ եւ զինքը տեսաւ
ծառին վրայ

6 - Զակքէոս կ'ուզէր տեսնել թէ ով է Յիսուսը, ուրեմն

ա - Իր տան տանիքը բարձրացաւ
բ - ամբոխը հրեց առջեւ անցաւ
գ - վազեց ժանտաթզենիի մը վրայ

7 - Զակքէոս ըսաւ որ

ա - կ'ուզէ Յիսուսի աշակերտ
ըլլալ
բ - ունեցածը բոլոր պիտի բաժնէ եւ
աղքատ ապրի
գ - ունեցածին կէսը աղքատներուն
պիտի տայ

եղաւ

8 - Յիսուս ըսաւ Զակքէոսի

ա - շատ անիրաւ ես
բ - այլեւս մաքսապետ չես
գ - այսօր այս տունը փրկուեցաւ



Յիսուս՝ Ճշմարիտ Որթատունկը Յովհաննէս 15:1-17

Որդատունկը իբրեւ զարդ չենք տնկեր: Այլ իր պտուղին համար:
Մշակը յստակ նպատակ մը ունի: Ճիւղերը պէտք է պտղատու ըլլան:
Պտուղին լաւագոյն արտայայտութիւնը Յիսուս ըսաւ (հ. 17) Սիրեցէք իրար:

Պարտիզպանը կամ մշակը կը յօտէ իր պտղատու ծառերը, որպէսզի անոնք աւելի պտուղ տան: Մենք ալ լաւ է որ մեր կեանքի որոշ երեւոյթները յօտենք մանաւանդ այն բաժինները որոնք ուրախութիւն չեն պատճառէր Յիսուսի:

Օրինակ՝ անձնասիրութիւն, հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ատելութիւն, անպարկեշտութիւն: Պահենք միայն այն յատկութիւնները որոնք Յիսուս մեզի կը սորվեցնէ: Սէր, ուրախութիւն, հնազանդութիւն եւ հեգութիւն:

Այս ձեւով մեր կեանքի գէշը կը յօտուի եւ մենք կ'ըլլանք պտղատու լաւ ծառեր: Մեր աղօթքները կը լսուին եւ մենք կը սիրենք զիրար:

Ներկէ փ, թ, ֆ գիրերը եւ գրէ ոսկեհամարը

----- , -----
----- :

ւ	փ	է	ծ	թ	ա	ֆ	գ	ն	յ	փ	ն	թ	ս	ֆ	է	փ
թ	ր	ը	ֆ	ա	յ	փ	ն	ս	թ	է	ֆ	ր	ն	փ	թ	է
ն	ֆ	փ	ր	ն	թ	վ	ֆ	ւ	ա	փ	ր	դ	թ	ի	ֆ	ն
փ	թ	ք	ֆ	փ	գ	թ	ի	ֆ	ն	ք	փ	կ	թ	ը	գ	ֆ
ն	հ	փ	է	թ	ֆ	ի	ր	փ	թ	բ	ա	ր	ֆ	է	փ	կ
թ	ա	ւ	փ	ն	է	ր	ֆ	ն	ւ	ն	հ	ա	ւ	ա	թ	ր

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամէն մարդ կերաւ այնքան որ ուզեց: Եւ ինչ որ աւելցաւ, տասներկու կողով լեցուց:

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.14-17

հինգ, յիսունական, տասներկու, աչքերը, կշտացան, ձուկը, հացը, կատարեցին

Որովհետեւ շուրջ ----- հազար մարդ կար: Յիսուս աշակերտներուն ըսաւ.

- Նստեցուցէք զանոնք ----- հոգինոց խումբերով:
Անոնք ----- հրահանգը եւ նստեցուցին բոլորն ալ: Ապա Յիսուս առաւ հինգ ----- եւ երկու ----- , ----- երկինք բարձրացուց, օրհնեց, կտրեց եւ աշակերտներուն տուաւ որ բաժնեն ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու ----- , եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ ----- սակառ լեցուցին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք դ. 7

Նոյեմբեր 20ին:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
 Հայրապետ
 բ. Ս. Գեորգ
 գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոս
 դ. Բոլոր Սուրբերուն

6.- Պատարագ ի՞նչ կը նշանակէ:

ա. զոհ
 բ. ընծայ
 գ. նուէր
 դ. բոլոր վերել յիշուածները

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
 Ս. Գաբրիէլ եւ Ս. Միքայէլ
 Հրեշտակապետերուն տօնը:

ա. Նոյեմբեր 6
 բ. Նոյեմբեր 13
 գ. Նոյեմբեր 20
 դ. Նոյեմբեր 27

7.- Ըսէ՛ մէկ բառով: Ոսկի Բերան
 Ունեցող:

Ո-----ն

8.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:

Մ-----

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ
 Առաքեալներու Անդրէասի եւ
 Փիլիպպոսի տօնը:

ա. Նոյեմբեր 6
 բ. Նոյեմբեր 13
 գ. Նոյեմբեր 20
 դ. Նոյեմբեր 27

9.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:

Գ-----

4.- Ս. Կոյս Մարիամ քանի՞
 տարեկանէն սկսեալ սկսաւ
 Տաճարին մէջ ապրիլ:

ա. 6
 բ. 13
 գ. 20
 դ. 7

10.- Ի՞նչ էր Պետրոս Առաքեալին
 եղբօրը անունը:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
 Հայրապետ
 բ. Ս. Փիլիպպոս
 գ. Ս. Անդրէաս
 դ. Ս. Գրիգոր

5.- Յիսնակը, քանի՞ օրերու միջոց մըն
 է:

ա. 6
 բ. 13
 գ. 50

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Նոյեմբեր 13ին:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետ

բ. Ս. Գեորգ

գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոս

դ. Բոլոր Սուրբերուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.
Կոյսին Տաճար ընծայումը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 13

գ. Նոյեմբեր 21

դ. Նոյեմբեր 27

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ
Գրիգոր Սբանչելագործի տօնը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 13

գ. Նոյեմբեր 20

դ. Նոյեմբեր 27

4.- Այս տարի ե՞րբ տօնեցինք Ս.
Յովհան Ոսկեբերանի տօնը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 13

գ. Հոկտեմբեր 20

դ. Հոկտեմբեր 30

5.- Յիսնակի Բարեկենդանը
Նոյեմբերի ո՞ր օրուան ամենէն մօտ
Կիրակիին կը հանդիպի:

ա. 6

բ. 16

գ. 18

դ. 31

6.- Պատարագ ի՞նչ կը նշանակէ:

-----, -----, -----

7.- Ո՞վ էր Քրիստոնէութեան
Նախավկան:

Ս _____ ս

8.- Աստուածաշունչին մէջ ո՞ւր կը
կարդանք:

«Առաւել Աստուծո՛յ հնազանդիլ
պէտք է քան թէ մարդոց:»

Գ-----ք Ա-----ց _._

9.- Ո՞վ էր Սողոսին ուսուցիչը:

Գ-----

10.- Առաքեալները քանի՞ հատ
սարկաւագ ընտրեցին:

ա. 3

բ. 7

գ. 9

դ. 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Նոյեմբեր 21ին: «2 պատասխան»

- ա. Ս. Կոյսի Տաճար ընծայում
- բ. Բարեկենդան Յիսնակաց Պահոց
- գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոս
- դ. Բոլոր Սուրբերուն

2.- Յիսուսի ո՞ր Առաքելը X ձեռով
խաչի մահով մահացաւ::

- ա. Մատթէոս
- բ. Թադէոս
- գ. Բարթողոմէոս
- դ. Անդրէաս

3.- Թուէ՛ Ընդհանրական Եկեղեցւոյ
12 վարդապետներէն մէկը որուն
յիշատակը տարին 2 անգամ կը
տօնենք:

- ա. Ս. Յովհան Ոսկերեքան
- բ. Ս. Գրիգոր Սքանչելագործ
- գ. Ս. Անդրէաս
- դ. Ս. Փիլիպպոս

4.- Մեր Եկեղեցւոյ 7 խորհուրդներէն
ո՞ր մէկը կը տրուի Ս. Պատարագին
ընդմէջէն:

- ա. Մկրտութիւն
- բ. Դրոշմ
- գ. Ապաշխարութիւն
- դ. Հաղորդութիւն

5.- Յիսուս մեր փրկութեան համար
ի՞նչ երաշխիք տուաւ տուաւ:

Իր ----- ու -----ը

6.- Յիսուս աշխարհ եկած էր որպէս
միջնորդ որո՞նց միջեւ:

Հօր ----- եւ աղամական -----
այլասերած մարդկութեան միջեւ:

7.- Ս. Հաղորդութեան ընթացքին, Ս.
Սեդան ընծայուող ո՞ր երկու նիւթերը
կը փոխակերպուին Քրիստոսի
Մարմնին ու Արեան:

----- ու -----

8.- Սուրբ Պատարագը կը բաղկանայ
4 մասերէ: Թուէ՛ զանոնք

- ա.
- բ.
- գ.
- դ.

9.- Ո՞ր Աւետարանին մէջ Յիսուսի
այլակերպութեան մասին չենք
կարդար:

- ա. Մատթէոս
- բ. Մարկոս
- գ. Դուկաս
- դ. Յովհաննէս

10.- Գտիր 4 Աւետարաններէն միակը
որ կը ներկայացնէ Յիսուսը որպէս
Ճշմարիտ Որթատունկը:

- ա. Մատթէոս
- բ. Մարկոս
- գ. Դուկաս
- դ. Յովհաննէս

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG-ը 10 տարեկան

Այս թիւով.....

Դեկտեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 2-4

Տօն Ս. Առաքեալներու
Թաղէոսի եւ Բարթողոմէոսի,
Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ
Ս. Ստեփանոս նախավկայ
Ս. Աբգար
Ա. Քրիստոնէայ թագաւոր
Որոտման Որդիք
Ս. Նիկողայոս Հայրապետ

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Ս.
Եկեղեցւոյ պատարագին Էջ 5-7
Ա. Պատրաստութիւն պատարագիչ
քահանային, ընծաներուն
Բուրվառ, Նշխար, Մաս,
Մաղզմայ, Սկիի

Համացանցէն քաղուած Էջ 8

Եզակի Գիրքեր Էջ 9

Անսակարկ սէր եւ ներողամտութիւն Էջ 10

Բարի եւ քաջ հովիւր Էջ 11

Նոր Պատուիրանը Էջ 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 13-16

Դեկտեմբեր 2010 (ԺԸ տարի թիւ 4)



Յ...Յիսուս, Ս. Յակոբ

Խաչքարի հեղինակ՝
Ժողովրդական վարպետ,
ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամսուան Համարը

«Որովհետեւ Մարդու Որդին եկաւ
կորսուածը փնտռելու եւ փրկելու:»

Ղուկասի Աւետարան 19.10

Դեկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 4	Սբ. Թադէոս եւ Բարթողոմէոս
Շբթ. 11	Սբ. Նիկողայոս Սքանչելագործ հայրապետ
Շբթ. 18	Սբ. Յակոբ Մծբնայ հայրապետ եւ Մարուգէ ճգնաւոր
Գշ. 21	Սբ. Աբգար Թագաւոր
Եշ. 23	Սբ. Դաւիթ մարգարէ եւ Ս. Յակոբ Տեառնեղբայր Առաքեալ
Շբթ. 25	Սբ. Ստեփանոս Նախասարկաւագ եւ առաջին մարտիրոս
Բշ. 27	Սբ. Պետրոս, Սբ. Պօղոս
Գշ. 28	Սրբոց Որոտման Որդւոց Յակոբոս եւ Յովհաննէս Առաքեալներու



**Տօն Սուրբ Առաքեալներու
Թադէոսի եւ Բարթողոմէոսի**
Հայաստանի մէջ Քրիստոսի
աւետարանին քարոզութիւնը
առաջին անգամ մուտք գործեց
Ս. Թադէոս առաքեալի միջոցաւ:
Աստուածաշունչին մէջ ան նաեւ կը
կոչուի Դեբէոս եւ Յուդա: Յիսուսի
Համբարձումէն ետք Ս. Թադէոս եկաւ
Եդեսիա եւ ծանր հիւանդութենէն
բժշկեց Աբգար թագաւորը: Ան մեր
երկիրը բերաւ նաեւ Ս. Գեղարդը
որ գործածուած էր Յիսուսի կողմ
խոցելու խաչափայտին վրայ:
Աբգարի նամակով Ս. Թադէոս
եկաւ Արտաշ գաւառը՝ Սանատրուկ
թագաւորին մօտ եւ դարձի բերաւ
թագաւորն ու Սանդուխտ կոյսը:
Սակայն, Աբգարի մահէն ետք
Սանատրուկ ուրացաւ իր հաւատքը
եւ ծանր հալածանքներ սկսաւ



քրիստոնեաներուն դէմ: Նախ նահատակուեցաւ թագաւորին դուստրը, ապա նաեւ Ս.
Թադէոս առաքեալը 46 թուին: Ս. Թադէի վանքը ներկայիս կը գտնուի Իրանի մէջ:

Բարթողոմէոս Առաքեալ կը կոչուի նաեւ Նաթանայել: Ան Հնդկաստանէն
վերադարձին Գողթան գաւառէն սկսաւ իր քարոզութիւնը Հայաստանի մէջ: Ըստ
աւանդութեան, ան Հայաստան բերաւ Տիրամօր սրբապատկերը եւ Անահիտ դիցուհիի
մեհեանին տեղ կառուցեց Ս. Աստուածածին եկեղեցին, ինչպէս նաեւ կուսանոց: Ըստ
աւանդութեան Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալները իրարու կը հանդիպին
Արտաշատի կամուրջին վրայ:

Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

Ե՞րբ կը տօնենք

Սուրբին յիշատակի օր կանուխէն հաստատուած է Հայ Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին մէջ եւ կը տօնուի ամէն տարի Յիսնակի երրորդ Կիրակի օրուան յաջորդող շաբաթ օրը: Այս կը նշանակէ թէ Սուրբ Յակոբին տօնը կը յիշատակենք Դեկտեմբեր 12-18 օրերուն մէջ հանդիպող Շաբաթ օրը:



Սուրբ Յակոբի կեանքը

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի հօրաքրոջ որդին եւ Պարթեւական տոհմէն: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ: Ս. Յակոբ որոշ ժամանակ ապրեր էր Պարսկաստանի արքունիքին մէջ, սակայն հետագային կ'ընտրէ ճգնաւորի կեանքը եւ Ս. Հոգիին ներգործութեամբ կ'ուղուի Մծբին քաղաքի վանքերէն մէկը՝ մարուգէ ճգնաւորին մօտ: Անմասնակցած է Նիկիոյ մէջ կայացած տիեզերական ժողովին 325 թուականին: Մծբինի աթոռին համար ձեռնադրուած է եպիսկոպոս, որ գուշակուած էր մարուգէ ճգնաւորին կողմէ: Հայ մատենագրութեան մէջ յայտնի են իր 22 ճառերէ բաղկացած «Զգօն» գիրքը: Ս. Գրիգոր Նարեկացին հիացող մը եղած է Յակոբ Մծբնայ Հայրապետին, որուն նուիրած է իր ներբողական գրութիւններէն մէկը:

Սուրբ Յակոբին նուիրուած «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» անունով գեղեցիկ շարական մը գրուած է: Այս շարականը հաւանաբար գրուած է այն դէպքին առիթով ուր կը պատմուի թէ պարսից Շապուհ Բ. թագաւորը աշխարհաճաւալ իր արշաւանքներուն ընթացքին կը հասնի Մծբին որ կը պաշարէ 70 օրեր շարունակ: Շնորհիւ Ս. Յակոբի քաղաքին ներսէն կազմակերպած միջոցառումներուն, ան անկարող կ'ըլլայ գրաւելու Մծբինը: Այդ յաղթանակին առիթով Ս. Ներսէս Շնորհալի կը ձօնէ իր այդ շարականը:

Ս. Աբգար Ա. Քրիստոնէայ թագաւոր

Ս. Աբգար, ըստ աւանդութեան՝ Ա. դարու անդրանիկ քրիստոնէայ թագաւորը, պարթեւ Արշակունի Արշամի որդին էր: Իր թագաւորութեան մայրաքաղաքը Եդեսիան էր: Ըստ Մովսէս Խորենացիի, ան հայոց թագաւորն էր: Մովսէս Խորենացին նաեւ կը գրէ թէ Աբգար թագաւոր լսեր է Յիսուսի հրաշքներուն մասին եւ հաւատացեր է որ Յիսուս ճշմարիտ Աստուծոյ որդին է, եւ նամակ ուղարկած է Յիսուսի որ գայ եւ զինք բժշկէ բոլորտութենէ: Յիսուս կը խոստանայ զրկել իր աշակերտներէն մէկը որ բժշկէ զինք եւ կեանք շնորհէ իրեն եւ իր հետ եղողներուն: Յիսուսի համբարձումէն ետք, Ս. Թադէոս Առաքեալ կ'ուղուի դէպի Եդեսիա եւ կը բժշկէ Աբգար թագաւորը եւ իր հետ եղողները: Ասկէ ետք Ս. Թադէոս Առաքեալ կ'ուղուի Աբգար թագաւորի քեռիին որդիին՝ Սանատրուկ թագաւորի պալատը: Մեր եկեղեցին Ս. Աբգար թագաւորի տօնը կը յիշատակէ ընդհանրապէս Յիսնակի Ե. Կիրակիին նախորդող Շաբաթ օրը:



Աբգար Թագաւոր Երեւան, ձեռ. 7361 էջ 213ա, Յայտնաւորք XVդ., Տաթեւ



Ս. Ստեփանոս Նախավկայ, անդրանիկ վկան է որ իր արիւնը թափեց՝ Յիսուս Քրիստոսը Աստուծոյ որդին վկայելով: Յիսուսի 72 աշակերտներէն մէկը որ ուրիշ 6 հոգիներու հետ նախնական եկեղեցին, (Պետրոս առաքեալի առաջնորդութեամբ), կարգեց եկեղեցւոյ սեղանի սպասաւոր, այսինքն սարկաւագ: Նոր Կտակարանի «Առաքեալներու Գործերը» գրքին մէջի 6-րդ գլխուն մէջ կը կարդանք 7-ը սարկաւագներուն նշանակուելու եւ Ստեփանոսի ձեռնադրութեան պատմութիւնը, իսկ 7-րդ գլխուն մէջ կը կարդանք իր վկայութիւնը եւ քարկոծումին մանրամասնութիւնները: Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօդոսն էր որ հետագային եղաւ Պօղոս Առաքեալ: Մեր Եկեղեցին սուրբին օրը կը նշէ Դեկտեմբեր 25-ին, կամ 26-ին եթէ 25-ը Կիրակի կամ պահքի օր ըլլայ:

«Ս. Ստեփանոս Նախավկայ» մանրանկար 1450-ի Արծկէի Մինասի ծաղկած ճաշոցէն (Մատենադարան ձեռագիր թիւ 982)

Որոտման Որդիք

Մարկոսի Աւետարանին 3.16-19 ին մէջ կը գտնենք Յիսուսի 12 առաքեալներուն ցանկը՝ Պետրոս, Ջեբեդէոսի որդիները՝ Յակոբոսն ու եղբայրը՝ Յովհաննէսը, որոնք Բոաներգես, այսինքն Որոտացոյ Մարդիկ կոչեց, Անդրեասը, Փիլիպպոսը, Բարթողոմէոսը, մաքսաւոր մատթէոսը, Թոմասը, Ալփէոսի որդին Յակոբոսը, Թադէոսը, Նախանձայոյց Միմոնը, եւ Իսկարովտիացի Յուդան, որ զինք մատնեց:


Յովհաննէս Աւետարանիչ ձկնորս էր: Մինչեւ Յիսուսի հետեւիլը, կը հետեւէր Յովհաննէս Մկրտիչին: Ան Յիսուսի ամենասիրելի առաքեալն էր եւ հետեւեցաւ իրեն մինչեւ Գողգոթա: Խաչին վրայէն Յիսուս իրեն յանձնեց իր մօր հոգատարութիւնը: Իր եղբօր Յակոբոսի եւ Պետրոսի հետ ան դարձաւ Երուսաղէմի եկեղեցւոյ սիւներէն մէկը: Հետագային, իր գործունէութեան վայրը հանդիսացաւ Եփեսոսի եկեղեցին: Տիրոջ կամքով, Յովհաննէս Առաքեալ միւս առաքեալներէն աւելի ապրեցաւ եւ վախճանեցաւ 94 տարեկանին: Երբ արդէն շատ ծեր էր, իր քարոզներու ընթացքին շարունակ կը կրկնէր. «Ձաւակնէ րս, սիրեցէ՛ք զիրար»: Երբ իրեն կը հարցնէին թէ ինչո՞ւ յաճախ այդ բառերը կ'ըսէր. «Այս Յիսուսի պատուիրանն է, եթէ սէր ունենաք, ուրիշ ոեւէ բանի պէտք չէք ունենար»: Ան գրած է Աւետարան, երեք ընդհանրական նամակներ, եւ յայտնութեան գիրքը:

Յակոբոսն ալ ձկնորս է: Յակոբոսը շատ եռանդուն էր, գործունէայ, մեծ սէր եւ նախանձախնդրութիւն ունէր Յիսուսի հանդէպ եւ դարձաւ Հրեաներու ատելութեան զոհը: Ան գլխատուեցաւ Հերովդէս թագաւորի կողմէ 44 թուին, ըլլալով առաջին նահատակը առաքեալներու մէջ: Հաւանաբար Քրիստոսի հանդէպ իրենց բոցավառ սիրոյ եւ նախանձախնդրութեան պատճառով կոչուեցան Որոտման Որդիք:

Սուրբ Նիկողայոս Սքանչելագործ հայրապետը ծնած է Փոքր

Ասիայի Լիկիա գավառի Բաթարա քաղաքին մէջ (ներկայիս Անթալիոյ մօտակայքը): Փոքր հասակէն կը կորսնցնէ մեծահարուստ և բարեպաշտ ծնողքը եւ կը մեծնայ իր քեռիին՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքին տակ: Աւետարանական պատգամը՝ «Ծախէ՛ ունեցուածքդ և բաժնէ՛ աղքատներուն» (հմմտ. Մտթ. 19.21), իր կեանքի նշանաբանը կը դարձնէ իր խնամքը տարածելով աղքատներու, հիւանդներու, բանտարկեալներու եւ որբերու վրայ: Ժողովուրդի կամքով կը դառնայ Զմիւռնիոյ եպիսկոպոսը: Հալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադարիր ամէն տեղ Աւետարանը քարոզել: Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը: Կը մասնակցի 325 թ. Նիկիոյ Տիեզերական ժողովին: Կը մահանայ 326 թ.: Ընդհանրական Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի է Santa Claus անունով:

Կը շարունակենք ներկայացնել Բերիոյ թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ Գերշ. Տ. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրութիւն Ս. պատարագի» բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկը:



Ինչպէս անցեալ անգամ նշեցինք, Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ:

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ Աղօթքին եւ Մաղթանքին կը յաջորդէ Ս. Պատարագին առաջին բաժինը:

Այս բաժինը կը սկսի «Խորհուրդ Խորին» շարականով: Պատարագիչ քահանան կը գտնուի աւանդատուն զգեստաւորուելու: Նախքան զգեստաւորուիլը ան զոջման աղօթք կը կարդայ եւ իր մեղքերուն թողութիւն կը ստանայ այլ եկեղեցականէ մը: Ապա կանոնական աղօթքի ընթերցմամբ, զգեստաւորուելէ ետք, մոմակալներուն եւ բուրվառակիքին առաջնորդութեամբ եկեղեցի կը մտնէ:

Սուրբ Խորանին առջև ձեռքերը կը լուայ, հրապարակաւ անգամ մը եւս իր մեղքերը կը խոստովանի Աստուծոյ, Սուրբ Աստուածածնի, բոլոր սուրբերուն եւ ներկայ ժողովուրդին առջեւ, խնդրելով որ աղօթեն իրեն համար եւ խնդրամատոյց ըլլան Աստուծոյ՝ իր մեղքերու թողութեան ի խնդիր: Քահանայէն թողութիւն ստանալէն ետք, մեղք կապանքներէն ձերբազատուած՝ ան խորան կը բարձրանայ, կ'արտասանէ տաճարի աղօթքը, կ'երկրպագէ սուրբ սեղանին եւ ապա վարագոյրը կը գոցուի:

ԲՈՒՐՎԱՌ

Կիսագունդ պարունակ մըն է, որ որպէս կրակարան կը խորհրդանշէ հաւատացեալներու սիրտն ու հոգին: Կրակարանը կապուած է երեք շղթաներով որոնք վերէն իրար միացած են կը խորհրդանշեն Ս. Երրորդութիւնը: Շղթաներուն վրայ կը գտնուին չորսական բռժոժներ, կը խորհրդանշեն տասներկու առաքեալները որոնք իրենց հնչեղութեամբ Քրիստոսի վարդապետութիւնը տարածեցին աշխարհին: Կրակարանին վրայ խունկի աւելցումով արձակուած ծուխը հաւատացեալներու աղօթքները կը խորհրդանշէ, որոնք երկինք կը բարձրանան առ Աստուած: Հին կտակարանի համաձայն հաւատացեալներու աղաչանքն է Աստուծոյ, որ իր աղօթքները ընդունի:

Բուրվառ ԺԸ դար, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի գանձատուն



2. Պատրաստութիւն ընծաներուն

Վարագոյրը գոցուելէն ետք, երբ դպիրներ յաւուր պատշաճի մեղեդի կ'երգեն, Աւագ Սարկաւազը Ս. Սեղան կը բերէ ընծաները՝ ՆՇԽԱՐՆ ու ԳԻՆԻՆ: Պատարագիչ քահանան նախ կը կարդայ Ս. Նարեկացիէն երկու աղօթքներ, ապա ՆՇԽԱՐՆ երկիրւոյն տօնով կ'որհնէ եւ զայն մաղգմային վրայ դնելով կ'ըսէ

«Այս յիշատակ է մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ բազմելով կը հանգչի աննիւթական գահին վրայ, Ան որ յանձն առաւ խաչուիլ մարդկութեան համար, օրհնեցէ ք, գովեցէ ք եւ փառաւորեցէ ք զայն յաւիտեան»:

Ապա գինին կը լեցնէ Սկիհին մէջ, կ'որհնէ եւ կ'ըսէ

«Փրկագործ տնօրէնութեան յիշատակին համար, մեր Տէր Աստուծոյ եւ մեր փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի, որուն կողէն աղբերացող արեամբ նորոգուեցան մարդիկ եւ անմահութիւն զգեցան, օրհնեցէ ք, գովեցէ ք եւ փառաւորեցէ ք զայն յաւիտեան»:

Պատարագիչ քահանան պատրաստելէ ետք ընծաները, կ'որհնէ, կը խնկարկէ, եւ կը հայցէ Ս. Հոգւոյ ներգործութիւնը: Կ'աղօթէ եւ կը խնդրէ նաեւ Ս. Հոգիէն որ իր շնորհքներով ու պարգէններով զարդարէ բոլոր այն հաւատացեալները, որոնք մասնակից պիտի դառնան Ս. Պատարագին:

Աւագ սարկաւազը Սկիհը կը տեղաւորէ խորհրդարանին մէջ: Վարագոյրը կը բացուի:

Ի յիշատակ Քրիստոսի մարդեղութեան՝ երկինքէն երկիր խոնարհելուն եւ մարդոց մէջ շրջագայելուն, պատարագիչ քահանան խորանի աջակողմեան աստիճաններէն վար կ'իջնէ բուրվառը ձեռքին, կը խնկարկէ, թափօր կը դառնայ եկեղեցւոյ մէջ, կ'որհնէ ժողովուրդը եւ ձախակողմեան աստիճաններէն դարձեալ կը բարձրանայ խորան, իր հետ Ս. Սեղան բարձրացնելով հաւատացեալ ժողովուրդին աղօթքն ու աղերսանքը պատարագուող Աստուածորդոյն:

Թափօրի խնկարկութեան ատեն, խաչակնքելով, պատարագիչին ըսել:
 - Յիշեցիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:
 Պատարագիչը կը պատասխանէ.
 - Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

ՆՇԽԱՐ

Մասն ու նշխարը եկեղեցւոյ սպասաւորներու կողմէ կը պատրաստուին սպիտակ, մաքուր եւ անխմոր ալիւրով: Նշխարը կ'ըլլայ կլոր ու տափակ որ կը կրէ Յարուցեալ Քրիստոսի պատկերը, մինչ մասը բարակ ու կլորակ է երկաթի վրայ եփուած: Տնօրինէքի եւ այլ առիթներու տրուած նշխարները քահանայէն օրհնուած են: Համաձայն հին բարեպաշտական սովորութեանց, հաւատացեալները նշխար մը կը կրէին իրենց վրայ ապահով ճամբորդութեան համար, հիւանդութեան պարագային եւ մանաւանդ պահպանուելու համար սատանայական որոգայթներէ:



ՄԱՍ

Եկեղեցւոյ մէջ մաս բաժնելը հնաւանդ սովորութիւն է: Մաս կը նշանակէ օրհնուած բարակ բաղարջ հացի կտոր, որ պատարագի աւարտին կը բաժնուի հաւատացեալ ժողովուրդին պահելու համար նախնական եկեղեցւոյ սիրոյ ճաշի յիշատակը: Հաւատացեալներ մասը կը ստանան իրենց աջ ձեռքի երեսին վրայ եւ համբուրելէ ետք բերանին կը դնեն: Մասը խորհրդանշիչ է, փշրանք Ս. Սեղանի օրհնութիւններէն, անոր համար մաս բաշխողը կ'ըսէ,

- սա եղիցի քեզ մաս եւ բաժին ի Ս. Պատարագի իսկ ստացողը կը պատասխանէ
- բաժին իմ եղիցի ի Տէր յաւիտեան:

Անոնք որ հաղորդուած են պատարագի ընթացքին՝ մաս առնելու չեն:

ՄԱՂՁՄԱՅ

Տափակ պնակ որ ՍԿԻՀին հետ միասին կը գործածուի Ս. հաղորդութիւն պատրաստելու համար: Մաղզման կը ծառայէ նուիրական ՆՇԽԱՐ վրան դնելու, թէ՛ նուիրագործութենէ առաջ եւ թէ՛ ետքը: Մեծութիւնը սկիհին համեմատութեամբ է: Մեր եկեղեցւոյ մաղզմաները պէտք է մէջտեղը աւելի խորունկ ըլլան, որպէսզի սրբագործութենէ ետք, սկիհի ծածկոցը վրան դրուած ատեն, անմիջապէս սրբագործեալ մարմինին հետ չշփուի:



ՍԿԻՀ

Նախապէս ընդհանուր անունն էր բաժակի, եւ այժմ կը գործածուի յատկապէս Ս. Պատարագի բաժակը բացատրելու համար: ՍԿԻՀը ընդհանրապէս դուրսէն արծաթեայ է, իսկ ներսէն ոսկեգօծուած: Ձեւաւորումը ու զարդերը կը տարբերին: Հին վանքերու մէջ շատ ընդարձակ ՍԿԻՀներ կան, որոնք մէջ կրնայ թաթխուիլ հազարաւոր ուխտաւորներու հաղորդութեան բաւելու չափ մեծ նշխար մը:

Համացանցէն Քաղուած

Աստուծոյ ուղղուած նամակներ՝

* Սիրելի Աստուած պապա, եթէ կիրակի օր ինծի տեսնես եկեղեցին, նոր կօշիկներս կը ցուցնեմ քեզի:

* Սիրելի Աստուած պապա, վստահ եմ որ շատ դժուար է քեզի համար աշխարհի բոլոր մարդիկը սիրել: Մեր ընտանիքը 4 հոգի է եւ ես չեմ յաջողիր բոլորը սիրել:

* Սիրելի Աստուած պապա, դպրոցը մեզի բացատրեցին թէ դուն ինչ կ'ընես, բայց ո՞վ տեղդ կ'առնէ երբ արձակուրդի երթաս:

* Սիրելի Աստուած պապա, իրաւ դուն աներեւոյթ ես թէ միայն խաղ կ'ընես մեր վրայ:

* Սիրելի Աստուած պապա, շնորհակալ եմ փոքրիկ աղբարիկիս համար, բայց ես աղօթեցի որ շունիկ մը ունենամ:

* Սիրելի Աստուած պապա, ինչո՞ւ կիրակնօրեան կիրակի օրերն է: Կը կարծէի որ կիրակի օրը հանգիստի օր է:

* Սիրելի Աստուած պապա, իմ մասիս մի մտահոգուիր, ճամբան չանցած աջ եւ ձախ կը նայիմ:

* Սիրելի Աստուած պապա, դպրոցը սորվեցանք որ Թոմաս Էտիսոնը լոյսը գտաւ, բայց Կիրակնօրեայի մէջ կ'ըսեն որ դուն ստեղծեցիր: Վստահ եմ Թոմասը քու գաղափարդ գողցաւ:

Նոյեան տապանին
մէջ



Երկու մրջիւ՞ն:

Միայն երկու՞ մրջիւն ունիք: Տիկինս եւ ես օրական 100,000 հատէն աւելի կ'ուտենք:

Անսակարկ սեր եւ ներողամտութիւն

Յիսուս իր առաքելութեան ընթացքին, ժողովուրդին սորվեցնելու համար Աստուծոյ սիրոյ եւ ներողամտութեան մասին յաճախ օգտագործեց ջուրը: Աւետարանի հետեւեալ հատուածները կարդայ եւ տես թէ Յիսուսի ըրածները ինչ ձեւերով ցոյց կուտան իր ըսածները:

Գծիկներով միացուր երեք սիւնակները ճիշդ կերպով:

Յովհաննէս 2 : 1-11	Յիսուս Աստուծոյ ոյժը ցոյց տուաւ հանդարտեցնելով փոթորկոտ լիճը երբ աշակերտները շատ վախցած էին:	Յիսուս կը հրաւիրէ բոլորս բաժնելու ուրիշներու հետ իր սիրոյ եւ ներողամտութեան յուրը:
Մարկոս 4 : 35-41	Յիսուս ըսաւ կնոջ ջրհորին քով «Կենսատու ջուր կրնամ տալ քեզի, որ յաւիտենական կեանք կուտայ»:	Յիսուս կ'ուզէ որ Աստուծոյ սերը ցոյց տանք ուրիշներուն մեր վարքով ու խօսքերով:
Մատթէոս 4 : 18-22	Յիսուս առաջին հրաշքը կատարեց. ջուրը գինիի վերածեց եւ իր փառքը յայտնեց: (Աստուծոյ որդին ըլլալը)	Եթէ Յիսուսի հաւատանք յաւիտենական կեանքի խոստումը կուտայ Ան մեզի:
Յովհաննէս 4 : 5-25	Յիսուս ջուր առնելով իր աշակերտներուն ոտքերը լուաց եւ մէջքէն կապուած դէնջակով սրբեց:	Աստուած մեզ կը սիրէ նոյնիսկ երբ մենք կը վարանինք, կը կասկածինք եւ կը վախնանք:
Յովհաննէս 13 : 5	Յիսուս իր առաջին աշակերտներուն ըսաւ «հետեւեցէք ինձի եւ ես ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ»: Անոնք ձգեցին ուռկանները եւ Յիսուսի հետեւեցան:	Յիսուս կը հոգայ մեզ տօնախմբութիւններու ժամանակ, նաեւ մեր կեանքի ամբողջ ընթացքին:

Բարի եւ քաջ հովիւր (Յովհաննէս 10:1-18)

Խաչբառի ուղղահայեաց եօթը բառերը կը բացատրեն եւ հորիզոնական եօթը բառերուն իմաստը կուտան: Ուղղահայեաց սիւնակի օգնութեամբ, գտիր հորիզոնական սիւնակի բառերը: Ապա վարի նախադասութիւնները ամբողջացուր հորիզոնական սիւնակէն գտնելով յարմար պակսող բառերը:

Ուղղահայեաց

Հորիզոնական

1 - 11. հորիզոնականին իմաստը

3-

.

2 - 9. հորիզոնականին իմաստը

6-

.

4 - 10. հորիզոնականին իմաստը

9-

.

5 - 6. հորիզոնականին իմաստը

10-

.

7 - 12. հորիզոնականին իմաստը

11-

.

8 - 3. հորիզոնականին իմաստը

12-

.

13 - 14. հորիզոնականին իմաստը

14-

.

1- Ան որ ոչխարներուն
փարախը դռնէն չի
մտներ, անիկա գող է եւ
_____ (հ. 1)

2- Ան որ դռնէն կը մտնէ,
անիկա ոչխարներուն
_____ է (հ. 2)

3- _____ դուռը
կը բանայ անոր եւ
ոչխարները իր ձայնին
կը հետեւին (հ. 3)

4- Իրենց անուններով կը
կանչէ իր _____
(հ. 3)

5- Ես՝ եմ ոչխարներուն
_____ (հ. 7)

6- Տակաւին _____ ոչխարներ ալ ունիմ որոնք այս փարախէն դուրս են: (հ. 16)

7- Մինչ վարձկանը երբ կը տեսնէ _____ կուգայ՝ կը լքէ ոչխարները ու կը փախչի:
(հ.12)

						1			2			
						u			l			
			3									
			n		չ	խ	ա	ր	ն	ե	ր	ը
				4				5				
				3		տ		h		ղ		
	6											
	n	ւ	ր	ի	2	ա		ե		ծ		
			7									
			p	u			ն	թ		մ		
	8							9				
	ժ		ր	n		ա	ա	ւ	ա	գ	ա	կ
10												
h	n	վ	ի	ւ	ն	ն	ն		ր			
	ղ		u	u			n		գ			
								11				
	n		տ				u	գ	ա	յ	լ	ը
		12										
	վ	դ	n	ւ	n	ը			ր			
								13				
	n		u					h	է			
			14									
	ւ		դ	n	ն	ա	պ	ա	ն	ը		
									յ	ե		
	ր								ր	ր		
	ը							ը				

Նոր Պատուիրանը

Գիրերու վանդակը ունի ուղղահայեաց հինգ ներկուած սիւնակներ: Ձախ կողմի վերի անկիւնէն սկսելով չներկուած սիւնակներուն գիրերը գրէ շարքով վարի գծիկներուն վրայ եւ գտիր ոսկեհամարը: Առաջին գիրերը գրուած են իբրեւ օրինակ:

Ապա մոխրագոյն սիւնակներու գիրերը գրէ շարքով քառանկիւնի գծիկներուն վրայ եւ տես թէ ինչ կ'ըսէ Յիսուս:

Յ	ի	մ	ս	ն	ա	ւ	ս	ր	ը	ս	դ	ա	ւ	ի
ն	ն	կ	ր	պ	պ	ա	տ	ի	ն	ւ	տ	ի	ր	ի
ա	ն	գ	մ	ը	ի	կ	ն	տ	ւ	տ	ն	ա	մ	ա
ձ	ե	ն	գ	ի	ն	ս	ի	ր	ր	ե	դ	ց	է	ն
ք	ի	ւ	ր	ա	ք	ր	ի	ի	ն	չ	մ	պ	է	ա
ս	ե	շ	ս	ձ	ա	ե	գ	կ	ս	ի	ե	ր	ե	ր
ց	ի	տ	դ	ն	ն	ւ	ք	ե	ա	լ	ր	ի	ր	ս
ա	ր	է	ս	ի		ր	ե		ց	է		ք		ք

Յ ի ս _____ , _____ ,

_____ : _____ , _____

_____ : (Յովհաննէս 13:34)

Մ ա _____ :

Մենք ճանչցուինք մեր ըսածներով եւ ըրածներով:

Թուէ թէ ինչ ձեւերով դուն ալ կրնաս Յիսուսի աշակերտ ըլլալ:

Քանի մը գաղափարներ քեզ ուղելու համար՝

սէր

անկեղծութիւն

բարի մտածողութիւն

արդարութիւն

ներողամտութիւն


համբերութիւն

հոգածութիւն

ճշմարտութիւն

քաղցրաբարոյ

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Ղուկաս 2.8-14 ի

Հովհաններ, խաղաղութի՛ւն, Փրկիչը, խանձարուրով, հաճութիւն, հրեշտակը,
աւետիս, Օծեալ

Այնտեղ, դաշտերուն մէջ ----- կային, որոնք գիշերով իրենց
հօտերուն պահակութիւն կ'ընէին: Տիրոջ ----- անոնց երեւցաւ եւ
Տիրոջ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովհանները սաստիկ վախցան.
Հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ----- մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին
մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր -----
---- ծնաւ, որ ----- Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի. Հոն մանուկ
մը պիտի գտնէք՝ ----- փաթթուած եւ մսուրի մէջ դրուած:

Եւ յանկարծ այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն
մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած, ըսելով.

«Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛ռք, ----- երկրի վրայ
եւ մարդոց միջեւ -----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք

Դեկտեմբեր 21ին:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետ

բ. Ս. Աբգար թագաւոր

գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոս

դ. Բոլոր Սուրբերուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս
Առաքելներուն տօնը:

ա. Դեկտեմբեր 6

բ. Դեկտեմբեր 4

գ. Դեկտեմբեր 20

դ. Դեկտեմբեր 27

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ
Յակոբին եւ Մարուգէ ճգնաւորին
տօնը:

ա. Դեկտեմբեր 6

բ. Դեկտեմբեր 18

գ. Դեկտեմբեր 20

դ. Դեկտեմբեր 27

4.- Ո՞վ էր առաջին քրիստոնէայ
թագաւորը:

Ս. Ա. — — — —

5.- Այս եկեղեցական
սպասը ի՞նչ կը
կոչուի



6.- Այս եկեղեցական
սպասը ի՞նչ կը կոչուի



7.- Այս ընծան
ի՞նչ կը կոչուի:



8.- Ի՞նչ էր Յիսուսի առաջին հրաշքը:

ա. Ջուրը գինիի փոխեց

բ. Հինգ հազարը կերակրեց

գ. Կոյրին աչքերը բացաւ

դ. Ծովը հանդարտեցուց

9.- Այս տարի որո՞ւ տօնը կը տօնենք
Դեկտեմբեր 27ին:

ա. Ս. Պետրոս

բ. Ս. Աբգար թագաւոր

գ. Ս. Պօղոս

դ. Ս. Ստեփանոս

10.- Ո՞ր շարականով կը սկսի
Ս. Պատարագի արարողութեան
առաջին բաժինը:

Խ----- Խ----

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Դեկտեմբեր 4ին:

Ս. ----- և Ս. -----

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Santa
Clause ին Տօնը:

ա. Դեկտեմբեր 11

բ. Դեկտեմբեր 4

գ. Դեկտեմբեր 20

դ. Դեկտեմբեր 27

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ
Յակոբի տօնը:

ա. Դեկտեմբեր 18

բ. Դեկտեմբեր 4

գ. Դեկտեմբեր 20

դ. Դեկտեմբեր 27

4.- Նոր Կտակարանի հետեւեալ
գիրքերէն որո՞ւն մէջ կը կարդանք
այն սուրբին մասին որուն տօնը այս
տարի կը տօնենք Դեկտեմբեր 25ին:

ա. Մատթէոսի Աւետարան

բ. Մարկոսի Աւետարան

գ. Դուկասու Աւետարան

դ. Առաքեալներուն Գործերը

5.- Հայաստանի ո՞ր կամուրջին
մէջ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս
Առաքեալները հանդիպեցան:

Ա-----

6.- Ս. Թադէոս ի՞նչ բերաւ
Հայաստան որուն անունով
Ժայռափոր եկեղեցի մը կառուցուած
է:

Ս. Գ-----ը

7.- ա. Որո՞ւ նուիրուած է «Յաղթող եւ
Սուրբ Հայրապետ» Շարականը:
բ. Ո՞վ է հեղինակը այս շարականին:

ա. Ս. -----

բ. Ս. Ն----- Շ-----

8.- Ո՞վ էր Յիսուսի ամենասիրելի
աշակերտը:

ա. Յովհաննէս

բ. Յակոբոս

գ. Պօղոս

դ. Պետրոս

9.- Թափօրի խնկարկութեան ատեն,
խաչակնքելով, պատարագիչին ի՞նչ
պէտք է ըսենք:

Յ----- եւ ---- առաջի ----

Գ----- Աստուծոյ:

10.- Հաղորդութիւն պատրաստելու
համար պատարագիչ քահանան
պէտք ունի հետեւեալ 2 սպասներուն
եւ 2 ընծաներուն:

ա. ----ը

բ. Ս---

գ. Ս-----

դ. ---ի

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Դեկտեմբեր 23ին: «2 պատասխան»

- ա. Ս. Դաւիթ մարգարէ
- բ. Բարեկենդան Յիսնակաց Պահոց
- գ. Ս. Յակոբ Տեառնեղբայր
- դ. Բոլոր Սուրբերուն

2.- Յիսուսի ո՞ր Առաքեալը նաեւ կը
կոչուի Նաթանայել:

- ա. Մատթէոս
- բ. Թադէոս
- գ. Բարթողոմէոս
- դ. Անդրէաս

3.- Ո՞ր գաւառէն Ս. Բարթողոմէոս
Առաքեալ սկսաւ Հայաստանի մէջ իր
քարոզութիւնը:

Գ-----

4.- Մեր Եկեղեցւոյ 7 խորհուրդներէն
ո՞ր մէկը կը տրուի Ս. Պատարագին
ընդմէջէն:

- ա. Մկրտութիւն
- բ. Դրոշմ
- գ. Ապաշխարութիւն
- դ. Հաղորդութիւն

5.- Ի՞նչ պարագաներու տակ Ս.
Ստեփանոսի տօնը կը նշենք
Դեկտեմբեր 25-ին:

6.- Յիսուսի ո՞ր Առաքեալը բոլորէն
ետք վախճանեցաւ:

7.- Ս. Հաղորդութեան Ա. բաժնին մէջ,
ո՞վ եւ ի՞նչ կը պատրաստուի:

- ա. պատարագիչ -----
- բ. Ը-----

8.- Թափօրի խնկարկութեան ատեն,
պատարագիչը ի՞նչ կ'ըսէ:

Յ----- լիջիք առաջի -----

Գ----- Աստուծոյ:

9.- Ո՞ւր կը կարդանք Բարի եւ Քաջ
հովիւին մասին:

- ա. Մատթէոս
- բ. Մարկոս
- գ. Դուկաս
- դ. Յովհաննէս

10.- Ի՞նչ է Նոր պատուիրանը: Ո՞ւր
կը կարդանք:
Յիսուս ըսաւ:

Նոր պատուիրան մը կու տամ
ձեզի.- Ս----- ք իրար: Ինչպէս եւ ձեզ
----- դուք ալ իրար -----:
Յովհաննէս 13.--

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG-ը 10 տարեկան

Այս թիւով.....

Յունուար ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 2-4

Ճրագալոյց Ս. Ծննդեան
Ջրօրինէք
Աստուածայայտնութիւն
Ս. Վահան Գողթնացի
Խթում
Յովհաննու Կարապետ
Սուրբ Ծննդեան Շարական

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Ս.
Եկեղեցւոյ պատարագին Էջ 5-7

Բ. Ճաշու Պաշտօն
Թափօրի Շարական
Ժամամուտ եւ Ճաշու Շարական
Երեքսրբեան Փառաբանանք
Ճաշու Աւետարան
Հաւատամք

Համացանցէն քաղուած Էջ 8

Եզակի Գիրեր Էջ 9

Մարիամ Եղիսաբէթի կ'այցելէ Էջ 10

Յիսուսի Ծնունդը Էջ 11-12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 13-16

ՅՈՒՆՈՒԱՐ 2011 (ԺԸ տարի թիւ 5)



Ծ.....Ս. Ծնունդ

Խաչքարի հեղինակ՝
Ժողովրդական վարպետ,
ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամսուան Համարը

«Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ,
եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը
Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ
ճշմարտութեամբ լեցուն»: Յովհաննէս 1.14

Յունուար ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 1	Ամանոր
Դշ. 5	Ճրագալոյց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան
Եշ. 6	Տօն Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի
Ուր. 7	Յիշատակ Մեռելոց
Եշ. 13	Տօն Անուանակոչութեան մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի
Շբթ. 15	Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետի
Շբթ. 22	Ս. Հայրապետներ Աթանաս եւ Կիրիլ
Գշ. 25	Ս. Վահան Գողթնացի
Շբթ. 29	Ս. Գրիգոր Աստուածաբան

Ճրագալոյց Ս. Ծննդեան

Այսպէս կը կոչուի Աստուածայայտնութեան նախորդող երեկոյեան արարողութիւնը: Ճրագալոյցը բարդ բառ մըն է, «ճրագ լուցանել (վառել)», որովհետեւ եկեղեցւոյ մէջ երեկոյեան բազմաթիւ լապտերներ ու կանթեղներ կը վառին եւ պատարագ կը մատուցուի, որուն ընթացքին բոլոր հաւատացեալները վառող մոմեր կը բռնեն:

Ճրագալոյցի լապտերներու եւ մոմերու լոյսը կը խորհրդանշէ այն հոգեւոր լոյսի ճառագայթումը մեր մէջ, որ մեզի պարգեւեց Փրկիչը իր տնօրինութիւններով:

Զրօրհնէք

Այս արարողութիւնը հաստատուած է ի յիշատակ Քրիստոսի մկրտութեան: Այն կը կատարուի Աստուածայայտնութեան տօնին: Հին ժամանակ ջրօրհնէքը կը կատարուէր գետերու կամ լիճերու ափին, այժմ՝ եկեղեցւոյ մէջ: Պատարագի աւարտին քահանան յատուկ ընթերցուածքներով, քարոզէն եւ աղօթքէն յետոյ խաչով կ'օրհնէ մեծ տակառի մէջ լեցուած ջուրը, Ս. Միռոն կաթեցնելէ ետք անոր մէջ, որ կը բաժնուի հաւատացեալներուն՝ իբրեւ սրբութեան խորհրդանիշ եւ բժշկութեան միջոց:

Աստուածայայտնութիւն (Սուրբ Ծնունդ եւ Մկրտութիւն)

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի տնօրինութիւնները, որոնցմով Ան յայտնուեցաւ աշխարհին (Գաբրիէլ հրեշտակապետի աւետումը, Յիսուս Մանուկին ծնունդը, ութնօրեայ թլփատութիւնը, հովիւներու եւ մոզերու երկրպագութիւնը, քառասնօրեայ ընծայումը, ինչպէս նաեւ Յորդանան գետին մէջ մկրտուիլը) առաջին դարերուն կը տօնուէին միեւնոյն, Աստուածայայտնութիւն կոչուող մեծ տօնախմբական շրջանին:

Հետագային այս տօնի գրեթէ բոլոր յիշատակները առանձնացան՝ տարուայ մէջ բաժնուելով ըստ համապատասխան ամիսներու եւ օրերու: Մնացին միայն Ծնունդը եւ Մկրտութիւնը, որոնք ըստ Աւետարանին կատարուէր են նոյն օրը՝ երբ Յիսուս 30 տարեկան էր: Ըստ աւանդութեան այդ օրը Յունուար 6-ն էր:

Աւելի ուշ, Ե. դարուն (451 թուին Քաղկեդոնի մէջ գումարուած չորրորդ Տիեզերական ժողովին որուն Հայաստանեայց Եկեղեցին չմասնակցեցաւ) Յունա-Հռոմեական եկեղեցին, Ծննդեան տօնը եւս անջատեց Մկրտութենէն եւ սկսաւ տօնել Դեկտեմբեր 25-ին (մոռցնել տալու համար այդ օրերու արեւի պաշտամունքը Եւրոպայի մէջ) որ տարածում գտաւ ամբողջ աշխարհին մէջ: Սակայն Հայ Եկեղեցին հաւատարիմ մնաց հնագոյն աւանդութեան եւ մինչեւ այսօր Քրիստոսի ծննդեան եւ մկրտութեան յիշատակը միացեալ կը տօնէ Յունուար 6-ին Աստուածայայտնութիւն անուանումով:

Յիշատակութիւն՝ Սուրբ Վահան Գողթնացիի Յունուար 25

Արաբական տիրապետութեան շրջանին, բազմաթիւ հայ իշխաններ ու անոնց զաւակները գերի տարուեցան դամասկոս հոն կրթուելու համար իսլամական հաւատքի մէջ եւ արաբ դառնալու համար: Տարագրուող մանուկներու կարգին կը գտնուէր Գողթնի Խոսրով իշխանի որդին չորս (4) տարեկան Վահանը: Արաբները անոր անունը փոխելով զայն կոչեցին Վահապ:

Վահան, իր ուշիմութեան շնորհիւ արժանացաւ յատուկ խնամքի ու դարձաւ Օմար ամիրապետին նախասիրած արքունի պաշտօնեան:

Յովհան Օձնեցի կաթողիկոս իր դամասկոս այցելութեան ընթացքին արտօնութիւն խնդրեց Օմար ամիրապետէն որ հայ տարագիր իշխանները վերադառնան հայրենիք ու յաջողեցաւ այդպիսի արտօնութիւն ձեռք ձգել: Վահան, որ թէւ իսլամ կրօնքին մէջ մեծցած էր, իմացած էր թէ ինք Հայ իշխանի մը որդին էր: Հետեւաբար, ինք եւս փափաքեցաւ վերադառնալ Հայաստան, խոստանալով ամիրապետին վերադառնալ Դամասկոս իր հօրենական կալուածները ժառանգելէ ու հայրենի հողը տեսնելէ անմիջապէս ետք:

Վահան իր հայրենի գաւառը հասնելէ ետք տեղեկացաւ Օմար ամիրապետին մահուան մասին ու որոշեց փախ հայաստան ու վերագտնել իր քրիստոնէայ հաւատքը:

Վահանի քրիստոնէայ դառնալու լուրը երբ Դամասկոս հասաւ, օրուան ամիրապետը որոշեց ձերբակալել զայն ու դատել: Այսպիսով սկիզբ առաւ հալածանքի երկար շրջան մը ուր Վահան թափառելով Հայաստանի զանազան կողմերը, ժամանակաւոր կերպով կ'ապաստանէր զանազան շրջաններու վանքերէն ներս, ապա կը ստիպուէր տեղափոխուիլ չվտանգելու համար տեղի

վանականներն ու բնակիչները: Այս թափառական վիճակի վերջին հանգրուանը կը հանդիսանայ Սիփան լեռան ստորոտը գտնուող Երաշխաւորաց վանքը, որուն մեծաւոր Հայր Արտաւազդը պատսպարեց ու քաջալերեց զինք:

Գիտնալով հանդերձ թէ իսլամութենէն հրաժարող անձը մահուամբ կը պատժուէր, Վահան որոշեց ներկայանալ Հեղամ ամիրապետին, յայտնել անոր իր քրիստոնէայ ծագումը ու քրիստոնէայ հաւատքին հաւատարիմ փախու փափաքը: Ամիրապետին մեծ խոստովանելը ապարդիւն մնացին ու Վահան մերժեց որեւէ ձեռով հրաժարիլ իր քրիստոնէայ հաւատքէն:

Վ ա հ ա ն Գ ո ղ թ ն ա ց ի ի նահատակութիւնը այլ օրինակ մըն է հերոսական կեցուածքի մը, ըստ որուն քրիստոնէայ հաւատացեալներ հաստատուն մնացած են իրենց հաւատքին հանդէպ ու մերժած ուրանալ զայն:

Անոնց յիշատակը վառ կը փայլ միայն երբ իրենց նահատակութիւնը արժեւորենք մենք եւս կառչած մնալով մեր հաւատքին ու ապրելով որպէս Քրիստոսի սիրով ու հաւատքով շնորհուած հաւատացեալներ:

Գողթն գաւառը կը գտնուի Նախիջեւանի մէջ որ ներկայիս Ատրպէյճանի տիրապետութեան տակ է: Անոր քաղաքներէն են Տիգրանաւան եւ Ագուլիս:

ԽԹՈՒՄ

«Խթում» անուն տակ ծանօթ են Սուրբ Ծնունդը նախորդող երեկոյեան ընթացքին կատարուող նախատօնական եկեղեցական եւ ժողովրդական արարողութիւնները:

Այդ երեկոյ եկեղեցիէն ներս կանթեղներ կը վարուին եւ ճրագը կը բաժնուի ժողովուրդին անոնց մոմերը վառելով ու այդպէս վառած մոմերը տուն տանելով: Ճրագ վառելու այս սովորութեան հետեւողութեամբ, Խթումի երեկոյեան տրուած է նաեւ ճրագալոյց անունը:

Անցեալին Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր մեծ տօներուն իբր նախատօնակ ճրագալոյց կը կատարուէր, իսկ ներկայիս միայն Սուրբ Ծնունդի եւ Զատիկուայ տօները նախորդող երեկոները:

Ճրագալոյցի ժողովրդական սովորութիւններէն է մէկը միւսին Քրիստոսի ծննդեան աւետիս տալը, ապա աւանդական ընթրիքի շուրջ հաւաքուիլը, ճաշակելու համար ձուկ, բանջար, հաւկիթ եւ գինի:

Սուրբ Ծննդեան Շարական

Խորհուրդ մեծ եւ սքանչելի
որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւք երգեն ընդ հրեշտակս
տան աւետիս աշխարհի

Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղեհեմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէք
զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի
ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ
ի սուրբ այրին բազմեցաւ:

Գիտէի՞ր թէ....

Յիսուս երեսուն (30) տարեկան էր երբ մկրտուեցաւ:
Յիսուս ութ (8) օրուայ էր երբ անուանակոչուեցաւ, եւ
մենք այս կը տօնենք Յունուար 13-ին:

Յովհաննու Կարապետ

Կարապետ կը նշանակէ «ճամբայ բացող»: Յովհաննէս Կարապետը, Յիսուս Քրիստոսի գալուստը վկայած մարգարէներէն վերջինն է որ նաեւ մկրտեց զԱյն այնուհետեւ կոչուելով «Յովհաննէս Մկրտիչ»: Ան մեծ համբաւ ունէր իր ապաշխարիութեան քարոզչութեամբ եւ իրեն հետեւորդներու մկրտութեամբ: Իր հանդէպ յարգանքը այնքան մեծ եղած է որ իր հետեւորդները հարց կու տային թէ արդեօք ի՞նքն էր Քրիստոսը: Յիսուս Յովհաննէսի մասին ըսաւ թէ աւելի մեծ մարդ գոյութիւն չունէր, սակայն Երկնքի մէջ, վերջինն իսկ իրմէ աւելի մեծ պիտի ըլլար:


Հայաստանեայցառաքելական եկեղեցին Յովհաննու կարապետի յիշատակը կը նշէ չորս ատիթներով, որոնցմէ ծննդեան տօնը այս տարի Շաբաթ Յունուար 15-ին է:



Հովիւներուն
Երկրպագութիւնը

Բացատրություն՝ Հայց. Առաք. Սուրբ Եկեղեցւոյ Պատարագին «շար. 3»

Կը շարունակենք ներկայացնել Բերիոյ թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ Գերշ. Տ. Սուրբն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. Պատարագ»ի բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկը:



Ս. Պատարագի արարողութեան 4 մասերը:

Ինչպէս անցեալ անգամ նշեցինք, Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ:

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում

Անցեալ թիւով ներկայացուցինք «Պատրաստութիւն»ը, իսկ այս թիւով պիտի ներկայացնենք «Ճաշու Պաշտօն»ը:

Երախայ = չմկրտուած

2. ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆ

Պատրաստութենէն ետք եկող «Ճաշու Պաշտօն»ը, Պատարագի առաջին մասն է, որ կը կոչուի նաեւ ԵՐԱԽԱՅԻՅ ՊԱՏԱՐԱԳ: Անցեալին, անոնք որոնք չէին մկրտուած, ու ապաշխարանքի մէջ գտնուողները, կրնային ներկայ ըլլալ միայն Պատարագի այս բաժնին: ՃԱՇՈՒ ՊԱՏԱՐԱԳը նախապատրաստութիւնն է ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳին: Այս բաժնին մէջ է որ հաւատացեալները հոգեպէս կը պատրաստուին մասնակից դառնալու զոհաբերման սուրբ խորհուրդին:

Թափօրի Շարական

ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆը կը սկսի Թափօրի շարականով:

Թափօրի խնկարկութեան ատեն, խաչակնքելով, պատարագիչին ըսել:

- Յիշեսցիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Պատարագիչը կը պատասխանէ.

- Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:



Ժամամուտ եւ ճաշու շարական

Թափօրի շարականին երգեցողութենէն ետք, դպիրները կ'արտասանեն յաւուր պատշաճի (յաւուր կը նշանակէ օր, այսինքն այդ օրուան յարմար) Ժամամուտը եւ կ'երգեն ճաշու շարականը: Ժամամուտը եւ ճաշու շարականը ներբողականներ են ուղուած օրուայ Տէրունի տօնին, կամ ոգեկոչուող սուրբին:

Երեքսրբեան Փառաբանանք

Ճաշու շարականին կը յաջորդէ Երեքսրբեան փառաբանանքը՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾը:

Լուր (այսինքն ոչ տօնական) օրերու եւ Խաչի տօներուն կ'երգենք.

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօօր, սուրբ եւ անմահ,
որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

սակայն, երկրորդ տողը կը փոխուի տարբեր տօներու առիթներով, հետեւեալ ձեւով.

Աւետման եւ Ծննդեան՝ որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:
Տեառնընդառաջին եւ Ծաղկազարդին՝ որ երկիր եւ գալոց ես, ողորմեա մեզ:
Սուրբ Զատիկին- Յարութեան տօնին՝ որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ:
Հոգեգալուստին՝ որ եկիր եւ հանգեար յԱռաքեալսն, ողորմեա մեզ:
Պայծառակերպութեան/Վարդավառին՝ որ յայտնեցար ի Թաբոր լերինն, ողորմեա մեզ:
Վերափոխման Աստուածածնի՝ որ եկիր ի փոխումս մօր քո եւ կուսի, ողորմեա մեզ:

Ճաշու Աւետարան

Աստուածային փառքն է, որ կը ճառագայթէ եւ կ'ողողէ ողջ եկեղեցին: Սուրբ, հօօր եւ անմահ Աստուածորդին է որ մեզի համար մարմնացաւ, խաչուեցաւ եւ յարութիւն առաւ: Աստուծոյ Որդիին սրբութեամբ օծուած սրտերը այս անգամ կը բացուին ըմբռնելու յաւիտեական այն ճշմարտութիւնները, որոնք մեզի կը ներկայանան ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶի լոյս էջերէն: Մարգարէներ կը վկայեն, Պօղոս Առաքեալ կը պատգամէ, եւ ՃԱՇՈՒ ԱՒԵՏԱՐԱՆով Քրիստոս Ինքն է որ կը խօսի Աւետարանիչներու գրիչով:

Հաւատամք

Ժամանակը հասած է որ հաւատացեալները խոստովանին իրենց ուղղափառ դաւանութիւնը՝ ուրեմս միասնաբար կ'ըսեն Նիկիական Հաւատամքը:

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿը բանաձեւումն է Տիեզերական Ա. ժողովին, որ տեղի ունեցաւ ՆԻԿԻՈՅ քաղաքին մէջ 325թ. եւ որուն մասնակցած են 318 Հայրապետներ: Հայաստանեայց Եկեղեցոյ կողմէ այս ժողովին մասնակցած է ԱՐԻՍՏԱԿԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի որդին:

Նգովք

Ժողովուրդին կողմէ արտասանուած «Հաւատամք»-էն ետք, Սարկաւազը Հայաստանեայց Եկեղեցւոյ դիրքորոշումը կը բանաձեւէ որպէս նգովք բոլոր անոնց հանդէպ որոնք կ'ըսեն թէ «կար ժամանակ երբ չկար Որդին», կամ «կար ժամանակ երբ չկար Սուրբ Հոգին» կամ «ոչինչէն ստեղծուեցան կամ ուրիշ էութենէ մը գոյացան» կամ «փոփոխութեան եւ այլալլումի ենթակայ են»:

Ասկէ ետք, պատարագիչ քահանան կը կրկնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի խօսքերը արտասանուած 325-ին երբ իր որդին Արիստակէսը, Հայաստան աշխարհի բերաւ Նիկիոյ Ժողովին որոշումները ըսելով՝

«Իսկ մենք փառաւորենք զԱյն (Քրիստոսը), որ յաւիտեաններէն առաջ է, երկրպագելով Սուրբ Երրորդութեան՝ որ մէկ Աստուած է. Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Հասած է ժամը Աստուածորդւոյն փառաւորման: Ուրեմն անոնք որոնք պատրաստ չեն հաղորդակից դառնալու Աստուածային այս խորհուրդին, պարտին դուրս ելլել եկեղեցիէն. որովհետեւ «այրող կրակ է ան, որ կ'այրէ եւ կը սպառէ մեղաւորները», ինչպէս պիտի ըսէր Բարսեղ Կեսարացի Հայրապետ: Ահա թէ ինչո՞ւ Սարկաւազը խորանէն բարձրաձայն կը յայտարարէ:

«Ո՛չ մէկ երախայ (չմկրտուած), ո՛չ մէկ թերահաւատ, ո՛չ մէկ ապաշխարութեան մէջ գտնուող եւ ոչ մէկ հոգիով ինքզինք մեղաւոր զգացող թող մօտենայ աստուածային խորհուրդին:

Հաւատացեալները պատրաստ են ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ (յաջորդիւ):

+++++



Աւետումը



Մկրտութիւն
Յովնաթան Յովնաթանեան

Համացանցն Քաղուած

Միրոյ Նուէրը

Զմեռնային պաղ օրերը հասեր էին արդէն, տարի մը ամբողջ անցեր էր եւ շուտով Սուրբ Ծննդեան տօնն էր: Փոքրիկ Արմէնը բացաւ գանձանակը որովհետեւ որոշած էր անցեալ տարուան նման իր ընտանիքի անդամներուն նուէրներ գնել:

Ան հաշուեց ունեցած դրամը եւ անդրադարձաւ որ այս տարուայ իր հաւաքած գումարը անցեալ տարուան նուազ էր: Ի՞նչ ընէր, ինչպէ՞ս նուէրներ գնէր եւ ուրախացնէր իր ընտանիքը:

Արմէն նստաւ եւ սկսաւ մտածել. մտածեց Ծնունդի իսկական իմաստին մասին: Յիշեց Յիսուս մանուկի ծննդեան պատմութիւնը, անոր ընտանիքի աղքատիկ պայմանները, ախորը, կենդանիներն ու աստղը: Ու ինքն իրեն մտածեց թէ ինչպէս Յիսուս դարձաւ ուրախութեան եւ փրկութեան աղբիւր:

Ան ինքնիրեն մրթմրթաց՝ «ուրեմս պայման չէ գունաւոր թուղթերով եւ զարդարուն ժապաւեններով նուէրներ տալ իրարու, այլ կարելոք իրարու հանդէպ սէր եւ գուրգուրանք ցոյց տալն է»:

Ան բաւը առնելով վազեց դուրս եւ դրան առջեւ կուտակուած ձիւնը մաքրեց, անկողինը շտկեց, խաղալիքները հաւաքեց, իր քրոջ ջութակը նորոգեց, ամրացուց սենեակին թուլցած դարակը ապա համով նախաճաշ մը պատրաստեց:

Երբ ընտանիքի մասցած անդամները այս բոլորը տեսան, անդրադառնան թէ Արմէնը որքա՞ն զիրենք կը սիրէ:

Ճիշդ է որ այս տարի Արմէն դրամ չունէր խանութէն նուէրներ գնելու համար, ճիշդ է որ ան անհամար նուէրներ չբերաւ իր ընտանիքի անդամներուն, բայց ան սորվեցաւ որ ամենամեծ նուէրը մեր շուրջինները սիրելն է:



Որքան որ ալ դժուար ըլլան պարագաները, ոչինչ կը խնայես գաւակներդ ուրախացնելու եւ գոհացնելու համար:

Զմոռնանք որ Հայր Աստուած շա՛տ աւելին պիտի տայ անոնց՝ որոնք իրեն կը դիմեն: (Մատթէոս 7.11)

Ո՞րն է ճիշդ պատասխանը Դեկտեմբեր ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

Հովիւներ, հրեշտակը, աւետիս, Փրկիչը, Օծեալ, խանձարուրով, խաղաղութիւն, հաճութիւն

6. Ս. Գեղարդը 7. ա. Ս. Յակոբ բ. Ս. Ներսէս Շնորհալի 8. ա. Յովհաննէս 9. Յիշեսցիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ 10. ա. Նշխար բ. Սկիւհ գ. Մաղզմայ դ. Գինի

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. բ. Ս. Աբգար թագաւոր, 2. բ. Դեկտեմբեր 4 3. բ. Դեկտեմբեր 18 4. Ս. Աբգար 5. Բուրվառ 6. Սկիւհ 7. Նշխար 8. ա. Ջուրը գինիի փոխեց 9. ա. Ս. Պետրոս գ. Ս. Պօղոս 10. Խորհուրդ Խորին

Երկրորդականի անկիւն

1. ա. Ս. Դաւիթ մարգարէ գ. Ս. Յակոբ Տեառնեղբայր 2. գ. Բարթողոմէոս 3. Գողթան 4. դ. Ս. Հաղորդութիւն 5. եթէ Կիրակի կամ պահքի օր չէ, որուն պարագային կը նշենք Դեկտեմբեր 26-ին 6. Ս. Յովհաննէս 7. ա. պատարագիչ քահանան բ. ընծաները 8. Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ 9. դ. Յովհաննէս 10. Սիրեցէ՛ք իրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէ՛ք: Յովհաննէս 13.34

Նախակրթարան Դ. Ե. Ջ. անկիւն

1. Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս 2. ա. Դեկտեմբեր 11 3. ա. Դեկտեմբեր 18 4. դ. Առաքեալներուն Գործերը 5. Արտաշատ

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

ը	ա	դ	է	ե	գ	զ	թ	բ
զ	զ	բ	դ	ա	թ	ե	է	ը
է	ե	թ	բ	զ	ը	ա	դ	զ
ե	դ	ը	թ	զ	է	բ	զ	ա
զ	է	զ	ա	բ	ե	դ	ը	թ
բ	թ	ա	զ	ը	դ	զ	ե	է
թ	զ	զ	ը	դ	բ	է	ա	ե
դ	ը	ե	զ	է	ա	թ	բ	զ
ա	բ	է	ե	թ	զ	ը	զ	դ

	ը		բ					զ
		բ	ը	է	զ	դ		
ա		թ	է			բ		է
թ					ը		ե	
բ		է				զ		ը
	զ		դ					զ
է		ա			բ	զ		դ
		ը	զ	զ	թ	ա		
զ					դ		թ	

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝


- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Մարիամ Եղիսաբեթի կ'այցելէ
Ղուկաս 1:39-56

Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը:

Օգնէ որ Մարիամ հասնի Զաքարիային տունը Եղիսաբեթին քով:

Երբ Մարիամի ողջոյնը լսեց՝



Եղիսաբեթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝
բարձրաձայն ըսաւ

Կ_ն_ր_ն_ մ_ջ_ ըհն_ւ_ ա_դ_ն_ւ_ ըհն_ւ_ գ_ւ_կ_ ը_կ_կր_ա:

Ղուկաս 1:42

Բառերը ամբողջացուր ձայնաւոր գիրերով՝ ա ե է ը ի ո ւ

Յիսուսի Ծնունդը

(պարզացուած)



Օր մը հրեշտակ մը այցելեց Մարիամ կոյսին եւ ըսաւ՝
«Ուրախացիր, Աստուած հետդ է,
դուն օրհնուած ես կիներուն մէջ»:

Մարիամ, երբ լսեց այս խօսքերը, քիչ մը
մտահոգուեցաւ, ինքզինքին հարց տուաւ թէ ի՞նչ
ըսել կ'ուզէր հրեշտակը: Ապա, Գաբրիէլ հրեշտակը
շարունակեց «Մի՛ վախնար մարիամ՝ դուն պիտի
ունենաս զաւակ մը որուն անունը պիտի դնես Յիսուս,
եւ ան Աստուծոյ Որդի պիտի կոչուի: Հրեշտակը ըսաւ
նաեւ որ իր զարմկը Եղիսաբէթն ալ զաւակ մը պիտի
ունենայ:

Մարիամ, երբ այս լսեց, անմիջապէս գնաց Եղիսաբէթին
քով: Այս բոլորը պատահեցան երբ Մարիամ նշանուած
էր Յովսէփին հետ: Մինչ Յովսէփ կը մտածէր Մարիամի
իրեն ըսածներուն մասին, Տիրոջ Հրեշտակը երագի մը մէջ
երեւցաւ իրեն եւ ըսաւ.



– «Յովսէփ, մի՛ վախնար
ամուսնանալու Մարիամի հետ:
Մարիամ որդի մը պիտի ծնի եւ
զայն Յիսուս կոչես որովհետեւ



անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ:

Այդ օրերուն Հռոմի Օգոստոս կայսրը
հրամայեց որ ամէն մարդ իր ծննդավայրը
վերադառնայ ընդհանուր մարդահամար
մը կատարելու համար: Յովսէփ եւ
Մարիամ, դաւիթ թագաւորի ծննդավայր
Բեթլեհէմ քաղաքէն էին: Թէեւ զաւակը
շուտով պիտի ծնէր, իրենք ստիպուած ճամբորդեցին Բեթլեհէմ:
Բեթլեհէմ շատ մարդ կար եւ բոլոր պանդոկներուն սենեակները
լեցուն էին, ուրեմս ստիպուեցան ախոռի մը մէջ քնանալ:

Այդ օրերուն Հռոմի Օգոստոս կայսրը
հրամայեց որ ամէն մարդ իր ծննդավայրը
վերադառնայ ընդհանուր մարդահամար
մը կատարելու համար: Յովսէփ եւ
Մարիամ, դաւիթ թագաւորի ծննդավայր
Բեթլեհէմ քաղաքէն էին: Թէեւ զաւակը



Յովսէփ եւ Մարիամ ստիպուեցան ախոռի մէջ քնանալ, որովհետեւ պանդոկներուն մէջ տեղ չկար: Այդ գիշեր իրենց զաւակը ծնաւ, զոր դրին մսուրին մէջ: Աւելի ուշ նոյն գիշերը հովիւներ եկան այցելութեան եւ պատմեցին «երբ մեր գառնուկներուն ու ոչխարներուն պահակութիւն կ'ընէինք, փայլուն հրեշտակ մը երեւցաւ մեզի եւ մենք շատ վախցանք: Բայց հրեշտակը ըսաւ մեզի՝

- Մի՛ վախնաք, ձեզի լաւ լուր մը պիտի տամ, Դաւիթ քաղաքին մէջ այսօր ծնաւ ձեր փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Յետոյ, Հրեշտակին միացաւ խումբ մը ուրիշ հրեշտակներ եւ բոլորը միասին ըսին - Աստուծոյ փառք երկինքի մէջ եւ խաղաղութիւն աշխարհի վրայ»:



Այդ ժամանակ, արեւելքէն իմաստուն մոգեր երբ տեսան փայլուն աստղը երկնքին մէջ, անմիջապէս գիտցան որ ժողովուրդին համար նոր թագաւոր մը ծներ էր:

Անոնք հետեւելով աստղին հասան Բեթլեհէմ, գտան մսուրը ուր Յիսուս մանուկը ծներ էր ու անոր նուիրեցին ոսկի, կնդրուկ եւ զմուռ:

Թէեւ Հերովդէս թագաւորը հրամայած էր մոգերուն որ վերադառնան եւ իրեն պատմեն իրենց տեսածը, բայց Աստուած երազի մը

մէջ հրահանգեց մոգերուն որ ուրիշ ճամբով երթան իրենց երկիրը, առանց Հերովդէսին հանդիպելու, եւ այդպէս ըրին:



**Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ
Ձեզի եւ Մեզի Մեծ Աւետիս**

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Մատթեոսի Աւետարանին 2. 9-12

հրահանգը, աստղը, առաջնորդեց, երկրպագեցին, ոսկի, կնդրուկ,
զմուռս, երագի

Թագաւորին այս ----- լսելէ ետք, մոզերը մեկնեցան:
Անոնք չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն -----
----, որ արեւելքի մէջ տեսեր էին. եւ ահա աստղը -----
զիրենք մինչեւ որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ ուր երեխան կը
գտնուէր: Երբ տուն մտան, տեսան երեխան իր մօրը՝ Մարիամին
հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով ----- մանուկին:
Ապա բացին իրենց արկղերը եւ Յիսուսի ընծայեցին իրենց
նուէրները -----, ----- եւ -----:

Յետոյ ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը, առանց Հերովդէսի
հանդիպելու, ինչպէս որ Աստուած ----- մը մէջ հրահանգեց
իրենց:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

- 1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Յունուար 25ին:
ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետ
բ. Ս. Աբգար թագաւոր
գ. Ս. Վահան Գողթնացիի
դ. Բոլոր Սուրբերուն
- 2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.
Աթանասի եւ Ս. Կիրէղի տօնը:
ա. Յունուար 6
բ. Յունուար 4
գ. Յունուար 22
դ. Յունուար 27
- 3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Յիսուսի ծննդեան տօնը:
ա. Յունուար 6
բ. Յունուար 18
գ. Յունուար 20
դ. Յունուար 27
- 4.- 2012-ին ե՞րբ տեղի պիտի ունենայ
Ջրօրհները:
ա. Յունուար 6-ին Ս. Պատարագէն
էտք:
բ. Յունուար 5-ին երեկոյեան
գ. Չատիկին
դ. Բարեկենդանին
- 5.- 1999-ին ե՞րբ տօնեցինք Յիսուսի
մկրտութեան տօնը:
ա. Յունուար 6
բ. Յունուար 18
գ. Դեկտեմբեր 25
դ. Յունուար 27
- 6.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Յիսուսի Աստուածայայտութիւնը:
ա. Յունուար 6
բ. Դեկտեմբեր 18
գ. Յունուար 25
դ. Յունուար 27
- 7.- Յիսուս ինչո՞վ մկրտուեցաւ:
ա. Ձէթ
բ. Ջուր
գ. Միւռոն
դ. Իւղ
- 8.- Յիսուս որո՞ւ կողմէ մկրտուեցաւ:
ա. Տէր Գառնիկին
բ. Սրբազանին
գ. Յովհաննէս Մկրտիչին
դ. Քահանայապետին
- 9.- Ի՞նչ կը կոչենք Ս. Ծնունդին
նախորդող երեկոն:
ա. Խթում
բ. Չատիկ
գ. Ջրօրհներ
դ. Բարեկենդան
- 10.- Ե՞րբ տեղի կունենայ
Ճրագալոյցը:
ա. Յունուար 6-ին Ս. Պատարագէն
էտք:
բ. Յունուար 5-ին երեկոյեան
գ. Չատիկին
դ. Բարեկենդանին

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Յիսուսի անուանակոչութիւնը
անշարժ տօն մըն է: Ամէն
տարի ե՞րբ կը տօնենք Յիսուսի
անուանակոչութիւնը:

Յունուար --- ին:

2.- Մոզերը ի՞նչ նուիրեցին Յիսուս
Մանուկին:

ա. ---ի

բ. -----կ

գ. գ-----

3.- Ո՞վ էր Հրէաստանի թագաւորը
երբ Յիսուս ծնաւ:

-----ա

4.- ա. Ո՞վ էր Հռոմի կայսրը երբ
Յիսուս ծնաւ:

բ. Տարուան քանիերորդ ամիսը այս
կայսրին անունով է:

ա. -----

բ. --

5.- Հինգ Տաղաւարներէն ո՞ր մէկը
անշարժ տօն մըն է:

ա. Ս. Ծնունդ

բ. Ս. Զատիկ

գ. Պայծառակերպութիւն

դ. Վերափոխումն Ս. Աստուածածնի

ե. Խաչվերաց

6.- Յիսուսի մկրտութեան ընթացքին,
Ս. Հոգին ինչի՞ կերպարանքով իջաւ
Յիսուսի վրայ:

-----ի

7.- Ամբողջացո՞ւր ըստ Աւետարան
ըստ Մարկոսի 1.11-ին:

Երկինքէն ձայն մը լսուեցաւ, որ
կ'ըսէր.

- Դուն ես -- ա----- Ո-----, որուն
-----:

8.- Ս. Ծնունդի խթման մատուցուող
Ս. Պատարագի ընթացքին երբ
«Սուրբ Աստուած, Սուրբ եւ հօգօր,
Սուրբ եւ անմահ ողորմեա
մեզ» կ'երգենք, ի՞նչ կըսենք երկրորդ
տողին:

ա. որ խաչեցար վասն մեր

բ. որ յայտնեցար վասն մեր

գ. որ երկիր եւ գալոց ես

դ. որ յարեար ի մեռելոց

9.- «Հաւատամք»ը գրուեցաւ Ա.
Տիեզերական ժողովին ընթացքին:

ա. Ո՞ր թուականին

բ. Ո՞ր քաղաքին մէջ

տեղի ունեցաւ այդ ժողովը:

ա. -----

բ. Ն-----

10.- Յիսուսի ծննդեան հովիւներու
այցին մասին միայն մէկ
աւետարանի մէջ կը կարդանք: Ո՞ր
աւետարանին մէջ:

ա. Մատթէոս

բ. Մարկոս

գ. Դուկաս

դ. Յովհաննէս

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Անոնք որոնք Ս. Ծնունդը կը տօնեն
Դեկտեմբեր 25-ին, ե՞րբ կը տօնեն
մկրտութիւնը:
ա. Յունուար 6
բ. Յունուար 1
գ. Յունուար 13
դ. Դեկտեմբեր 25

2.- Արեւմտեան Եւրոպայի քրիստոնէաները
ե՞րբ փոխեցին Ս. Ծննդեան տօնը Յունուար
6-էն Դեկտեմբեր 25-ին:
ա. 325 Նիկիոյ ժողովին
բ. 451 Քաղկեդոնի ժողովին
գ. 381 Կոստանդնուպոլսոյ ժողովին
դ. 431 Եփեսոսի ժողովին

3.- Հայաստանեայց Եկեղեցին այս տարի
ո՞ր սուրբին տօնը կը յիշատակէ Յունուար
25-ին:

Ս. Վ----- Գ-----

4.- Գրէ՛ շիտակ ժամանակագրական
շարքով հետեւեալ տօները:
Աստուածայայտնութիւն,
Անուանակոչութիւն, Յովհաննու
Կարապետ, Ս. Սարգիս, Ղեւոնդեանց,
Վարդանանց, Բուն Բարեկենդան:
ա.
բ.
գ.
դ.
ե.
զ.
է.

5.- Գրէ՛ շիտակ ժամանակագրական
շարքով հինգ տաղաւարները:
ա.
բ.
գ.
դ.
ե.

6.- Ամբողջացո՛ւր:
Խորհուրդ — եւ սքանչելի
որ յայսմ ատուր -----.
----- երգեն ընդ հրեշտակս
տան ----- աշխարհի

7.- Ամբողջացո՛ւր:
----- նոր արքայ
Ի ----- քաղաքի.
Որդիք մարդկան -----
զի վասն մեր -----:
----- երկնի եւ երկրի
ի ----- պատեցաւ.
Ոչ ----- ի Հօրէ
ի սուրբ ----- բազմեցաւ:

8.- Ո՞ւր կը գտնուի Գողթն գաւառը:

Ն-----ի մէջ:

9.- Երախայ ի՞նչ կը նշանակէ:

10.- Որո՞ւ խօսքերն են Ս. Պատարագի
այս բաժինը: «Իսկ մեք փառաւորեսցուք
որ յառաջ քան զյաւիտեանս
երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն
եւ մի Աստուածութեանն Հօր եւ Որդւոյ
եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

Ս. -----ր Լ-----ի

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG-ը 10 տարեկան

Այս թիւով.....

Փետրուար ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 2-4

Տեառնընդառաջ
Ի՞նչ կը տօնենք Փետրուար 14-ին
Սուրբ Սարգիս Զօրավար
Աղօթք Սուրբ Սարգիսին
Առաջաւորաց Պահք

Կարճ Լուրեր Կիրակնօրեայէն
Այցելութիւն՝ Oratoire Saint-Joseph-ի
թանգարանը Էջ 4

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Ս. Պատարագին Էջ 5-7
Գ. Բուն Պատարագ

Համացանցէն քաղուած Էջ 8

Եզակի Գիրեր Էջ 9

Պալատականին Որդիին Բժշկութիւնը
Էջ 10

Հաւատքի Աստիճաններ Էջ 11

Յիսուս եւ Նիկողեմոս Էջ 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 13-16

Փետրուար 2011 (ԺԸ տարի թիւ 6)



S.....Տեառնընդառաջ

Խաչքարի հեղինակ՝
Ժողովրդական վարպետ,
ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամսուան Համարը

«.....որովհետեւ աչքերովս տեսայ Փրկիչը,
որ զրկեցիր բոլոր ժողովուրդներուն, որպէս
լոյս հեթանոսները լուսաւորելու...»:

Ղուկաս 2.30-31

Փետրուար ամսուան բացատրական տօնացոյց

Շրթ. 5	Յիշատակ՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդիներուն եւ թոռներուն
Եշ. 8	Յիշատակ 12 մարգարէներուն. Ովսէա, Ամոս, Միքա, Յովէլ, Աբդիա, Նաւում, Ամբակում, Յոֆան, Սոփոնիա, Անգէ, Զաքարիա, Մաղաքիա
Շրթ. 12	Սբ. Թադէոս Առաքելի եւ Սանդուխտ կոյսի
Բշ. 14	Տեառնընդառաջ, Ա. օր Առաջաւորաց պահքի
Շրթ. 19	Սբ. Սարգիս Զօրավար, Որդին Մարտիրոս եւ 14 զինուորներ
Բշ. 21	Սբ. Ատովմաց Զօրավարացն
Գշ. 22	Սբ. Սուքիասեանց Վկայիցն
Եշ. 24	Սբ. Ոսկեանց Քահանայիցն
Շրթ. 26	Սբ. Սահակ Պարթեւ

Գիտէի՞ր թէ

Տեառնընդառաջի մասին կարելի է կարդալ միայն Ղուկասի աւետարանին մէջ: Մատթէոս, Մարկոս եւ Յովհաննէս Սուրբ աւետարանիչները չեն ակնարկած Յիսուսի կեանքի այս դէպքին:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ Ը

Հայաստանեայց Եկեղեցւոյ տէրունի տօներէն մէկն է: Ան յիշատակնէ այն օրուան երբ 40 օրուայ մանուկ Յիսուսը բերուեցաւ տաճար ու ընծայուեցաւ Աստուծոյ: Տեառնընդառաջը անշարժ տօն մըն է, եւ ամէն տարի կը տօնենք Սուրբ Ծնունդէն 40 օրեր ետք, Փետրուար 14-ին: Տեառնընդառաջի օրը, եկեղեցիէն ներս պատարագ կը մատուցուի, Եկեղեցիին 4 անկիւնները կը կարդացուին աւետարանի համապատասխանող հատուածներ: Կը յիշատակուին նաեւ ծերունի Սիմոնն ու Աննա մարգարէուհին, որոնք Յիսուսի տաճար ընծայման ներկայ գտնուեցան:

Ի՞նչ կը տօնենք Փետրուար 14-ին

Երբ մեր շուրջը St. Valentine կը տօնուի, մենք պետք է յիշենք թէ Հայ Եկեղեցին այդ օրը Տեառնընդառաջ կը տօնէ: Տեառնընդառաջը, 40 օրուայ Յիսուս Մանուկին տաճար տարուելու եւ Աստուծոյ նուիրուելու օրն է: Նախորդող զիշերը, 13-ին, եկեղեցւոյ մէջ արարողութիւն տեղի կ'ունենայ, կրակ կը վառեն եկեղեցւոյ բակին մէջ ու հաւատացեալներ իրենց մոմերը վառելով տուն կը տանին:



Յիշատակութիւն՝ Սուրբ Սարգիս Զօրավարի Փետրուար 19



Վարդանանցէն
12 օրեր առաջ եղող
Շաբաթ օրը, Հայ
եկեղեցին նուիրած է
Ս. Սարգիս Զօրավարի
յիշատակին:
Ս. Սարգիս,
Կապադոկիոյ
Գամիւրք գաւառէն
էր. քաջ ու առաքինի
զինուորական մը,
որ զօրապետի
աստիճանին հասաւ:
Համարձակութեամբ
կը քարոզէր
Աւետարանը եւ
կը կործանէր
բազինները: Երբ
Յուլիանոս կայսրը,
որ քրիստոնէութիւնը

ուրացած էր, գահ բարձրացաւ, Սարգիս,
իր Մարտիրոս որդիին հետ Հայաստան
ապաստանեցաւ: Տիրան թագաւորի մօտ
եւ ժամանակ մը հոն մնալէ ետք անցաւ
Պարսկաստան, պարսից Շապուհ թագաւորին
մօտ՝ ծառայելով զինուորական ասպարէզին
մէջ:

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին
ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ
գտնուող պարսիկ զօրքին վրայ. անոնց մէջէն
քրիստոնէութեան դարձողներ եղան:

Այս պարագան հետզհետէ ուշագրաւ
դառնալով, Սարգիս եւ իր զաւակը արքայական
հրաւեր ստացան զոհ մատուցանելու
արքունի մեհեանին մէջ: Սակայն, Սարգիս
նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ անարգելու
կոտորէրը: Առ ի հետեւանք իրենց յանդուգն
կեցուածքին՝ զօրավարն ու իր որդին մահուան
դատապարտուեցան:

Իր պարսիկ զինուորներէն տասնըչորս
(14) անձեր որոնք մինչեւ վերջ հաւատարիմ
մնացեր էին իրեն, առին Սարգիսի մարմինը
եւ մաքուր զգեստներով պատեցին:

Բայց թագաւորին հրամանով իրենք եւս
զլխատուեցան ու իրենց նահատակութիւնը

եւս կը յիշատակուի Սուրբ Սարգիսի եւ անոր
Մարտիրոս զաւակին յիշատակին հետ, ամէն
տարի:

Գիտէի՞ր թէ

Ս. Սարգիսի տօնը Հայաստանի
մէջ ընդունուած է նշել ոչ միայն
եկեղեցական ծիսակատարութեամբ,
այլեւ ժողովրդական սովորութիւններով:

Ս. Սարգիս Զօրավարը
երիտասարդներու արագահաս
բարեխօսն է եւ սիրոյ երազանքը
իրականացնող սուրբը: Ըստ
աւանդութեան, Ս. Սարգիս պէտք է
հրեշտակներու ուղեկցութեամբ անցնի
եւ տանիքին վրայ դրուած ալիւրին մէջ
ձգէ իր սպիտակ ձիուն պայտին հետքը
որպէսզի այդ տարի իրականանայ
հաւատացեալի երազանքը:

Աղօթք Սուրբ Սարգիսին

Բարձրեալէն գերագոյն պատիւ
ստացար Քրիստոսի քով բարեխօսելու
համար եւ դարձար մեր խնդրանքները
կատարող, աղօթքները լսող, սատանաները
հալածող, ով արագահաս Սուրբդ
Սարգիս:

Ցաւերով լեցուն մարդկային
կեանքին զօրեղ բժիշկ. արտասուքը
սրբող, նեղութեան մէջ ինկածներու
վիշտերը դիւրութեամբ մեղմացնող,
գերիները ազատող, ով արագահաս
Սուրբդ Սարգիս:

Դուն որ ամէն տեղ կը յիշուիս ու
կը փառաբանուիս, որովհետեւ գեղեցիկ
եւ բարի անուն ես, հաւատացեալներուն
շուրթերուն համար քաղցրահամ պտուղ:
Գիշեր ու ցերեկ յոյսով քեզ կը կանչենք,
արագահաս Սուրբդ Սարգիս, բարեխօս
եղի՛ր, Քրիստոսի քով, մեր անձերուն
համար:

Առաջաւորաց Պահք

Այս պահքը սահմանուած է Ս. Գրիգոր լուսաւորչի կողմէ եւ յատուկ է միայն Հայ եկեղեցւոյ: Կը սկսի Մեծ պահքէն երեք (3) շաբաթ առաջ եւ հին ժամանակ արտօնուած էր ուտել միայն աղ ու հաց: Այդ օրերուն արտօնուած չէր Պատարագ մատուցել, եկեղեցւոյ մէջ ընթերցել Սուրբ Գիրք կամ Աւետարան:

Տարբեր մեկնութիւններու համաձայն, այս պահքը «Առաջաւորաց» է կոչուեր, իբրեւ ազդարար Մեծ պահքի կամ, իբրեւ Հայոց պահք՝ նշանակելու Հայաստանի հոգեւոր լուսաւորութիւնը:

Առաջաւորաց պահքի 5-րդ օրը (Ուրբաթ) կը յիշատակենք Յովնան մարգարէի քարոզութիւնն ու Նինուէ քաղաքի ապաշխարութիւնը, բայց ոչ իբրեւ Յովսէան մարգարէի տօն, այլ իբր մեծ ապաշխարութեան ու ծոմապահութեան օրինակ:

Առաջաւորաց պահքի խորհուրդը աղամական մեղքէն մարդկային 5 զգայարանքներու սրբում է: Հին եկեղեցւոյ մէջ նաեւ սովորութիւն կար որ չափահասները մկրտութենէն առաջ 5 օր ծոմ պահեն: Նոյնպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ սահմանեց որ Տրդատ թագաւոր եւ իր պալատականները 5 օր ծոմ պահեն իրենց մկրտութենէն առաջ, որու շնորհիւ փրկուեցան իրենց այսահարութենէն:

Միջնադարուն, առաջաւորաց պահքը դիւրիմացաբար անուանուեր է Ս. Սարգիսի պահք՝ որովհետեւ Հայ եկեղեցին առաջաւորաց պահքին յաջորդող շաբաթ օրը կը տօնէ Ս. Սարգիսի տօնը:

Հայ մատենագիրներու վկայութեամբ, Առաջաւորաց պահքը գոյութիւն ունեցեր է նաեւ յոյներու ու լատիններու մօտ:


Կարճ Լուրեր Կիրակնօրեայէն

Կիրակի՝ 9 Յունուար 2011-ին Կիրակնօրեայ Դպրոցը, մասնակցութեամբ կարգ մը ծնողներու, այցելեցին Oratoire Saint-Joseph-ի թանգարանը, ուր կը ցուցադրուին նաեւ տարբեր երկիրներու մսուրները:



Բացատրություն՝ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Պատարագին «շար. 4»

Կը շարունակենք ներկայացնել Բերիոյ թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ Գերշ. Տ. Սուրբն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. Պատարագ»ի բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկէն:



Ս. Պատարագի արարողութեան 4 մասերը.

Ինչպէս անցեալ անգամ նշեցինք, Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ.

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում

Անցեալ թիւով ներկայացուցինք «Ճաշու Պաշտօն»ը, իսկ այս թիւով պիտի ներկայացնենք «Բուն Պատարագ»ը:

3. ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱԻԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ՊԱՏԱՐԱԳ

Սարկաւազը խորանէն բարձրաձայն կը յայտարարէ.

«Ո՛չ մէկ երախայ (չմկրտուած), ո՛չ մէկ թերահաւատ, ո՛չ մէկ ապաշխարութեան մէջ գտնուող եւ ոչ մէկ հոգիով ինքզինք մեղաւոր զգացող թող մօտենայ աստուածային խորհուրդին: Հաւատացեալները պատրաստ են ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳին:

Խորախորհուրդ պահն է, որ կը սկսի, դպիրներ երկիւղածութեամբ կ'ոգեկոչեն փրկագործ խորհուրդին ծաղկումը, կը բացայայտեն, թէ ինչպիսի վեհ եւ նուիրական խորհուրդ մըն է, որ պիտի սկսի, եւ որ պիտի սրբագործէ եկեղեցի դարձած ողջ հաւատացեալներուն համախմբումը, եւ կ'երգեն անոնք, «Մարմին Տէրունական.....»:

Ողջոյն տուողը կ'ըսէ.

- «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»:

Ողջոյն ստացողը կը պատասխանէ.

- «Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի»:

Երախայ = չմկրտուած



«Տերունական մարմինը փրկչական արինը մեր դիմացն է: Երկնային աներեւոյթ զօրութիւններ կ'երգեն եւ անդադրում բառերով կ'ըսեն՝ սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութիւններու»:

Աւագ սարկաւազը բուրվառակիի ընկերակցութեամբ երկիւղածութեամբ կը մօտենայ խորհրդարանին՝ կատարելու համար վերաբերումը. բայց նախ դպիրներուն ուղղելով իր խօսքը՝ կ'ըսէ.

«Ո՛վ դպիրներ, սաղմոս ըսէք եւ քաղցրաձայն հոգեւոր երգեր երգեցէք, մեր Տիրոջ՝ Աստուծոյ.»:

Եւ դպիրները կը սկսին երգել յաւուր պատշաճի «ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆ»ը:

ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆ

Աւագ սարկաւազը խնկարկելէ ետք, հանդիսաւորութեամբ կ'առնէ Ս. Սկիիը եւ խորանին ետեւէն դառնալով կը բերէ ու կը յանձնէ զայն Պատարագիչ քահանային ըսելով.

«Ո՛վ իշխաններ, բացէ՛ք ձեր դռները, թող բացուին յաւիտենականութեան դռները, որպէսզի ներս մտնէ մեծափառ թագաւորը»:

Քրիստոս որպէս երկնային թագաւոր եւ յաւիտենական Քահանայ կու գայ փառաւորապէս բազմելու Ս. Սեղանին վրայ: Կու գայ վերստին իր ուխտը կնքելու, երկինք եւ երկիր կամրջելու, կու գայ դարձեալ եւ միշտ պատարագուելու եւ մարդոց մեղքերու փրկութեան համար տալու իր Մարմինն ու Արինը:

Ս. Պատարագի ընծաները՝ ՆՇԽԱՐԻՆ ու ԳԻՆԻՆ Ս. Սեղանին վրայ են. պատարագիչ քահանան, որպէս մաքրութեան նշան, դարձեալ ձեռքերը կը լուայ, որովհետեւ իր մատները պիտի հպին Փրկչական Մարմնոյն եւ Արեան:

Ժողովուրդը եւս իր հոգին պէտք է ցօղուէ, որպէսզի պայծառ մտքով եւ հաւատքով, մաքուր սրտով, սրբութեամբ եւ երկիւղով ընկալէ խորհուրդը, սարկաւազը խորանէն հետեւեալ դաստիարակիչ թելադրութիւնները ժողովուրդին կ'ուղղէ.

«Հաւատքով, սրբութեամբ եւ ահով կանգնինք Աստուծոյ Սուրբ Սեղանին առջեւ: Կանգնինք առանց տարակուսանքի եւ գայթակղութեան, առանց նենգութեան եւ խորամանկութեան, առանց հիասթափութեան եւ խաբէութեան, առանց երկմտութեան եւ թերահաւատութեան, այլ ուղիղ վարմունքով, պայծառ մտքով, անխաղախ սրտով, կատարեալ հաւատքով, սիրով լեցուած, ամէն տեսակի բարեգործութիւններով ճոխացած, աղօթքի կանգնինք Աստուծոյ Սուրբ Սեղանին առջեւ, որպէսզի մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի յայտնութեան եւ երկրորդ գալստեան օրը արժանանանք անոր ողորմութեան շնորհներուն»:

Աստուածային սիրոյ ճառագայթումին ներքեւ՝ հաւատացեալները կ'ըմբռնան

Սուրբ Պատարագի ընթացքին, ուր պատուէր կայ ծնրադրելու, պատշաճ է ծնրադրել, սակայն եթէ որեւէ ֆիզիքական պատճառ կայ չծնրադրելու, յարմար է ոտքի կանգնիլ՝ յարգալից եւ գլուխը խոնարհած:

Աստուածորդուն լոյս ներկայութիւնը. Քրիստոս է՝ որ կը յայտնուի. սուրբ սեղանէն Քրիստոսի Մէհր տակաւ կը տարածուի եկեղեցւոյ մէջ եւ կը համակէ ողջ հաւատացեալ ժողովուրդը:

«Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան...»

«Զիրար ողջունեցէք սուրբ համբոյրով, եւ անոնք որոնք պատրաստ չեն հաղորդուելու Աստուածային խորհուրդով, թող դուրս ելլեն եկեղեցիէն եւ գաւիթին մէջ աղօթեն»:

Սարկաւազը, Պատարագիչ քահանային ողջոյնը ստանալով, վար կ'իջնէ եւ զայն կը փոխանցէ Աւագերեցին, ըսելով.

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», այսինքն՝ Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ: Իսկ ստացող եկեղեցականը կը պատասխանէ.

«Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»: Այսինքն՝ Օրհնեալ թող ըլլայ Քրիստոսի յայտնութիւնը:

Այսպէս ամէն մէկ հաւատացեալ, որ կը ստանայ ողջոյնը, պարտի զայն փոխանցել կողքին կեցող հաւատացեալին, միշտ կրկնելով ողջոյնի ստացման եւ փոխանակման վկայախօսութիւնը:

«Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, նոյն ինքն Աստուած եկեղեցւոյ մէջ բազմեցաւ:

Խաղաղութեան ձայնը հնչեց եւ Աստուծոյ ողջոյնը տարածեց:

Եկեղեցին մէկ անձ եղաւ, համբոյրը որպէս միութեան խորհրդանիշ դարձաւ:

Թշնամութիւնը հեռացաւ, ընդհանուրին վրայ սերը սփռուեցաւ:

Արդ, ո՛վ պաշտօնեաներ, ձեր ձայները բարձրացնելով՝ միաբերան օրհներգեցէք միասնական Աստուածութիւնը, որուն սերովբէներն են որ կը սրբաբանեն»:



Oratoire Saint-Joseph-ի թանգարանը, Կիրակի՝ 9 Յունուար 2011

Համացանցէն Քաղուած Ոտնահետքեր

Մարդ մը խոր քունի մէջ երազ սկսաւ տեսնել:

Ան տեսաւ որ աւագոտ ծովեզերքին վրայ կը քալէր Յիսուսի հետ, իսկ երկինքին մէջ կը տողանցէին իր կեանքի տարբեր հանգրուաններու նկարները: Բոլոր նկարներուն մէջ ան կը տեսնէր չորս ոտնահետքեր, երկուքը իրը իսկ միւս երկուքը Յիսուսին:

Երկար դիտելէ ետք, յանկարծ անդրադառնալով որ իր կեանքի ամենադժուար օրերուն միայն երկու ոտնահետքեր կ'երեւէին աւագին վրայ: Նեղուած, ջղայնացած ու վրդոված Յիսուսի ըսաւ՝ Տէր, դուն չըսի՞ր որ եթէ քեզի հետեւիմ, Դուն ինծի բնաւ առանձին պիտի չձգես, հապա ինչո՞ւ իմ ամենադժուար օրերուս հետս չես եղած:

Յիսուս այսպէս պատասխանեց «Ես քեզ չափազանց կը սիրեմ. Քու այդ դժուար ու տառապելի օրերուդ, քեզ իմ ձեռքերուս մէջ գրկած կը քալէի...»:

=====

Խրատներ՝	* Խօսելէ առաջ	- Մտիկ ըրէ՛
	* Գրելէ առաջ	- Մտածէ՛
	* Ծախսելէ առաջ	- Շահի՛ր
	* Աղօթելէ առաջ	- Ներէ՛
	* Նեղացնելէ առաջ	- Զգա՛
	* Ատելէ առաջ	- Սիրէ՛
	* Լքելէ առաջ	- Փորձէ՛

Քշած ատենդ՝



Ո՞րն է ճիշդ պատասխանը Յունուար ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

Հրահանգը, աստղը, առաջնորդեց,
երկրպագեցին, ոսկի, կնդրուկ, զմուռ,
երագի

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. Ս. Վահան Գողթնացի 2. գ. Յունուար
22 3. ա. Յունուար 6 4. ա. Յունուար 6-ի
Ս. Պատարագէն ետք 5. ա. Յունուար 6 6.
ա. Յունուար 6 7. բ. Զուր 8. գ. Յովհաննէս
Մկրտիչ 9. ա. Խթում 10. բ. Յունուար 5-ի
երեկոյեան

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. 13 2. ոսկի, կնդրուկ, զմուռ 3. Հերովդէս
4. ա. Օգոստոս բ. 8 ա. Ս. Ծնունդ 6.
Աղանիի 7. Դուն ես իմ սիրելի Որդիս ,
որուն ես հաճեցայ 8. բ. որ յայտնեցար վասն

մեր 9. ա. 325 բ. Նիկիա 10. գ. Ղուկաս

Երկրորդականի անկիւն

1. ա. Յունուար 6 2. բ. 451 Քաղկեդոնի
ժողովին 3. Ս. Վահան Գողթնացի
4. ա. Աստուածայայտնութիւն, բ.
Անուանակոչութիւն, գ. Յովհաննէս
Կարապետ, դ. Ս. Սարգիս, ե. Ղեւոնդեանց,
գ. Վարդանանց, է. Բուն Բարեկենդան
5. ա. Ս. Ծնունդ բ. Ս. Զատիկ գ.
Պայծառակերպութիւն, դ. Վերափոխում
Ս. Աստուածածնի ե. Խաչվերաց 6. մեծ,
յայտնեցաւ, Հովիւք, աւետիս 7. Ծնաւ,
Բեթլեհէմ, օրհնեցէք, մարմնացաւ,
անբաւելին, խանձարուրս, մեկնելով, այրին
8. Նախիջեւան 9. չմկրտուած 10 Ս. Գրիգոր
Լուսաւորիչ

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

է	ը	դ	բ	թ	ա	ե	զ	գ
զ	ե	բ	ը	է	գ	դ	ա	թ
ա	զ	թ	է	դ	գ	բ	ը	է
թ	դ	գ	զ	բ	ը	է	ե	ա
բ	ա	է	թ	զ	ե	զ	դ	ը
ը	զ	ե	դ	ա	է	թ	բ	զ
է	թ	ա	է	ը	բ	զ	զ	դ
դ	բ	ը	զ	զ	թ	ա	է	ե
զ	է	զ	ա	ե	դ	ը	թ	բ

բ		է		ը		զ	է	
		ը					ա	զ
			է	դ	թ			
զ			ը			ա	թ	դ
	ա		թ		է		է	
թ	բ	զ			ա			ը
			բ	է	է			
ա	զ					է		
	է	թ		ա		ը		զ

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ
որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . ինեակ քառակուսիի մէջ:

Պալատականին Որդիին Բժշկութիւնը
Յովհաննէս 4:43-54

Յիսուս Գալիլիայի Կանա քաղաքը եկաւ:

Պալատական մարդ մը կար, որուն որդին հիւանդ էր, Կափառնաումի մէջ:

Ճիշդ շարքով թուագրէ հետեւեալ տողերը, ապա զանոնք ընդօրինակէ էջին վարը:

- Տղաս շատ հիւանդ է, ի՞նչ կրնամ ընել:
- Ո՞ր ժամուն ապաքինեցաւ զաւակս:
- Տէր կ'աղաչեմ Կափառնաում եկուր, որդիս մահամերձ է:
- Աչքերովս տեսայ որ Յիսուս հրաշքներ գործեց. հիմա Կանայի մէջ է, եկէք դուք ալ տեսէք:
- Գնա՛, զաւակդ ողջ է:
- Տղադ առողջացաւ:
- Մինչեւ որ նշաններ եւ հրաշքներ չտեսնէք՝ պիտի չհաւատաք:
- Ծառաներս: Արդեօք ի՞նչ լուր կը բերեն:
- Երէկ կէսօրէ ետք ժամը մէկ էր երբ տաքութիւնը գնաց:
- Ես Կանա պիտի երթամ եւ Յիսուսին հոս պիտի բերեմ: Զաւակիս միակ յոյսն է Ան:
- Այո, ճիշդ այն ժամուն որ Յիսուս ըսաւ, «Գնա՛, զաւակդ ողջ է»:

Հաւատքի աստիճաններ

Աստիճաններուն վրայ կ'երեւի պալատականին աճող հաւատքը:
Հետեւելով Յովհաննէս 4:43-54 ին, առջեւի բաժիններուն վրայ գրէ թէ ինչպէ՞ս
պալատականը գործածեց իր հաւատքը:

ա. _____


1. Կը հաւատար որ Յիսուս կրնար բժշկել:

բ. _____

2. Հաւատաց Յիսուսի խոստումին:

գ. _____

3. Հաւատաց որ Յիսուս հրաշք կատարած է:



Յիսուս եւ Նիկողեմոս Յովհաննէս 3:1-21

Խաչ մը դիր ճիշդ պատասխանին առջեւ:



1- Նիկողեմոս անունով Փարիսեցի մարդ մը կար:

- . Ան աղքատ էր
- . Ան երիտասարդ էր
- . Ան Հրեայ իշխան էր



2 - Ուզեց Յիսուսի քով երթալ

- . Որոշեց գիշերով երթալ
- . Որոշեց նամակ մը գրել Յիսուսի
- . Որոշեց մոռնալ եւ չերթալ



3 - Երբ Յիսուսի մտիկ կ'ընէր


- . Ան քնացաւ
- . հասկցաւ որ Աստուած չկայ
- . հասկցաւ թէ Աստուած որչափ կը սիրէ զինք
(Աստուած այնքան սիրեց աշխարհը որ մինչեւ իսկ իր
միածին Որդին տուաւ: հ.16)

4 - Հասկցաւ նաեւ ...

- . Որ Յիսուս Աստուծոյ Որդին է
- . Որ Յիսուս ձկնորս է
- . Որ Յիսուս շատ ընկերներ ունի

5 - Երբ Նիկողեմոս տուն գնաց ...

- . Մոռցաւ Յիսուսի ըսածը
- . Յիսուսի հետեւորդ եղաւ
- . Փարիսեցիներու հանդիպեցաւ



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի տաճար
ընծայումը
«Տեառնընդառաջ
Փետրուար 14»

Ամբողջացո՛ւր
ըստ Ղուկաս 2.22-
32-ի

Տիրոջ, նուիրուի,
տատրակ, աղանիի,
Սիմոն, Սուրբ Հոգին,
Օծեալը, Յիսուսը,
գոհաբանեց

Յովսէփն ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին -----
ընծայելու համար որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պէտք
է ----- ամէն արու զաւակ, որ մօր առաջին զաւակն է». ինչպէս
նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն զոհ մատուցանելու զոյգ մը -----
կամ ----- երկու ձագ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ ----- անունով մարդ մը
կ'ապրէր: Սիմոն արդար եւ աստուածավախ մարդ մըն էր, -----
--- իրեն հետ էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ ----- չտեսած
պիտի չմեռնէր: Արդ, Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անիկա տաճար գնաց:
Երբ ծնողքը մանուկ ----- տաճար բերին, որպէսզի կատարեն
այն ինչ որ Օրէնքը կը պահանջէր մանուկին համար, Սիմոն իր գիրկը
առաւ փոքրիկը եւ ----- զԱստուած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Փետրուար 19ին.

- ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետին
- բ. Ս. Արգար թագաւորին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Սարգիսին

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.
Թադէոս Առաքելի եւ Ս. Սանդուխտ
Կոյսի յիշատակը.

- ա. Փետրուար 6
- բ. Փետրուար 12
- գ. Փետրուար 18
- դ. Փետրուար 24

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Յիսուսի տաճար նուիրուելու տօնը.

- ա. Փետրուար 12
- բ. Փետրուար 14
- գ. Փետրուար 16
- դ. Փետրուար 18

4.- 2012-ին ե՞րբ տեղի պիտի ունենայ
Տեառնընդառաջը.

- ա. Փետրուար 30
- բ. Փետրուար 14
- գ. Փետրուար 29
- դ. Փետրուար 28

5.- 1999-ին ե՞րբ տօնեցինք Յիսուսի
տաճար նուիրուելու տօնը.

- ա. Փետրուար 30
- բ. Փետրուար 14
- գ. Փետրուար 29
- դ. Փետրուար 28

6.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ
Սարգիսը.

- ա. Փետրուար 6
- բ. Փետրուար 19
- գ. Փետրուար 18
- դ. Փետրուար 24

7.- Բուն Պատարագի ընթացքին
ողջոյն տուողը ի՞նչ կ'ըսէ.

Քրիստոս ի --- մեր -----:

8.- Բուն Պատարագի ընթացքին
ողջոյն ստացողը ի՞նչ կ'ըսէ:

Օրհնեալ է -----

-----:

9.- Վարդանանցը ընդհանրապէս
Սուրբ Սարգիսէն 12 օր ետք կ'ըլլայ:
Այս տարի ե՞րբ է Վարդանանցը:
(Սուրբ Սարգիսը Փետրուար 19-ին է,
 $19 + 12 = ?$, Փետրուարը քանի՞ օր է):

----- --

10.- Սուրբ Սարգիսին ձին ի՞նչ գոյն
է:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք Փետրուար 5ին.

- ա. Ս. Գրիգոր Լուսաւորչի որդիներուն եւ թոռներուն
- բ. Ս. Աբգար թագաւորին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Սարգիսին

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք 12 մարգարէներուն տօնը.

- ա. Փետրուար 8
- բ. Փետրուար 16
- գ. Փետրուար 28
- դ. Փետրուար 24

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Տեառնընդառաջը.

- ա. Փետրուար 12
- բ. Փետրուար 14
- գ. Փետրուար 16
- դ. Փետրուար 18

4.- 2011-ին ե՞րբ պիտի տօնենք Ս. Ոսկեանց Քահանայից տօնը.

- ա. Փետրուար 27
- բ. Փետրուար 24
- գ. Փետրուար 29
- դ. Փետրուար 28

5.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ոսկեանց Քահանայից տօնը.

- ա. Փետրուար 30
- բ. Փետրուար 14
- գ. Փետրուար 24
- դ. Փետրուար 28

6.- Ի՞նչ կը կոչուի Սուրբ Սարգիսի նախորդող 5 օրուայ պահքը.

Ա-----Գ Պահք

7.- Հին Կտակարանի ո՞ր մարգարէին գիրքը կը կարդացուի վերեւ յիշուած պահքին 5րդ (Ուրբաթ) օրը:

- ա. Աբդիայի,
- բ. Նաւումի,
- գ. Ամբակումի,
- դ. Յովսանի:

8.- Երախայ ի՞նչ կը նշանակէ:

9.- Վարդանանցը ընդհանրապէս Սուրբ Սարգիսէն 12 օր ետք կ'ըլլայ: Այս տարի ե՞րբ է Վարդանանցը: (Սուրբ Սարգիսը Փետրուար 19-ին է, $19 + 12 = ?$, Փետրուարը քանի՞ օր է):

----- --

10.- Տարուան ո՞ր չորս (4) օրերը ճաշու Աւետարան չի կարդացուիր.

- ա. Մեծ պահքին
- բ. Պգոթիկ պահքին
- գ. Առաջաւորաց պահքին
- դ. Տարուան բոլոր օրերուն ճաշու Աւետարան կը կարդացուի:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ի՞նչ էր այն ծերունիին անունը որ տաճարին մէջ Յիսուս մանուկին կը սպասէր Տեառնընդառաջին:

2.- Սուրբ Սարգիսէն քանի՞ օր ետք Վարդանանց է.

ա. 8

բ. 16

գ. 28

դ. 12

3.- Սուրբ Սարգիսէն 7 օր ետք ո՞ր սուրբին տօնն է:

4.- Վարդանանցէն 2 օր առաջ ի՞նչ կը տօնենք:

Սբ. -----

5.- Ո՞վ սահմանեց Առաջաւորաց պահքը:

Սբ. -----

6.- Ըստ հրեական օրէնքին, ո՞վ պէտք էր Տիրոջը նուիրուէր:

Ամէն ----- զաւակ, որ մօր
----- զաւակն է:

7.- Հայերու ո՞ր սուրբը կը համապատասխանէ Հիւսիս Ամերիկայի St. Valentineին: Այս տարի ե՞րբ կը տօնենք իր տօնը:

ա. Սբ. -----

բ. Փետրուար --

8.- Երախայ ի՞նչ կը նշանակէ:

9.- Ամբողջացո՞ւր էջ 11ի հարցումները:

1.-----

2.-----

3.-----

10.- Ամբողջացո՞ւր սարկաւագին նախադասութիւնը, որ ազդանշան է Բուն Պատարագը սկսելու:

Մի -- երախայից -----

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG-ը 10 տարեկան

Այս թիւով.....

Մարտ ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 2-4

Ղեւոնդեանք

Սուրբ Թէոդորոս Զօրավար

Ամէն օր Վարդանանց է

Մեծ Պահքի Կիրակիները

Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը Էջ 4

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Ս. Պատարագին Էջ 5-6

Խորան եւ Պատարագի Սուրբ
Սեդան

Նորահրաշ՝ Սբ. Վարդանանց
շարական Էջ 7

Համացանցէն քաղուած Էջ 8
Ձկնորսը
Յիսուս 5,000-ը կը կերակրէ

Եզակի Գիրեր Էջ 9

Սամարացիները Յիսուսի մասին Էջ 10

Հարիւրապետի ծառային բժշկութիւնը Էջ 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 13-16

Մարտ 2011 (ԺԸ տարի թիւ 7)



Վ...Վարդանանք

Խաչքարի հեղինակ՝

Ժողովրդական վարպետ,

ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամսուան Համարը

«Ո՞վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Քրիստոսի
սէրէն. նեղութի՞ւնը, անձկութի՞ւնը,
հալածա՞նքը, սո՞վը, մերկութի՞ւնը, վտա՞նգը
կամ սո՞ւրբը»: Հռոմայեցիս 8.35

Մարտ ամսուան բացատրական տօնացոյց

Գշ. 1	Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն
Եշ. 3	Սրբոց Վարդանանց զօրավարացն եւ 1036 վկայիցն
Շբթ. 5	Կոստանդնուպոլսոյ 150 Հայրապետացն
Կիր. 6	Մեծ Պահքի Ա. Կիրակի՝ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ
Բշ. 7	Ա. օր Մեծ պահքի
Շբթ. 12	Սբ. Թէոդորոս Զօրավար
Կիր. 13	Մեծ Պահքի Բ. Կիրակի՝ ԱՐՏԱՔՍՄԱՆ
Կիր. 20	Մեծ Պահքի Գ. Կիրակի՝ ԱՆԱՌԱԿԻՆ
Շբթ. 26	Ս. Յովհաննէս Երուսաղէմցի, Ս. Յովհաննէս Օձնեցի, Ս. Յովհաննէս Որոտնեցի, Ս. Գրիգոր Տաթեւացի
Կիր. 27	Մեծ Պահքի Դ. Կիրակի՝ ՏՆՏԵՍԻՆ
Դշ. 30	ՄԻՋԻՆՔ



ՂԵՒՈՆԴԵԱՆՔ

Յովսէփ կաթողիկոս, Սահակ եւ Թաթիկ եպիսկոպոսներ, Ղեւոնդ, Մուշէ, Արշէն, Սամուէլ քահանաներ, Քաջաջ եւ Աբրահամ սարկաւազներ եւ այլ հոգեւորականներ Ղեւոնդեանք անուան տակ կը ձանչցուին:

Ղեւոնդեանց քահանայից տօնը կը տօնուի Վարդանանց տօնի նախորդող Երեքշաբթի օրը, որ նաեւ տօնն է բոլոր քահանաներուն:

Պարսից Յազկերտ Բ. թագաւորը, Վարդանանց պատերազմէն ետք, Հայաստանի մէջ ապստամբական նոր խլրտումներ կանխարգիլելու համար, կարգ մը կասկածելի նախարարներու հետ հոգեւորականներն ալ արգելափակեց:

454-ի Քուշնաց դէմ պատերազմի պարտութենէն ետք, Յազկերտ թագաւորը արգելափակուածներէն

իրաքանջիւրը տարբեր ձեւով սպաննեց: Ղեւոնդեանք հայ եկեղեցականութեան պարծանք ներշնչող սուրբերն են: Հայրենիքի եւ հաւատքի նկատմամբ նուիրումի գաղափարը Ղեւոնդեանք տուին իրենց անձնական օրինակով:

Սուրբ Թէոդորոս զօրավարը համաքրիստոնէական սուրբ է, որուն յիշատակութիւնը Հայ եկեղեցին կը տօնէ Մեծ պահքի առաջին շաբաթ օրը:

Ըստ վարքագիրներու ծնունդով Ամասիա քաղաքի Մարու գիւղէն էր, քրիստոնէայ բարեպաշտ ծնողներու զաւակ:

4-րդ դարու սկիզբէն Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ, ապացուցելու համար կուռքերու հնարովի և կեղծ ըլլալը, գիշերով կրակի կը մատնէ հեթանոսական Ռէա չաստուածուհիի մեհեանը: Այս արարքին համար բանտ կը նետուի և մեծագոյն չարչարանքներէն յետոյ 306թ. կը նահատակուի՝ այրուելով կրակի վրայ:

Սուրբ Թէոդորոս զօրավարը յայտնի է նաև որպէս «վիշապասպան», որ քաջութեամբ ու հաւատքով յաղթեր է հսկայ վիշապի: Օտար եկեղեցիներուն մէջ յայտնի է նաև «Դիոն» անուամբ, որ յունարէն կը նշանակէ «նորեկ» զինուոր:

Ամեն օր Վարդանանց է

Միևիուրի տարածքին ապրող բոլոր հայերուն համար ամեն օր Վարդանանց պէտք է ըլլայ, եթէ հայապահպանումի պատերազմին մէջ մեր դիմագրաւած դժուարութիւններուն յաղթելու յոյսը վառ կ'ուզենք պահել:

Իւրաքանչիւր օրուան ծագող արեւուն հետ «Ճերմակ ջարդ»ի սուրն է որ կը ճօճէ, քիչ մը եւս օտարացնելով բոլոր անոնք որոնք օրէ օր կը նուազեցնեն իրենց դիմադրականութիւնը եւ կը նօսրացնեն իրենց հայկականութիւնը, համակերպելու համար օտարութեան պայմաններուն:

Թշնամիին միջոցներն ու կարողութիւնները մեր ունեցած միջոցներուն ու կարողութիւններուն բազմապատիկն են: Մեր շարքերուն մէջ «Վասակեան» ըմբռնումի հաւատացողներուն թիւը տարուէ տարի կ'աճի: Այս բոլորին մէջ սակայն, մեր ռազմավարութիւնը պէտք է փայլ Վարդանանց շունչով սերմանուած, որպէսզի այս մաշտումի պատերազմը մենք հասցնենք Վահանեանց յաղթական եզրակափումին: Ահաւասիկ այս ռազմավարութեան հիմնաքարերը:

1. ՉԶԻԶԻԼ

Նկարագրի տէր անձ մը պէտք է գիտնայ թէ ե՞րբ պէտք է հաստատ կենայ իր կեցուածքին վրայ ու որոշէ ամեն գնով իր սկզբունքը եւ գաղափարը պաշտպանել: Ահա այդ ըրաւ Վարդան Մամիկոնեան ու մերժեց զիջիլ Քրիստոնէութենէն ըսելով «այս հաւատքէն մեզ ոչ ոք պիտի շեղէ»:

2. ՄԵՐԺԵԼ

Երբեմն մեզի պէս մտածող անձերուն թիւը քիչ կ'ըլլայ, իսկ հակառակորդներուն պէս մտածողներունը՝ շատ: Բայց թիւով մեծ խումբը կրնայ նոյնքան զօրաւոր չըլլալ, որովհետեւ նոյնքան համոզում կրնայ չունենալ եւ նոյնքան բռնու ձեւով կրնայ չհաւատալ իր գաղափարին: Ահա այսպէս է որ թէեւ հայ քրիստոնէաները թիւով նուազ էին պարսիկներէն, բայց իրենց հաւատքին մէջ աւելի զօրաւոր ըլլալով, մերժեցին ընդունիլ Յազկերտի առաջարկը:

3. ՀԱՍՏԱՏԵԼ

Վարդանի եւ իր 1036 ընկերներու նահատակումով սկսած պատերազմը աւարտեցաւ 33 տարիներ ետք իր եղբորորդի Վահան մամիկոնեանի յաղթանակով եւ 484 թուականի Նուարսակի մէջ ստորագրուած դաշնագրով: Այս դաշնագրով պարսիկները կ'ընդունէին Հայոց պայմանները.

ա. Հայաստանի ինքնավարութիւն

բ. Քրիստոնէական պաշտամունքի ազատութիւն

գ. Ատրուշաններու վերացում:

Ահա այսօր, վարդանանցէն 1,560 տարիներ ետք, մենք որքա՞ն հաւատարիմ ենք քաջ Վարդանին եւ մենք ալ մեր կարգին

1. Հաստատ կը փանք մեր Քրիստոնէական սկզբունքներուն վրայ

2. Հակառակ անոր որ մեր շուրջը շատ աւելի է թիւը անոնց որոնց հաւատամքը խոտոր է մեր Հայ Քրիստոնէայ սկզբունքներուն ու աւանդութիւններուն, եւ

3. Մենք այս բոլորին կը դիմադրենք համբերութեամբ եւ Քաջ Վարդանին պէս կ'ըսենք՝ Քանզի Հայր Մեր զՍուրբ Աւետարանն Գիտենք եւ Մայր զԱռաքելական Եկեղեցի Կաթողիկէ:

Գիտէի՞ր թէ Աւարայրի ճակատամարտով սկսած Վարդանանց պատերազմը 33 տարիներ տեւեց եւ վերջացաւ Վարդանի եղբորորդի Վահան Մամիկոնեանի յաղթանակով եւ Նուարսակի դաշնագրի ստորագրումովը 484 թուականին:

Մեծ Պահքը ունի **7 Կիրակիներ**, որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին. ահա անոնցմէ առաջին չորսը.

Ա. Բուն Բարեկենդան

Մեծ Պահքին նախորդող Կիրակին է. բարեկենդան կը նշանակէ բարի կեանք՝ աշխարհիկ իմաստով ուրախութիւն, խրախճանք, իսկ կրօնական իմաստով՝ երանելի կեանք, ինչպէս Ադամը կ'ապրէր դրախտին մէջ արտաքսուելէն առաջ:

Բ. Արտաքսման

Ադամս ու Եւան իրենց անհնազանդութեան պատճառաւ երկար չմնացին դրախտին մէջ եւ արտաքսուեցան հոնկէ: Մեզի՝ մեղաւորներուս համար Քրիստոս ապաշխարութեամբ ցոյց տուաւ փրկութեան ճամբան, եւ դրախտին արժանանալու յոյսը:

Գ. Անառակին

Այս Կիրակին կը կրէ այդ օրուան ճաշու աւետարանին հատուածին անունը: Մեծ Պահքի ընթացքին մեր ուղեւորութիւնը կը նմանի Անառակ Որդիին ապաշխարութեան յաջորդող դէպի իր հօր տանը վերադարձին:

Դ. Տնտեսին

Անառակի Կիրակիին կը յաջորդէ Տնտեսի Կիրակին որ դարձեալ Յիսուսի խօսած առակներէն մէկէն կը ստանայ իր անունը: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 16.1-13 ին մէջ: Միջինքը տեղի կ'ունենայ այս Կիրակիին յաջորդող Չորեքշաբթին:

Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը

Մարտ 6-ին Կիրակնօրեայ Դպրոցը կը տօնէ Վարդանանք եւ Բուն Բարեկենդան, երբ աշակերտները կը ծպտուին հայկական տարազներով: Այս տարուան պահքի առաջարկուած ծովապահութիւնը հետեւեալն է:

Մարտ 7-13	Ծամոն
Մարտ 14-20	Շաքար
Մարտ 21-27	Կազային խմիչքներ
Մարտ 28-Ապրիլ 3	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Ապրիլ 4-10	Կոլոհատ, տուրք
Ապրիլ 11-17	Chips
Ապրիլ 18-23	Հալկիթ

Այս տարուան պահքի ընթացքին սորվելիքները հետեւեալներն են:

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ եւ ՆԱԽԱԿԸԱՐԱՆ Ա. Գոց սորվիլ Խաչակնքել, Տէրունական Աղօթքը եւ «Հաւատով խոստովանիմ»էն համարներ:


ՆԱԽԱԿԸԱՐԱՆ Բ. Գ. Դ. Ե. Գոց սորվիլ «Հաւատով խոստովանիմ»ի առաջին 18 համարները:

ՆԱԽԱԿԸԱՐԱՆ Զ. եւ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ Գոց սորվիլ 23րդ (ԻԲ) Սաղմոսը, Նոր Կտակարանի Գիրքերու շարքը, եւ «Հաւատով խոստովանիմ»ը

Այս Մեծ Պահքի ընթացքին յիշենք նաեւ կարօտեալները եւ մեր ունեցածէն անոնց ալ բաժին հանենք:

Բացատրություն՝ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Պատարագին «շար. 5»

Կը շարունակենք ներկայացնել Բերիոյ թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ Գերշ. Ս. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. Պատարագ»ի բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առաք. Եկեղեցւոյ գրքոյկէն:



Անցեալ անգամ տեսանք թէ սարկաւազը, Պատարագիչ քահանային ողջոյնը ստանալով, վար կ'իջնէ եւ զայն կը փոխանցէ Աւագերեցին, ըսելով.

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», այսինքն Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ: Իսկ ստացող եկեղեցականը կը պատասխանէ.

«Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»: Այսինքն՝ Օրհնեալ է թող ըլլայ Քրիստոսի յայտնութիւնը:

Այսպէս ամէն մէկ հաւատացեալ, որ կը ստանայ ողջոյնը, պարտի զայն փոխանցել կողքին կեցող հաւատացեալին, միշտ կրկնելով ողջոյնի ստացման եւ փոխանակման վկայախօսութիւնը:

«Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, նոյն ինքն Աստուած եկեղեցւոյ մէջ բազմեցաւ:

Խաղաղութեան ձայնը հնչեց եւ Աստուծոյ ողջոյնը տարածեց:

Եկեղեցին մէկ անձ եղաւ, համբոյրը որպէս միութեան խորհրդանիշ դարձաւ:

Թշնամութիւնը հեռացաւ, ընդհանուրին վրայ սերը սփռուեցաւ:

Արդ, ո՛վ պաշտօնեաներ, ձեր ձայները բարձրացնելով՝ միաբերան օրհներգեցէք միասնական Աստուածութիւնը, որուն սերովբէներն են որ կը սրբաբանեն»:

Այս թիւով կ'ուզենք դադար մը առնել Ս. Պատարագի արարողութենէն եւ ներկայացնել Խորանը եւ Պատարագի Սուրբ Սեղանը:

ԽՈՐԱՆ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆ

Խորանը եկեղեցւոյ արեւելեան ծայրագոյն մասին մէջ, դասէն քանի մը աստիճաններով վեր բարձրացած բաժինն է, ուր կը մատուցուի Ս. Պատարագը:

Խորանը կառուցուած է չորս հիմերու վրայ, որոնք կը խորհրդանշեն չորս աւետարանիչները: Աջին եւ ձախին, երկու սիւներուն միջեւ, բացուած կ'ըլլան փոքր խոռոչներ, վարագոյրով գոցուած. երբ երեսդ դէպի խորանին է դարձած, աջ խոռոչին մէջ կը պահուի միւռնը իսկ ձախ խոռոչին մէջ կը դրուի մասը, նշխարը եւ գինին: Ձախ կողմի խոռոչը պարտադիր չէ որ ըլլայ, բայց անպայման վարագոյր մը կը դնեն, դէմ դիմաց համաչափութեան համար: Այս պարագային, նշխարը, գինին ու մասը կը դնեն սուրբ Սեղանին ետեւը տեղաւորուած փոքր սեղանի մը վրայ, ուր կը դրուին նաեւ պատարագիչին ձեռքերը լուալու անհրաժեշտ իրերը:

Խորանին առաստաղէն կախուած կ'ըլլան 7 կամ 13 կանթեղներ, որոնք կը խորհրդանշեն 12 Առաքեալները եւ Յիսուսը՝ 1 կեղդոնական կանթեղով: Քիչ մը ետեւ, դարձեալ առաստաղէն կախուած կ'ըլլայ այլ կանթեղ մը, որ ձեռով վառուող ժապոն ճրագ մըն է՝ «Աստուած միշտ ներկայ է»ի իմաստով:

Խորանին ետեւը կ'ըլլայ դուռ մը, որ կ'երթայ աւանդատուն. Այդ տեղէն մուտք եւ ելք կ'ունենան խորանին վրայ ծառայողները: Գետինը ընդհանրապէս գորգով ծածկուած կ'ըլլայ: Առաջին սիւներուն աջին եւ ձախին հանգչած կ'ըլլան ծնծղաները իսկ բուրվառը, երբ գործածութեան մէջ չէ, կը տեղաւորուի խորանին ետեւի սեղանին վրայ:

Խորանին առջև, գետինը կը դրուի Ատեանի ժամագիրքը եւ Ատեանի աւետարանը: Կ'օգտագործուին վարէն, դասէն կարդալու համար, ժամերգութիւններու ժամանակ: Խորանին վրայ կարելի է տեղադրել գրակալ մը, խորանէն կարդացուելիք աւետարանը դնելու համար: Այս մէկը պայման չէ, որովհետեւ ընդհանրապէս խորանէն օգտագործուող աւետարանը նուրբ ձեռագործով մը, ձեռքով կը բռնուի:

Խորանին ճիշդ կեդրոնը պատարագի Սուրբ Սեղանն է, ուր կ'իջնէ Աստուծոյ Որդի Յիսուսը, պատարագի ընթացքին: Սուրբ Սեղանը կը բաղկանայ 7 սանդխամատերէ, որոնցմէ առաջինը Սուրբ Սեղանին գետինն է: Սուրբ Սեղանը կառուցուած կամ հիմնուած է օրհնուած եւ սրբացած Վեմին վրայ: 7 սանդխամատերը դէպի եօթներորդ երկինք բարձրացող ճամբան կը խորհրդանշեն:

Վերը, ճիշդ դիմացը գետեղուած է Մարիամ Աստուածածնի սրբանկարը, գիրկը Յիսուս Սանուկը: Երբեմն այս նկարին տեղ կը գետեղուի այն սուրբին նկարը, որուն անունը կը կրէ եկեղեցին, օրինակ՝ Սուրբ Յակոբ, Սուրբ Գեորգ, Սուրբ Յարութիւն եւլն: Այս նկարները ընդունելի են, բայց ընդհանրապէս Մարիամ Աստուածածնի ու Յիսուս Սանուկի սրբանկարը կը դրուի:

Ս. Սեղանին կառոյցը պարտադիր ոճ մը չունի, կը կառուցուի ըստ ճարտարագէտի երեւակայութեան եւ պատասխանատու մարմիններու համաձայնութեան, մէկ կամ քանի մը կաթողիկէներով (փոքր գմբէթներով): Հայկական ճարտարապետութեան մէջ կառուցուած են հաւասարապէս մէկ կամ աւելի կաթողիկէներով Սուրբ Սեղաններ:

Սուրբ Սեղանին վրայ պարտադիր պէտք է գտնուին, կեդրոնը եւ Սեղանէն դէպի վեր ուղղութեամբ ճաշու Աւետարանը, երկու կողմէն վառուող մոմերով, Սուրբ Հաղորդութեան սկիհը եւ Խաչը:

Ասոնցմէ դուրս բոլոր առարկաները ըստ կարելիութեան եւ ըստ ճաշակի կ'ըլլան, որոնք կը ձոխացնեն Սուրբ Սեղանին տեսքը եւ կու տան տօնական եւ գեղեցիկ բնոյթ: Այսպէս՝ կարելի է գետեղել ծաղկամանով ծաղիկներ, վերի սանդխամատերուն երկու կողմերը կարելի է դնել 4 ճաճանչներ, որոնց մէջ տեղաւորուած կ'ըլլան սուրբերու, հրեշտակներու կամ 7 տաղաւարները ներկայացնող նկարներէն նկարներ: Գաճանչները արծաթէ շինուած մոմակալներու կը նմանին, որոնք իրենց վերի բաժնին մէջ կլոր կամ հաւկթաձեւ շրջանակներ ունին նկարները գետեղելու համար:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարի Ս. Պատարագի Սեղանին վրայ, աջին դրուած է Բարձր Բերդի Աւետարանը, երկու կողմը վառող մոմերով: (Այս մէկը ոչ մէկ եկեղեցի ունի, ոչ ալ զայն փոխարինող քանի մը մասին կարելի է մտածել):

Սուրբ Պատարագի Սեղանի ճակատին կը դրուի «Է» գիրը, (ինչպէս Աստուած Մովսէսի ըսեր էր «Ես եմ ան: որ Է») յիշեցնելու թէ Աստուած հոս է: Այս Սեղանին առաստաղէն ալ կախուած կ'ըլլայ ձիթախողով թաթխուած պատրոյգով մշտական վառող կանթեղ մը :

Օանօթ՝ Վեմը այն օրհնուած եւ սրբացած քարն է, որ չ'երելիր եւ Սուրբ Սեղանին յատակն է, իսկ Սուրբ Սեղանին վրայի Աւետարանին դիրքը պէտք է ըլլայ Վեմին վրայ հանգչած. նոյն ձեւով ալ Սկիհը: Վեմը խաչաձեւ կ'ըլլայ, վրան գրուած վերէն վար Յիսուս Քրիստոս իսկ լայնքին՝ Որդի Աստուծոյ: Ընդհանրապէս եկեղեցիները կ'ունենան առանձին սրբացուած շարժական Վեմ մը, բացօթեայ պատարագներ մատուցելու պարագային, Սուրբ Սեղանը անոր վրայ կազմելու համար:

Եկեղեցին հիմնուած կ'ըլլայ 16 օրհնուած սիւներու վրայ, 12-ը Առաքեալները ներկայացնող, 3-ը Աւետարանիչները, (երեք, որովհետեւ Մատթէոս Աւետարանիչը նշուած է արդէն խորանին մէջ), եւ 1՝ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը խորհրդանշող:

Նորահրաշ Ս. Վարդանանց շարական

Հայաստանեայց եկեղեցին այս տարի Մարտ 3-ին կը տօնէ Վարդանանց պատերազմի յիշատակը: Պատերազմին պատմականն ու իրողութիւնները բոլորին ծանօթ են: Պարսիկներու Յագկերտ թագաւորին ուղղուած պատասխան-նամակին հետեւեալ եզրափակումը ազդու եւ գեղեցիկ ոճով կ'անփոփէ կացութիւնը:

«Այս հաւատքէն մեզ ոչ ոք չի կրնար խախտել, ոչ հրեշտակները եւ ոչ մարդիկ, ոչ սուրը եւ ոչ հուրը, ոչ ջուրը եւ ոչ ալ ոեւէ այլ դառն հարուած...»:

Ազգայնակրօնական բնոյթ ունեցող այս տօնը Հայաստանեայց եկեղեցւոյ ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող տօներէն մէկն է, որուն հերոս-զօրավարները, իրենց յանձն առած զոհողութիւններուն եւ անխախտ հաւատքին ու յանդգնութեան շնորհիւ սուրբերու կարգին անցած են, եւ այլ սուրբերու նման, անոնց փառքը հիւսուած է շարականներու միջոցաւ:

Սրբոցն Վարդանանցի շարականներէն ամենէն աւելի ծանօթն է «Նորահրաշ պսակաւոր»ը: Ան Սբ. Ներսէս Շնորհալիի ստեղծագործութիւններէն մէկն է, որ Վարդանանց կանոնի «Օրհնութիւն»ն է: Այլ խօսքով, Վարդանանցի տօնի առաւօտեան ժամերգութեան գլխաւոր, կեդրոնական շարականն է եւ առաջին կարգին երգուողը:

Գիտէի՞ր թէ «Նորահրաշ պսակաւոր» շարականը բաղկացած է տասը (10) տուներէ եւ ան ծայրակապն է «Ներսէսի Երգ»-ին: Այսինքն եթէ այս շարականի տասը տուներու առաջին տողերէն իւրաքանչիւրին առաջին գիրերը առնելով քով-քովի գետեղենք, կը կարդանք «Ներսէսի Երգ» խօսքը: Ահաւասիկ 10 տուներու սկիզբները:

Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ
առաքինեաց,
Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ
պատերազմին,
Բենական լուսով լցեալ արիացեալն
քաջն Արտակ,
Սրբափայլ զգեստուք պճնեալք ի յերկնաւոր
հանդիսադրէն,
Էական բարոյն դիտմամբ ընդդէմ մեղացն
վառեցաւ,
Ստացեալ զհաւատոյ վահան յուսոյն
զրահիւք ծածկեալ,
Ի հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր
զինքն նուէր,
Երկոքումբք հարազատովք ընտրելագոյն
նահատակօք,
Բամկական խումբ հազարաց եւ երեսնից
թիւ ընդ վեցից,
Գոհութեամբ փառատրութիւն Երրորդութեանդ
նուագեմք,....



Գ ի տ է ի ՞ր թ է Աւարայրի
ճակատամարտը տեղի ունեցաւ 451
թուականին: Տղմուտ գետի ափին:

Համացանցն Բաղուած

Ձկնորսը

Օր մը ձկնորս մը նստած ծովեզերքին, կանաչ ծառի մը շուքին տակ, հանգիստ կ'ընէր դիտելով հանդարտ ծովը եւ շնչելով մաքուր օդը:

Հարուստ վաճառական մը այնտեղէն կ'անցնէր, ձկնորսը տեսնելով մօտեցաւ անոր եւ զարմացած հարցուց՝

Վ – Ինչու՞ այդպէս անգործ նստած ես եւ բան չես ընէր

Ձկնորսը պատասխանեց.

Ձ – Արդէն բռնած եմ օրուան համար բաւարար ձուկ եւ հիմա հանգիստ կ'ընեմ:

Վ – Բայց ինչու՞ աւելի ձուկ բռնել չես փորձեր:

Ձ – Աւելի ձուկ բռնելով ի՞նչ կ'ըլլայ:

Վ – Աւելի ձուկ բռնելով զանոնք կրնաս ծախել, աւելի դրամ շահիլ եւ աւելի մեծ նաւ մը գնել:

Ձ – Եւ ի՞նչ ընեմ աւելի մեծ նաւով:

Վ – Կրնաս աւելի հեռու, խորունկ ջուրերու մէջ որսալ եւ շատ աւելի ձուկեր բռնել, զանոնք ծախել եւ աւելի դրամ շահիլ:

Ձ – Եւ ի՞նչ ընեմ աւելի շահելով:

Վ – Կրնաս բազմաթիւ նաւեր գնել, շատ մարդիկ աշխատցնել եւ շատ աւելի ձուկ բռնելով աւելի դրամ շահիլ:

Ձ – Յետոյ ի՞նչ կ'ըլլայ:

Վ – Ինծի՞ նման հարուստ վաճառական մը կը դառնաս:

Ձ – Եւ ի՞նչ կ'ըլլայ եթէ քեզի նման հարուստ վաճառական դառնամ:

Վ – Անկէ վերջ դուն կրնաս խաղաղութեամբ կեանքդ վայելել:

Ձկնորսը զարմացած վաճառականին կը նայի ու կ'ըսէ՝

Ի՞նչ կը կարծես կ'ընեմ հիմա այսպէս խաղաղ ծովեզերքը նստած:

Պատմութեան բարոյականը. Մի սպասէք վաղուան ուրախ եւ երջանիկ ըլլալու համար, այլ վայելեցէք ձեր կեանքը այսօր, ինչպէս որ է: Փառք տուէք Աստուծոյ այսօրուան ձեր ունեցած բարիքներուն համար:

«Մարդու հարստութիւնը իր ունեցածով չի չափուիր այլ իր փափաքածին եւ ուզածին քիչութեամբ»:



Ո՞րն է ճիշդ պատասխանը Փետրուար ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

Տիրոջ, նուիրուի, տատրակ, աղանիի,
Միմոն, Սուրբ Հոգին, Օծեալը, Յիսուսը,
գոհաբանեց

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. դ. Ս. Սարգիս 2. բ. Փետրուար 12 3.
բ. Փետրուար 14 4. բ. Փետրուար 14 5.
բ. Փետրուար 14 6. բ. Փետրուար 19 7.
Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ 8. Օրհնեալ
է յայտնութիւնը Քրիստոսի 9. Մարտ 3 10.
Ճերմակ

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Ս. Գրիգոր Լուսաւորչի որդիներուն
էլ թոռներուն 2. ա. Փետրուար 8 3. բ.
Փետրուար 14 4. բ. Փետրուար 24 5. բ.
Փետրուար 24 6. Առաջաւորաց Պահք 7. դ.
Յովսէփ 8. չմկրտուած 9. Մարտ 3 10. գ.

Առաջաւորաց պահքին առաջին 4 օրերը

Երկրորդականի անկիւն

1. Միմոն 2. բ. դ. 12 3. Ս. Սահակ պարթեւ 4.
Սբ. Ղեւոնդեանց 5. Ս. Գրիգոր Լուսաւորիչ
6. Ամէն արու զաւակ որ մօր առաջին
զաւակն է 7. ա. Սբ. Սարգիս բ. Փետրուար
19 8. չմկրտուած 9. ա. Գնաց Գալիլիա
Յիսուսի մօտ եւ աղաչեց որ Կափառնայում
երթայ որպէսզի իր որդին բժշկէ բ. Երբ
Յիսուս ըսաւ որ իր որդին ողջ է, մինակը
վերադարձաւ Կափառնայում գ. Երբ իր
ծառաները դիմաւորելով իրեն ըսին թէ
որդին ողջնցած է, ժամը հարցուց: 10. Մի՛
ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից,
եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից,
մերձեցի յաստուածային խորհուրդս:

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

բ	դ	ե	ա	ը	գ	զ	է	թ
է	թ	ը	ե	բ	զ	դ	ա	գ
զ	զ	ա	է	դ	թ	բ	ը	ե
զ	ե	է	ը	զ	բ	ա	թ	դ
ը	ա	դ	թ	զ	է	զ	ե	բ
թ	բ	զ	դ	ե	ա	է	զ	ը
դ	ը	զ	բ	է	ե	թ	զ	ա
ա	զ	բ	զ	թ	ը	ե	դ	է
ե	է	թ	զ	ա	դ	ը	բ	զ

	է		ա		զ		թ	
բ		զ		է		ա		է
		ա		բ		զ		
թ		զ	զ		ա	ը		բ
	բ		թ		է		ա	
ա		դ	բ		ը	թ		է
		է		թ		դ		
զ		բ		ը		է		թ
	դ		զ		բ		զ	

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ
որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր


- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Սամարացիները՝ Յիսուսի մասին

Յովհաննէս 4:13-26, 29

Յովհաննէս 4:28-30, 39-42

Կարդա՛ համարները եւ գրէ թէ ինչ կը յայտնաբերեն Սամարացի կիներն ու քաղաքի Սամարացիները Յիսուսի մասին:



Յիսուս եւ Սամարացի Կինը աւելի լաւ ըմբռնելու համար քանի մը ծանօթութիւններ տանք այդ շրջանի մարդոց ապրելակերպի մասին:

Ք.Ա. 5-րդ դարուն, Սամարացիները հրէութենէ արտաքսուած էին եւ իրենց առանձին տաճարը շինած՝ Գարիզիմ լեռան վրայ, հին Սիւքեմ քաղաքին մօտիկը:

Հրեաները Սամարացիներուն հետ երբեք չէին յարաբերիր: Հրեաները Սամարացիներուն գործածած անօթները չէին գործածեր, ծիսականօրէն չպղծուելու համար:


Սամարացիները, Հին Կտակարանի միայն հինգ գիրքերը կը ճանչնային: Գարիզիմ լեռն էր իրենց պաշտամունքային կեդրոնը եւ ո՛չ թէ Երուսաղէմի տաճարը:

Յիսուս համակրանքով խօսեցաւ Սամարացիներուն (Ղուկաս 10:25-37, Բարի Սամարացին). բան մը որ ընդունելի չէր Հրեաներուն:

Հրապարակային վայրերու մէջ Հրեայ մարդիկ կիներու հետ չէին խօսեր, իսկ այս կինը հինգ ամուսին ունեցեր էր եւ ան որո՞ւ հետ կ'ապրէր իր ամուսինը չէր: Կիները ստիպուած էին ամէն օր տաքին եւ պաղին Յակոբի ջրհորը երթալ ջուր կրելու համար:

Յիսուս նուազագոյնը նախապաշարումի երեք արգելքներէ անցաւ խօսելով Սամարացի կնոջ հետ. Բայց արդէն Յիսուս եկած էր այդ արգելքները վերցնելու:





Կ'ուզեմ օգնել ամէն կերպով՝
Ականջներովս



Աչքերովս



Բերանովս



Ոտքերովս



Եւ ձեռքերովս




Կ'ուզեմ օգնել ամէն օր:

Հարիւրապետին Ծառային Բժշկութիւնը Ղուկաս 7:1-10

Նկարներուն հետեւելով գրէ ծառային բժշկութիւնը:







Բարի եւ քաջ հովիւին վստահելով կը փրկուինք, բայց զգուշանանք կեղծ հովիւներէ որոնք մեզի տարբեր ուղղութիւններ կու տան, եւ որոնք մենք անզգալաբար կ'ընդունինք: Հեռատեսիլ, ձայնասփիւռ, մամուլ, ծանուցումներ, արդի երգեր: Մեզի հրամցուածը յաճախ չի համընկնիր մեր տան կամ եկեղեցիին խօսքերուն եւ ապրելակերպին: Մենք, երբեմն, դժբախտաբար կը հետեւինք այդ «ձայներուն» եւ նորաձեւութիւններուն: Միշտ արթուն ըլլանք եւ չտարուինք այդ մոլորեցուցիչ ազդակներէն:

Բարի եւ քաջ հովիւը Յիսուս ինքն է:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ:

Այս տարի Ծաղկազարդը Ապրիլ --ին է:

Ամբողջացո՛ւք ըստ Յովհաննէսի Աւետարանին 12.12.15

աւանակին, թագաւորդ, Սուրբ, էշ, թագաւորը, Ովսաննա՛,
արմաւենիի, Յիսուս, Զատկի, բազմութիւն

Յաջորդ օրը, ժողովուրդի մեծ ----- մը, որ ----- տօնին
առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ ----- Երուսաղէմ
կու գայ, ----- ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ,
բարձրաձայն աղաղակելով. «-----, օրհնեալ լ ըլլայ ան՝ որ կու
գայ Տիրոջ անունով, Իսրայէլի -----»:

Յիսուս -- մը գտնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ -----
գիրքերուն մէջ գրուած է.-

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ. ահա -----
----- քեզի կու գայ իշու մը ----- վրայ նստած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Մարտ 1-ին.

- ա. Ս. Ղեւոնդեանց քահանայիցն
- բ. Ս. Աբգար թագաւորին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Սարգիսին

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Վարդանանցը.

- ա. Փետրուար 6
- բ. Փետրուար 12
- գ. Մարտ 3
- դ. Փետրուար 24

3.- Այս տարի ե՞րբ է Բուն
Բարեկենդանը.

- ա. Մարտ 6
- բ. Փետրուար 14
- գ. Փետրուար 16
- դ. Փետրուար 18

4.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ
Աւարայրի ճակատամարտը.

- ա. 1666
- բ. 405
- գ. 301
- դ. 451

5.- Ո՞ր թուականին
նահատակուեցաւ Ղեւոնդ Երեցը.

- ա. 1666
- բ. 405
- գ. 454
- դ. 451

6.- Վարդան Մամիկոնեանը
ո՞ր ճակատամարտին
նահատակուեցաւ.

- ա. Աւարայր
- բ. Սարդարապատ
- գ. Նուարսակ
- դ. Մանազկերտ

7.- Եկեղեցւոյ Սբ. Խորանը, ո՞ր
ուղղութեան մէջ կը գտնուի.

- ա. Արեւելք
- բ. Արեւմուտք
- գ. Հիւսիս
- դ. Հարաւ

8.- Բուն Բարեկենդանին յաջորդ օրը
ի՞նչ կը սկսի.

Մեծ ----

9.- Վարդանանցը շաբթուան ո՞ր օրը
կ'ըլլայ.

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

10.- Հետեւեալներէն ո՞ր մէկը ճիշդ է:

- ա. Սպիտակ Վարդան
- բ. Ճերմակ Վարդան
- գ. Կարմիր Վարդան
- դ. Կանաչ Վարդան

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Ս. Ղեւոնդեանց քահանայիցն
տօնը այս տարի ե՞րբ կը տօնենք.

ա. Մարտ 3

բ. Փետրուար 12

գ. Մարտ 1

դ. Փետրուար 24

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Վարդանանցը.

ա. Փետրուար 6

բ. Փետրուար 12

գ. Մարտ 3

դ. Փետրուար 24

3.- Ի՞նչ կը կոչուի Վարդանանցի
յաջորդող Կիրակին:

4.- Թուէ՛ Մեծ պահքի առաջին չորս
(4) Կիրակիները:

ա. Բ--- Բ-----

բ. Ա-----

գ. Ա-----

դ. Տ-----

5.- Միջինքը շաբթուան ո՞ր օրը
կ'ըլլայ:

ա. Երկուշաբթի

բ. Երեքշաբթի

գ. Չորեքշաբթի

դ. Հինգշաբթի

6.- Մեծ պահքի առաջին շաբաթ օրը
ո՞ր սուրբին տօնը կը տօնենք:

ա. Վարդան Մամիկոնեան

բ. Ս. Թեոդորոս Զօրավար

գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի

դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

7.- Ո՞վ գրած է Վարդանանցի
նուիրում «Նորահրաշ ...»
շարականը:

Ս. -----

8.- Ո՞վ գրած է «Հաւատով
խոստովանիմ...»ը:

Ս. -----

9.- Ամբողջացո՛ւր սուրբերուն
անունները որոնց տօնը այս տարի
Մարտ 26-ին կը տօնենք:

ա. Ս. Յովհաննէս -----

բ. Ս. Յովհաննէս -----

գ. Ս. Յովհաննէս -----

դ. Ս. Գրիգոր -----

10.- Խորանը կառուցուած է չորս
(4) հիմերու վրայ: Որոնք կը
խորհրդանշեն այս չորս հիմերը:

Չորս -----

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Թուէ՛ Ս. Ղեւոնդեանց
քահանայիցն տօնին մէջ
ընդգրկուող Կաթողիկոսին եւ երկու
եպիսկոպոսներուն անունները:

- ա. ----- կաթողիկոս
բ. ----- եպիսկոպոս
գ. ----- եպիսկոպոս

2.- Ամբողջացո՛ւր Ս. Վարդան
Մամիկոնեանին խօսքը.

Քանզի Հայր մեր զՍուրբ
----- գիտեմք եւ Մայր
զ----- Եկեղեցի
Կաթողիկէ:

3.- Թուէ՛ Նուարսակի դաշնագրին
հայոց երեք (3) հիմնական
պայմանները:

- ա. Հայաստանի -----
բ. -----
ազատութիւն
գ. ----- վերացում

4.- Թուէ՛ Մեծ պահքի վերջին երեք
(3) կիրակիները:

- ա. Դ-----
բ. Գ-----
գ. Ծ-----

5.- Միջինքը ո՞ր երկու
Կիրակիներուն մէջ կ'ըլլայ:
ա. Արտաքսման եւ Անառակի
բ. Անառակի եւ Տնտեսի
գ. Բուն Բարեկենդանին եւ Տնտեսին

դ. Տնտեսի եւ Դատաւորի

6.- Խորանին առաստաղէն կախուած
կանթեղներուն թիւը հետեւեալներէն
ո՞ր մէկը կրնայ ըլլալ:

- ա. 6 կամ 12
բ. 7 կամ 13
գ. 3 կամ 9
դ. 4 կամ 12

7.- Խորանին մէջ ո՞ւր կը պահուին
Նշխարը եւ Գինին.

8.- Ամբողջացո՛ւր: Խորանին առջեւ
կը դրուին հետեւեալները.

- ա. Ատեանի -----
բ. ----- Աւետարանը

9.- Սուրբ Սեղանին վրայ,
պարտադիր պէտք է գտնուին:

- ա. Ճաշու -----
բ. Սուրբ Հաղորդութեան -----
գ. -----

10.- Այս տարի Սուրբ Զատիկը
Ապրիլ 24-ին է: Ամենէն ուշ, Ապրիլի
ո՞ր օրը կարելի է որ Սուրբ Զատիկ
ըլլայ:

- ա. Ապրիլ 24
բ. Ապրիլ 25
գ. Ապրիլ 26

Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Ապրիլ 2010 (ԺԷ տարի թիւ 8)

www.sourphagop.org/mashdots

Այս թիւով...

Փոխան Խմբագրականի՝

Թախոյր գերեզման, լեցուն կեանք Էջ 2

Ապրիլ ամսուան բացատրական
բառարան:

Էջ 3-5

Աշխարհամատրան կամ

Կանաչ Կիրակի,

Կարմիր Կիրակի,

Կարմրաներկ Հակիրթ,

Ինչպէ՛ս ծագում առած է Տաղաւար
բառը,

Մեծագոյն Տաղաւարը,

Աւագ Հինգշաբթի,

Աւագ Ուրբաթ,

Աւագ Ծաբաթ

Ծաղկազարդը՝ Անթիլիասի Մայրավանքին
մէջ

Էջ 6

Յիսուսի խաչելութիւնը եւ յարութիւնը

Էջ 7-8

Վերջին Ընթրիք

Էջ 9

Եկեղեցական բառարան:

Էջ 10

Ս ար կ աւ ա գ , Վ ար դ ա պ ե տ ,

Տօնացոյց, Բենական

Եզակի գիրեր:

Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը:

Էջ 12-15

Ապրիլ 24, 1915 - 2010

Էջ 16



Կ...Կեանք
(յաւիտենական)

Խաչքարի հեղինակ՝

Ժողովրդական վարպետ,
ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ամսուան Համարը

«Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ
ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի պիտի
ապրի»:

Յովհաննէս 11.25

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակույթ

www.sourphagop.org

www.sourphagop.org/mashdots

director@sourphagop.org

Փոխան Խմբագրականի՝

Թափուր գերեզման, լեցուն կեանք

Հատուած Մեծի Տանն Կիլիկիոյ ապա Ամենայն Հայոց Գարեգին կաթողիկոսի

«Ես յաղթեցի աշխարհի...» Յարութիւն եւ Հայութիւն գիրքէն

Քրիստոսի յարութեան հիմնական դասը այս է- ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ ՊԻՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԷ: Վայ անոր որ կը մոռնայ այս աստուածահաստատ իրողութիւնը: Այս դասը մեր ժողովուրդը սորվեցաւ առաջին իսկ օրէն, Առաքեալներու բերաններէն, Սուրբ Գրիգոր Լուսավորչի լուսաճաճանչ շրթներէն, Մեսրոպ Մաշտոցի հոգեճառագայթ գիրերէն, չարը խոցող Վարդանի նիզակէն, հայագործ ճարտարապետական կոթողներէն, գունագեղ մագաղաթեայ ձեռագիրներէն, նրբարուեստ խաչքարերէն, աղօթամրմունջ ու յաւերժախօս վանքերէն, քրիստոսազգեստ եւ քրիստոնէատիպ հայ սուրբերէն ու մահն իրենց արեամբ նուաճող Նահատակներէն ու Մարտիրոսներէն:

Եւ այդ դասը ան չմոռցաւ երբեք հազարամեայ իր պատմութեան ընթացքին, մինչեւ ահաւորագոյն այն օրը երբ իր գոյութիւնը ծանր, մահացու հարցականի տակ դրուեցաւ Համաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին հայութեան դէմ մեր դարաւոր թշնամիին կողմէ փորձուած ցեղասպանութեան հարուածին տակ: Գերեզման բացուեցաւ իր ոտքերուն առջեւ: Շատ անհատներ ծառի բունէն ինկող ճիւղերու պէս ինկան այդ համայնակու գերեզմանին մէջ: Բայց գերեզմանը մնաց միշտ թափուր... որովհետեւ հոգին, համայնական անձնաւորութիւնը, ազգն ու եկեղեցին մերժեցին իջնել գերեզման: Քրիստոս ինք դուրս եկած էր գերեզմանէն եւ հռչակած էր անժխտելի իրողութիւնը թէ՛ ճշմարտութիւնը, բարութիւնը, արդարութիւնը, հաւատքը, յոյսը, սէրը չեն կրնար թաղուիլ:...

Մենք գերեզման չեղանք: հակառակ անոր որ մեր ողջ երկիրը մարդիկ ուզեցին գերեզմանի վերածել, մենք մնացինք անգերեզմանելի, որովհետեւ մեր կեանքը այնքան լեցուն էր յարուցեալ Քրիստոսով, որ չէր կարելի զայն պարսկակէլ հողի ընթերքին մէջ: Գերեզմանը մեզի համար մնաց միշտ թափուր որովհետեւ կեանքը մեզի համար եղաւ միշտ լեցուն:

Եւ այդ դասը այսօր ալ մենք չենք մոռցած: Թէ՛ մայր հայրենիքի մէջ, թէ՛ սփիւղքի անձայրածիր տարածքին վրայ, մենք կանգ որպէս վկաներ՝ յարութեան ճշմարտութեան: Մեր մաքառումը վասն լինելութեան, մեր վերածնունդը վասն ստեղծագործութեան, մեր յուսափառ մարտնչումը վասն ապագայի պայծառութեան, շէնութեան եւ արդար իրաւունքներու ձեռքբերման ու մեր աստուածատուր պարտաւորութիւններու լաւագոյնս կատարման՝ ահա՛ այս բոլորը խօսուն նշաններն են մեր հաւատքին Քրիստոսի յարութեան եւ անոր ներշնչած զօրութեան վրայ: Գոհութիւն Աստուծոյ որ իր շնորհին ներգործութեամբը հաղորդ ըրաւ մեզ հոգեկան անկորնչելի արժէքներուն անմահացնող գաղտնի զօրութեան, որ ինքնին կը ճառագայթէ Քրիստոսի յարութեան արեգակէն: Հայ նոր սերունդի առո՛ղջ ընձիւղներ կեանքով լեցուն նոր շատրուանումներ յարութեան աղբիւրէն՝ բացուած Հայ կեանքին մէջ:...

Թող մարդիկ մեզ փնտռեն մեռելներուն մէջ. բայց պատմութիւնը թող ըսէ, ապագան թող վկայէ.

«Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. Չէ՛ աստ, այլ յարեալ»

Յարութեան տօնը վերանորոգումի հրաշակերպող հոսանքի մը պէտք է վերածուի մեր ողջ գիտակցութեան մէջ, որպէսզի կարենանք ազգովին ըսել՝, եւ ըսել անկեղծօրէն.

ՕՐՀՆԵԱՂ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

«Մաշտոցի Արձագանգ»

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի կամաւոր խմբակը

Թամար Գիզիրեան, Վերժին Գիւլթանճեան, Յասմիկ Նաճարեան, Գարու Մանուկեան, Շողիկ Նաճարեան, Յասմիկ Գանաճեան, Շաղիկ Պոյաճեան, Թորոս Պապիկեան

Ապրիլ ամսուան բացատրական տօնացոյց

- Եշ. 1 Աւագ Հինգշաբթի, Ոտնլուայ, Վերջին ընթրիք, Խաւարում
 Ուր. 2 Աւագ Ուրբաթ, կարգ խաչելութեան եւ թաղման
 Շբթ. 3 Աւագ Շաբաթ, Ծրագալոյց Ս. Զատիկի
 Կիր. 4 ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ Յիշատակ Յարութեան մեր Տիրոջ Յիսուս
 Քրիստոսի
 Բշ. 5 Յիշատակ Մեռելոց
 Շբթ. 10 Յիշատակ գլխատման Ս. Յովհաննէս Մկրտիչի
 Կիր. 11 Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ
 Կիր. 18 Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի
 Շբթ. 24 95 Ամեակ Յեղասպանութեան
 Կիր. 25 Կարմիր Կիրակի

Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի

Կանաչ Կիրակի անունը կը տրուի Զատիկուայ Երրորդ Կիրակիին, որ Զատիկէն 14 օր ետք կը հանդիպի եւ Զատիկին հետ 35 օրուան շարժականութիւն ունի:

Աշխարհամատրոն բառը կը գործածուի իբր աշխարհաժողով, բազմութեան յատկացեալ եկեղեցի, եւ այս անունը տրուած է Սիոնի Վերնատան ուր Քրիստոս վերջին զատկական ընթրիքը կատարեց եւ Ս. Հաղորդութեան խորհուրդը հաստատեց, եւ ուր սովորութիւն ըրին առաքելները հաւաքուիլ Քրիստոսի համբարձումէն ետք: Այս տեղը հաւանաբար Յովհաննէս Մարկոսի տունն էր՝ ուր աղօթքի կը ժողվուէին նոր հաւատացեալները: Հայոց եկեղեցոյն յատուկ է եկեղեցոյ անուամբ տօներ կատարել. ասոնց գլխաւորն է Աշխարհամատրանը՝ այսինքն Վերնատան քրիստոնէութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, որ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն նախատիպն եղաւ եւ եկեղեցոյ նուիրականութեան նշանակը: Աշխարհամատրան օրը Կանաչ Կիրակի ալ կը կոչուի:

Կարմիր Կիրակի

Այսպէս կը կոչուի յինանց չորրորդ Կիրակին, որ Զատիկէն 21 օր ետքը կու գայ եւ Զատիկին պէս 35 օր շարժականութիւն ունի: Այս անունը բնաւ եկեղեցական ծագում կամ նշանակութիւն չունի, այլ Կանաչ Կիրակի անունին նման գարնանային եղանակէն առնուած ժողովրդական կոչում մըն է, որովհետեւ դաշտերը կանաչնալէն ետքը նախ եւ առաջ կարմիր կակաչներով կը զարդարուին:

Կարմրաներկ Հաւկիթ

Ըստ Գրիգոր Տաթևացիի, հաւկիթը կը ներկայացնէ ամբողջ աշխարհը «Կեղեր՝ երկինքը, Մաշկը՝ օդը, Ծերմկուցը՝ ջուրը, իսկ Դեղնուցը՝ երկիրը»: Կարմրաներկ Հաւկիթը Քրիստոսի արիւնով մաքրուած աշխարհն է:

Ինչպե՞ս ծագում առած է Տաղաւար բառը

Տաղաւար կը կոչուին հայ եկեղեցւոյ հինգ մեծ տօները որոնք են Աստուածայայտնութիւն, Սուրբ Յարութիւն, Այլակերպութիւն, Վերափոխում Ս. Աստուածածնի, Խաչվերաց:

«Տաղաւար»ը բառացի կը նշանակէ թեթեւ, փոխադրուելիք վրան, շարժական շինուածք՝ ցուցադրութիւններու նպատակով. կամ՝ վաճառքին յատուկ մասնաբաժին՝ տօնավաճառներու մէջ:

Հին դարերուն, յիշեալ հինգ տօները տօնակատարուած են բազմամարդ, խուռներամ պայմաններու մէջ. շինականներ պահանջք զգացած են առիթն օգտագործելու եւ իրենց ունեցածները՝ մրգեղէն, ընդեղէն, ձեռագործ՝ փոխանակել ա՛յլ պահանջներով: Առ այդ, զանազան գիւղեր ստեղծած են տաղաւարներ եւ կատարած փոխանակումներ ուրիշներու հետ:

Այսպիսի սովորութիւնը մեծ տօներուն, տաղաւարո՛վ տօներուն, մեծի ու տաղաւարի գաղափարները ժամանակի ընթացքին զուգորդուելով ստեղծած են փոխաբերական իմաստ եւ նոյնացուցած են տաղաւարն ու մեծը կրօնական յիշեալ տօներու իմացումին եւ կոչումին մէջ:

Մեծագոյն Տաղաւարը

Հայաստանեայց եկեղեցին հաստատած է հինգ մեծ տօներ որոնք կը կոչուին Տաղաւար: Անոնցմէ մեծագոյնը եւ ամենէն նշանակելին է Սուրբ Յարութեան տօնը՝ Մեծ Զատիկը:

Սուրբ Զատիկը մէկ օրուան տեւողութեամբ յիշատակուող Տօն մը չէ: Ամբողջ շաբաթ մը կը կանխէ այս տաղաւարը, նախամուտի, նախապատրաստական շաբաթ մը, ամենէն սուրբ, ամենէն մեծ ամենէն բարի շաբաթ մը՝ Աւագ շաբաթը:

Աւագ շաբաթը կը սկսի Ծաղկազարդին յաջորդող Երկուշաբթին ու անոր օրերէն իւրաքանչիւրը իր կարգին կը ստանայ «աւագ» ածականը: Աւագ Երկուշաբթին, Երեքշաբթին եւ Չորեքշաբթին յատուկ ծիսակատարութիւններ չեն վերագրուիր: Անոնց ընթացքին ընթերցուող Աւետարանի յատուածները կը խօսին Յիսուսի Երուսաղէմ մտնելուն եւ փրկչական յարութեան մասին:

Աւագ շաբթուան առաջին յատկանշական արարողութիւնը կը կատարուի աւագ Հինգշաբթի, Վերջին ընթրիքի յիշատակով որ սկիզբը եղաւ Սուրբ Հաղորդութեան խորհուրդի հաստատութեան: Կէսօրէ ետք, կը կատարուի ոտնլուայ նմանողութեամբ Քրիստոսի կատարած խոնարհութեան արարքին: Նոյն Գիշերը Խաւարման Երեկոյ է:

Աւագ Ուրբաթ օր Խաչելութեան եւ թաղման կարգ կը կատարուի: Աւագ Ծաբաթ Ծրագալոյց է, իսկ երեկոյեան Քրիստոսի Յարութիւնը: Պահքը վերջ կ'առնէ եւ հաւատացեալներ, եկեղեցւոյ մօմերէն կը վարէն իրենց մօմերը ու տուն վերադառնալով աւանդական ընթրիքով կը տօնեն Սուրբ Յարութիւնը: Աւագ շաբթուան լրումն է աւագ Կիրակին կամ Սուրբ Զատիկը:

Աւագ Հինգշաբթի

Վերջին ընթրիք, Սուրբ Հաղորդութեան խորհուրդի հաստատում եւ ոտնկուայ: Հինգշաբթի իրիկուն, ժամերգութեանն ետք կը կատարուի «խաւարում» կոչուող արարողութիւնը որուն ընթացքին խորանին վրայ կը վարին 12 մոմեր եւ մէկ մեծ մոմ կը դրուի անոնց կեդրոնը: Աւետարանի իւրաքանչիւր ընթերցումէ ետք կը մարուի մէկ մոմ, մինչեւ որ մնայ միայն մէջ տեղի մեծ մոմը:

Գիտէի՞ր թէ...

Խաւարումի ընթացքին մէկ առ մէկ մարուող մոմերը կը խորհրդանշեն Յիսուսի աշակերտները որոնք մէկ առ մէկ լքեցին զինք, իսկ մէջտեղի մեծ մոմը որ արարողութեան աւարտին կը մնայ վառած՝ Քրիստոսը որ մնացած էր մինակ:

Աւագ Ուրբաթ

Յիսուսի ձերբակալութեան, խաչելութեան, մահուան ու թաղումի յիշատակի օրն է: Առաւօտեան կը կատարուի ժամերգութիւն ու կը կարդացուին Աւետարանէն հատուածներ որոնք կը բովանդակեն Յիսուսի երկրային կեանքի վերջին ժամերը:

Գիտէի՞ր թէ...

Աւագ ուրբաթ օր որ աւագ շաբթուան ամենէն աւելի սուրբ օրն է պատարագ չի մատուցուիր: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ օր Յիսուս ի՛նք «պատարագութեամբ»՝ այսինքն զոհութեամբ խաչին վրայ, որպէս կենդանի զոհ:



Վերջին Ընթրիք՝ Յովնաթանեան

Աւագ Ծաբաթ

Դժոխքի աւերում եւ Ծրագալոյցի պատարագի օր: Այդ երեկոյ եկեղեցոյ վառած մոմերէն կը վառուին բազմաթիւ մոմեր եւ հաւատացեալներ այդ մոմին լոյսը կը բերեն իրենց տուները իբրեւ խորհրդանշիչ Յիսուսի յարութեան ուրախ աւետիսին: Այդ երեկոյ վերջ կը գտնէ նաեւ Մեծ Պահքը:



Մինաս՝ 1450



Սարգիս Պիծակ 1336

Ծաղկազարդը՝ Անթիլիասի Մայրավանքին մեջ

Կիրակի 28 Մարտ
2010-ին, Յիսուսի
Երուսաղեմ մուտքի
ուօնին՝ Ծաղկազարդի
օրը, հազարավոր հայ
մանուկներ իրենց
ծնողներուն հետ
խուռներամ բազմութեամբ
լեցուցած էին Անթիլիասի
Մայրավանքը:
Անթիլիասի մեջ
մատուցուած
Մուրբ եւ անմահ
պատարագի ընթացքին,
կազմուեցաւ յատուկ
թափօր մանուկներու



մասնակցութեամբ, որ դուրս եկաւ Մայրավանքի հիւսիսային դարպասէն, ու ծովեզերեայ
մայրուղիէն ամբողջ Կաթողիկոսարանին շրջանը ընելով, վանքի մայր դարպասէն
վերստին ներս մտաւ:

Ս. պատարագը մատուցեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Աշրգեան: Ներկայ բազմահազար
ժողովուրդը ծափողոյններով դիմաւորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, որ
Վեհարանի պատշգամբ ելլելով, իր հայրապետական պատգամը ու հայրական խօսքը
ուղղեց հայ մանուկներուն եւ անոնց ծնողներուն:

Նորին Սրբութիւնը տեսնելոյ հետաքրքրութեամբ իրեն նայող բազմաթիւ հայ մանուկները,
ըսաւ. Հայ մանուկներու աչքերուն մեջ, մեր ազգի ու եկեղեցւոյ պայծառ ապագան կը
տեսնեն: Ապա քաջալերեց ծնողները, որոնք հայոյ վայել գիտակցութեամբ, եկեղեցւոյ
ուօներուն մասնակից կը դարձնեն իրենց զաւակները, Աստուծոյ շունչով ու քրիստոնէական
դաստիարակութեամբ մեծցնելով զանոնք: Վեհափառ Հայրապետին պատգամը հազիւ
աւարտած, հազարավոր հայ մանուկներ մեծ ցնծութեամբ դիտեցին գոյնզգոյն փուչիկները,
որոնք Մայրավանքի շրջափակէն դէպի երկինք բարձրացան: Նոյն միջոցին նաեւ քանի
մը տասնեակ աղանիներ իրենց անմեղ թելերը թափահարելով լեցուցին Մայրավանքի
երկինքը, մանուկներու հետաքրքիր նայուածքները իրենց վրայ հրաւիրելով:

Պատգամէն ետք, Արամ Ա. Կաթողիկոս Վեհարանին մեջ ընդունեց հայ մանուկներն
ու անոնց ծնողները: Տեղի ունեցաւ աջահամբոյր: Վեհափառ Հայրապետը բոլոր
մանուկներուն նուէրներ բաշխեց, տօնական ուրախութեամբ լեցնելով անոնց սրտերը:
Նշենք, որ իր ընտրութենէն անմիջապէս ետք, Արամ Ա. Կաթողիկոս Ծաղկազարդի տօնը
հռչակած էր Հայ Մանուկներու Օր, եւ այնուհետեւ ամէն տարի յատուկ նուէրներով, Նորին
Սրբութիւնը հայրական սիրով կ'ընդունի բոլոր հայ մանուկները Վեհարանին մեջ:

Յետմիջօրէին տեղի ունեցաւ նաեւ Դոնբացէքի խորհրդալից արարողութիւնը,
հանդիսապետութեամբ Վեհափառ Հայրապետին: Քարոզեց Նորայր Եպիսկոպոս,
Քրիստոսի Երկրորդ Գալստեան պատգամը փոխանցելով ներկայ հաւատացեալներուն:
Ծաղկազարդի տօնով ու Դոնբացէքի արարողութեամբ Հայ եկեղեցին կը մտնէ Քրիստոսի
տնօրինական կեանքի վերջին շաբաթը՝ Աւագ Շաբաթը, երբ հայ հաւատացեալը իբրեւ
հոգեւոր ուխտաւոր, կը հետեւի Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջալոյսին պատահած
դէպքերուն, ու մարդու փրկագործութեան ի խնդիր Անոր կրած չարչարանքներուն, որուն
պսակումը պիտի ըլլար սակայն Յաղթական Յարութիւնը:

Յիսուսի խաչելությունը եւ յարությունը Մատթեոս 27:32-66, 28:1-10

Կարդայ Մատթեոսի 27 եւ 28 գլուխները:

Գտիր հետեւեալ հարցումներուն պատասխանները էջ 8-ին վրայ, ապա անոր համապատասխան գիրը ընդօրինակէ հարցումին առջեւի գծիկին վրայ:

Գծիկներուն վրայի գիրերով կազմուած նախադասութիւնը ընդօրինակէ էջին վարը:

- Որո՞ւ ստիպեցին որ Յիսուսի խաչը շալկէ
- Ի՞նչ կը կոչուի այն վայրը ուր Յիսուսը խաչ հանեցին
- Ի՞նչ տուին որ Յիսուս խմէ
- Ի՞նչ ըրին Յիսուսի հագուստները
- Ի՞նչ ձեռով առին Յիսուսի հագուստները
- Ի՞նչ էր արձանագրութիւնը որ Յիսուսի խաչին վրայ դրին
- Յիսուսի հետ ուրիշներ ալ խաչեցի՞ն
- Ի՞նչ կ'ընէին խաչին առջեւէն անցնողները
- Որո՞նք ըսին թող հիմա խաչէն իջնէ, որպէսզի հաւատանք իրեն
- Ե՞րբ պատեց խաւարը ամբողջ երկրին վրայ
- Յիսուս բարձր ձայնով ի՞նչ աղաղակեց ժամը երեքին
- Յիսուս որո՞ւն կը կանչէ, կը կարծէին հոն գտնուողները
- Յիսուսի ի՞նչ տուին որ խմէ երբ աղաղակեց
- Յիսուս երբ հոգին աւանդեց ի՞նչ պատահեցաւ տաճարին մէջ
- Յիսուս երբ հոգին աւանդեց ուրիշ ի՞նչ բաներ պատահեցան
- Պահակութիւն ընող հարիւրապետը եւ զինուորները ի՞նչ ըսին
- Ո՞վ կար նաեւ Գալիլիայէն Յիսուսի հետեւած կիներուն մէջ
- Ո՞վ խնդրեց Յիսուսի մարմինը Պիղատոսէն
- Գերեզմանի մուտքին որպէս կափարիչ ի՞նչ գլորեցին
- Որո՞նք գերեզմանը հսկողութեան տակ առին, քարը կնքեցին եւ զինուորներ պահակ դրին
- Ո՞վ գլորեց գերեզմանի քարը եւ վրան նստաւ
- Որո՞նք գացին գերեզմանը տեսնելու կիրակի առտուն

-- - - - - - -- - - - - - - - - - - - - - - -

Յիսուսի խաչելութիւնը եւ յարութիւնը (շար․)

Պատասխաններ՝

Ա Սիմէոն Կիրենացիին
 ա Ասիկա է Յիսուս հրեաներուն թագաւորը
 ա Աստուած իմ Աստուած իմ ինչո՞ւ լքեցիր զիս
 ա մեծ քար մը
 ա Աստուծոյ հրեշտակը
 ե իրենց միջեւ բաժնեցին
 ե կը նախատէին զինք
 թ երկիրը շարժեցաւ եւ ժայռերը ճեղքուեցան
 ի իրապէս որ Ասիկա Աստուծոյ Որդին է
 ի Գալիլիա
 մ Լեղիով խառն գինի
 յ կէսօրին (6-րդ ժամ) մինչեւ ժամը 3 (9-րդ ժամ)
 ն Գողգոթա
 ն Յովսէփ Արիմաթիացին
 ո քացախ
 ո վիճակ ձգելով
 ո Աւագ քահանաները եւ Փարիսեցիները
 ր Եղիան
 ր Յիսուսի
 լ Երկու աւագակներ
 լ Աւագ քահանաները եւ օրէնքի ուսուցիչներ
 լ վարագոյրը պատռուեցաւ
 լ Մարիամ Մագդաղենացին
 լ Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը

--- ~~~ --- ~~~ --- ~~~ --- ~~~ --- ~~~ --- ~~~ --- ~~~ --- ~~~ --- ~~~ --- ~~~ ---

Քրիստոս բոլորին համար մեռաւ, որպէսզի հաւատքով կենդանացողները այլեւս չապրին իրենք իրենց համար, այլ անոր համար՝ որ իրենց փոխարէն մեռաւ եւ յարութիւն առաւ:

Բ Կորնթացիներուն 5:25

Վերջին ընթրիք Մատթեոս 26:17-30

Գրե՛ք բառերը ճիշդ կարգով:

1 - _____

5 - _____

2 - _____

6 - _____

3 - _____

7 - _____

4 - _____



1- Յիսուս եւ իր աշակերտները Բաղարջակերաց տօնին ի՞նչ ընթրիքի հաւաքուեցան: ակտագնակ

2- Քանի՞ աշակերտներ ընթրիքի նստան Յիսուսի հետ: եւտակորւս



3 - Ի՞նչ պատահեցաւ երբ Յիսուս ըսաւ որ «ձեզմէ մեկը պիտի մատնէ ինձի»: Աշակերտները վիտիք մատնուեցան:

4- Ո՞վ էր Յիսուսի մատնիչը: դւժառ

5- Յիսուս հացը օրհնեց, կտրեց, բաժնեց աշակերտներուն ըսելով՝ Արե՛ք կերե՛ք ասիկա իմ մանսմրի է:

6- Գինիին բաժակը առաւ, գոհութիւն յայտնեց Աստուծոյ եւ ըսաւ «բոլորդ խմեցէք ասկէ, ասիկա իմ սնախիւ է»:



7- Ընթրիքէն ետք Յիսուս եւ իր աշակերտները գացին իցենձթնաղէ



Եկեղեցական բառարան

Ս

ՍԱՐԿԱԽԱԳ կը նշանակէ ծառայող, սպասաւոր, կամ գործակից, օգնական: Նոր Կտակարանի մէջ տիտղոս մըն է, որ կը տրուի եկեղեցւոյ այն անդամներուն՝ որոնք աղքատներուն եւ հիւանդներուն ծառայելու պարտականութիւնը ունին, իբրեւ գործակից Առաքեալներուն, եւ յատուկ ձեռնադրութիւն ալ կը ստանան այդ պաշտօնին համար: «Առաքեալներուն Գործերը 6.1-6»

Ներկայիս Հայ Եկեղեցւոյ մէջ սարկաւազը Քահանայի անմիջական օգնականն է եւ ժողովուրդի ու քահանայի միջնորդը: ՍԱՐԿԱԽԱԳ կը ձեռնադրուին Դպիրի եւ կիսասարկաւագի աստիճաններ ունեցողները: Անոնց պարտականութիւնն է արարողութեան ընթացքին խնկարկել եւ կարդալ Աւետարանը, կատարել Ս. ընծաներու վերաբերումը եւ օժանդակել քահանային:

Վ

ՎԱՐԴԱՊԵՏ կը նշանակէ ուսուցիչ, վարժապետ, եւ կը գործածուէր իբրեւ պատիւի տիտղոս մը: Եբրայերէնի ՐԱԲ բառն է, որ սկզբնապէս «գլուխ, պետ» կը նշանակէր, բայց հետզհետէ դարձաւ պատուոյ տիտղոս եւ ստացաւ Տէր կամ վարդապետ իմաստը: Աւելի բարձր յարգանքի ձեւ մըն էր Ռաբբի կամ Ռաբունի կոչումը, որ կը նշանակէ «տէր իմ» կամ «վարդապետ իմ» (ուսուցիչ): Թէ՛ առաքեալներ եւ թէ՛ ժողովուրդը Յիսուսը կը կոչէին «Վարդապետ»:

Տ

ՏՕՆԱՑՈՅՑը Հայ Եկեղեցւոյ արարողութիւններու ժողովածուներէն է որ ստեղծուած է Ժ. դարուն: Ան ցոյց կու տայ տարուայ ընթացքին նշուող բոլոր տօներու եւ յիշատակի օրերու ստույգ ժամանակը, այդ տօներուն կատարուող Սաղմոսները, շարականները, երգերը, աղօթքները, ընթերցուող Աւետարանները, եւ այլ ընթերցուածքներ: 1774 ին Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի բարեփոխած Տօնացոյցը հայ Եկեղեցին կը կիրարկէ մինչեւ հիմա: Ասոր հիման վրայ կը պատրաստուին հայ եկեղեցական օրացոյցները:

Ր

«ՐԵՆԱԿԱՆ լոյսով լըցեալ արիացեալն քաջն Արտակ» ով կը սկսի Ս. Ներսէս Շնորհալիի Վարդանանց Սուրբերու նուիրուած շարականին «Նորահրաշ պըսակաւոր...» ի երրորդ համարը, որ կը թարգմանուի «Աստուածային լոյսով լեցուած արիացած Արտակը քաջ...»: Այս կը նշանակէ թէ Ս. Ներսէս Շնորհալին այս բառը կը գործածէ «Աստուածային» իմաստով:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մարտ ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

Զատիկի, Երուսաղէմ, Յիսուս, Ովսաննա, Տիրոջ, Սուրբ, աւանակի

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. Քառասուն մանկունք Սեբաստիոյ
2. գ. Գալստեան
3. դ. Ծաղկազարդ
4. Ս. Ներսէս Շնորհալի
5. գ. 24
6. գ. Չորեքշաբթի
7. Յովհաննէս
8. Գրիգոր
9. մարդիկ, նոյնը
10. Հինգ

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. Երուսաղէմի, Օձնեցի, Որոտնեցի, Տաթեւացի
2. բ. Անառակին, դ. Դատաւորին, ե. Գալստեան
3. ա. Մատթէոս

4. Սատանան

5. ա. Ծնունդին,
- գ. Աստուածայայտնութեան
6. Աղօթել, Պահք Բռնել, Բարիք գործել
7. Ծաղկազարդ
8. Արարատ
9. Սեբաստիա
10. Ս. Ներսէս Շնորհալի

Երկրորդականի անկիւն

1. Ս. Գրիգոր Տաթեւացի
2. Ս. Յովհաննէս Օձնեցի
3. ա. Տնտեսի, բ. Դատաւորի, դ. ծաղկազարդ, ե. Ս. Զատիկ
4. Ս. Յովհաննէս Որոտնեցի
5. դ. Չորեքշաբթի
6. ա. Աղօթել, բ. Պահք բռնել, գ. Բարիք ընել
7. Բուն Բարեկենդան
8. Մարտ 10
9. բ. Աղին վրայ եւ օրհնուած աղը կը տրուի կենդանիին ճաշակելու
10. Երկուշաբթի


Եզակի գիրեր									ա	է			թ	բ	գ		
Հայերէն գիրերով Sudoku										ե	ը			է		բ	
ա	ը	թ	դ	զ	գ	բ	է	ե									
է	զ	գ	ը	ե	բ	ա	թ	դ						է	ա		ը
ե	բ	դ	է	ա	թ	ը	զ	գ	դ		զ	գ				թ	
դ	է	զ	գ	ը	ե	թ	ա	բ	գ			է			ը		ե
բ	գ	ա	զ	թ	է	ե	դ	ը		ա				զ	ը		դ
թ	ե	ը	ա	բ	դ	է	զ	գ	թ		զ						
զ	ա	է	բ	գ	ը	դ	ե	թ		դ			բ		է	զ	
գ	թ	բ	ե	դ	ա	զ	ը	է			է	ա				դ	բ
ը	դ	ե	թ	է	զ	գ	բ	ա			է	ե	ա			դ	բ

Նախորդ «Եզակի գիրեր» ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր՝

- հորիզոնական գիծի վրայ,
- ուղղահայեաց գիծի վրայ եւ
- ինեակ քառակուսիի մէջ

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Մատթէոս **28: 1-10** ի

Կիրակին, երկրաշարժ, հրեշտակը, քարը, փնտուէք,
 յարութիւն, աշակերտներուն, Գալիլիա, տեսնէք

Շաբաթ երեկոյէն ետք, երբ ----- կը բացուէր, Մարիամ
 Մագդաղենացին եւ միւս Մարիամը գերեզմանը տեսնելու եկան:
 Յանկարծ զօրաւոր ----- մը եղաւ եւ Աստուծոյ -----
 երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած -----
 ու նստաւ անոր վրայ: Հրեշտակը կիներուն ըսաւ. «Դուք մի՛
 վախնաք. գիտեմ որ խաշուած Յիսուսը կը -----: Հոս չէ,
 որովհետեւ ----- առաւ, ինչպէս ըսած էր: Եկէք եւ
 տեսէ՛ք այն տեղը ուր դրուած էր: Անմիջապէս գացէք եւ ըսէ՛ք
 իր -----՝ թէ յարութիւն առաւ: Անիկա ձեզմէ առաջ
 ----- կը հասնի եւ հոն պիտի ----- զինք. ահա ըսի
 ձեզի:»

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

Անուն: _____

1. Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուալով ինչի՞ դաս մը տուաւ անոնց:

- ա. համբերութեան
- բ. մաքրութեան
- գ. խոնարհութեան
- դ. ծուլութեան

2. Վերջին ընթրիքին Յիսուս ի՞նչ հաստատեց:

- ա. Սուրբ հաղորդութիւնը
- բ. Սուրբ Սահակը
- գ. Սուրբ կեանքը
- դ. Սուրբ պսակը

3. Ո՞վ Յիսուսը ուրացաւ 3 անգամ:

- ա. Յակոբ
- բ. Պետրոս
- գ. Պօղոս
- դ. Յովա

4. Յիսուս իր ձերբակալութենէն ճիշդ առաջ ի՞նչ կ'ընէր

- ա. կ'ուտէր
- բ. կը խմէր
- գ. կ'աղօթէր
- դ. կ'աշխատէր

5. Ամբողջացո՛ւր

Ե՛ս եմ
 եւ կեանքը: Ան որ ինծի կը
, թէպէտեւ
 մեռնի՝ պիտի:

Յովհ. 11.25 :

6. Այս տարի Ապրիլ 11ը ի՞նչ կը կոչուի:

- ա. Նոր Կիրակի
- բ. Բ. Ծաղկազարդ
- գ. Կանաչ Կիրակի
- դ. Կարմիր Կիրակի

7. Գրէ՛ շիտակ շարքով Ս. Զատիկը եւ անոր յաջորդող Կիրակիները՝ Կարմիր, Կանաչ, Կրկնազատիկ:

- ա. -----
- բ. -----
- գ. Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի
- դ. -----

8. Վերջին ընթրիքը շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:

- ա. Աւագ Հինգշաբթի
- բ. Աւագ Ուրբաթ
- գ. Աւագ Ծաբաթ
- դ. Աւագ Կիրակի

9. Ոտնկուան շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ:

- ա. Աւագ Հինգշաբթի
- բ. Աւագ Ուրբաթ
- գ. Աւագ Ծաբաթ
- դ. Աւագ Կիրակի

10. Ո՞ր օրը եկեղեցւոյ արարողութեան ընթացքին Յիսուսի գերեզմանին տակէն կ'անցնինք եւ մեխակ կու տան:

- ա. Աւագ Հինգշաբթի
- բ. Աւագ Ուրբաթ
- գ. Աւագ Ծաբաթ
- դ. Աւագ Կիրակի

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

Անուն: _____

1.- Ի՞նչ կը կոչուի Զատկուան յաջորդող Կիրակին:

2.- Գրէ՛ Աւագ շաբթուան օրերուն յիշատակը:

ա.- Աւագ Չորեքշաբթի՝ Յիշատակ

բ.- Աւագ Հինգշաբթի՝ Յիշատակ

3.- Գրէ՛ Աւագ շաբթուան օրերուն յիշատակը:

ա.- Աւագ Ուրբաթ՝ Յիշատակ

բ.- Աւագ Ծաբաթ՝

----- Ս. Զատիկ

4.- Գրէ՛ Աւագ շաբթուան օրերուն յիշատակը:

ա.- Աւագ Երկուշաբթի՝ Յիշատակ

բ.- Աւագ Երեքշաբթի՝ Յիշատակ

5.- Քանի՞ հատ էին իմաստուն կոյսերը:

ա.- 5

բ.- 10

գ.- 7

դ.- 3

6. Ամբողջացո՛ւր Քրիստոսի խօսքերը ըստ Մատթէոս 26.26-27:

ա. Յիսուս հաց առաւ, օրհնեց, կտրեց եւ բաժնեց աշակերտներուն, ըսելով.

- Առէք, կերէք, ասիկա իմ

----- է:

բ. Ապա առաւ բաժակը, գոհութիւն յայտնեց Աստուծոյ եւ տուաւ աշակերտներուն, ըսելով.

- Բոլորդ խմեցէք ասկէ. ասիկա իմ

----- է:

7. ա. Յիսուս իր յարութենէն քանի՞ օր տակաւին երեւցաւ իր աշակերտներուն մինչեւ իր երկինք համբառնալը:

բ. Այս տարի ե՞րբ է Համբարձումը

-----շաբթի, Մայիս ---:

8. Հոգեգալուստը կը յաջորդէ Համբարձումին:

ա. Ծաբթուան ո՞ր օրը Հոգեգալուստ կըլլայ: -----

բ. Այս տարի ե՞րբ է Հոգեգալուստը: Մայիս ---:

9. Այս տարի Հայոց

Յեղասպանութեան քանի՞երորդ յիշատակն է:

10. Այս տարի ո՞ր Կիրակի օրը

Կանաչ Կիրակի կը կոչուի:

Ապրիլ -----

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

Անուն: _____

1- Ի՞նչ կը կոչուի Ս. Զատկուան
յաջորդող 3 կիրակիները:

ա.- _____ Կիրակի

բ.- _____ Կիրակի

գ.- _____ Կիրակի

2- ըստ Գրիգոր Տաթևացիին
հաւկիթը կը խորհրդանշէ աշխարհը՝
հետեւեալ ձեւով:

ա. Կեղեւը՝ _____

բ. Մաշկը՝ _____

գ. _____
Ճ ե ռ մ կ ու ց ը՝

դ. Դեղնուցը՝ _____

3-Կարմիր գոյնով ներկուած
հաւկիթը կը նշանակէ թէ՝

4-14 Հարցումներուն համար.

Հետեւեալ դէպքերը Աւագ
շաբթուան ընթացքին ո՞ր օրը
տեղի ունեցան:

4-Յիսուս մաքրագործեց Տաճարը
աւագ _____ օրը:

5-Այրին որ տաճարին մէջ իր

ունեցած երկու լուման տուաւ աւագ
_____ օրը:

6-Յիսուս լացաւ Երուսաղէմի վրայ
աւագ _____ օրը:

7-Յիսուս պատմեց տասը կոյսերուն
առակը աւագ _____
օրը:

8-Յուդա յանձն առաւ Յիսուսը
մատնել աւագ _____
օրը:

9-Զատկական ընթրիքը տեղի
ունեցաւ աւագ _____
օրը:

10-Աշակերտներուն ոտքերու
լուացումը տեղի ունեցաւ աւագ
_____ օրը:

11-Պետրոսի ուրացումը տեղի
ունեցաւ աւագ _____
օրը:

12-Յիսուս աղօթեց Գեթսեմանիի
պարտէզին մէջ աւագ
_____ օրը:

13-Յիսուս խաչուեցաւ աւագ
_____ օրը:

14-Երկինքը խաւարեցաւ երեք ժամ
աւագ _____ օրը:

15-Կիրակի օրերը Քրիստոսի
յարութենէն առաջ կը կոչուէին՝
_____ :

Ինչպե՞ս Ոգեկոչել Մեծ Եղեռնի Նահատակներուն Անմահ Յիշատակը



Ապրիլ 24, 1915 - 2010

Ոգեկոչենք Մեծ Եղեռնի Նահատակներուն
անմահ յիշատակը նաեւ՝

- Ապրելով Հայադրոշմ կեանք մը,
- Վառ պահելով Հայաստանեայց եկեղեցույ
տօներն ու ազգային ասանդութիւնները,
- Լսելով, մտիկ ընելով ու երգելով մեր
Հայանուագ շարականներն ու երգերը,
- Ամուր կառչած մնալով մեր Հայավայել բարի
բարքերուն ու սովորութիւններուն,
- Կարդալով ու կեանքի վերածելով մեր
Հայագրեալ Աստուածաշունչը
- Եւ մանաւանդ՝ ՍԻՐԵԼՈՎ Հայը

Ամբողջ տարուան ընթացքին:

«Պիտի հանեմ ձեզ ձեր գերեզմաններէն .
կենդանութեան շունչ պիտի տամ, իմ հոգիս
պիտի տամ ձեզի, եւ ձեզի ձեր երկիրը պիտի
վերադարձնեմ:» Եզեկիէլ 37.14

www.sourphagop.org/mashdots

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG-ը 10 տարեկան

Այս թիւով.....

Նոր Կիրակի (Կրկնագատիկ) Էջ 2-3

Մայիս ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 3-6

Շարական Նոր Կիրակիին
Սուրբ Խաչի Երեսման Տօն

Բացատրութիւն` Հայց. Առաք. Եկեղեցւոյ
Ս. Պատարագին (շար. 7) Էջ 7-8

Եզակի Գիրեր Էջ 9

Աշակերտ Ըլլալու Գինը Էջ 10

Աղերս առ Աստուած Էջ 11

Շնորհակալ ենք Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 13-16

Ամսուան Համարը

«Ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած
է՝ նոր արարած է. այլեւս չէ՝ այն՝
ինչ որ էր նախապէս, որովհետեւ
ամբողջութեամբ նորոգուեցաւ»: Բ.
Կորնթացիներուն 5.17

Մայիս 2011 (ԺԸ տարի թիւ 9)



Կ... Կրկնագատիկ
Կանաչ Կիրակի
Կարմիր Կիրակի

Խաչքարի Հեղինակ՝
Ժողովրդական Վարպետ
Ռուբեն Նալբանդյան

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Նոր Կիրակի (Կրկնագատիկ)

Արեւելեան Եկեղեցիներ Զատիկին յաջորդող Կիրակիին կու տան ՆՈՐ մակդիրը, այն բացայայտ պատճառով, որ Զատիկը ըլլալով գերազանց Կիրակին, անոր յաջորդողը կ'ըլլայ սկիզբը տարւոյն բոլոր Կիրակիներուն: Իսկ Արեւմտեան Եկեղեցին զայն կը կոչէ «ՄՊԻՏԱԿ ԿԻՐԱԿԻ»: Մենք պիտի ուզէինք ասիկա խորհրդանշական ակնարկութիւն մը նկատել այն սպիտակ մաքրութեան որ Եկեղեցիին մէջ կը տիրապետէ. Զատկական հաղորդութիւններէ եւ հոգեկան մաքրագործութիւններէ յետոյ: Հայաստանեայց Եկեղեցին, սակայն, ունի ուրիշ անուանակոչում մը այս Կիրակիին համար – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ – ինչ որ կը նշանակէ թէ այս Կիրակիին կը կրկնուին Զատկական ուրախութիւնները, ինչպէս նաեւ Զատկին տիրող հոգեւոր ու ընկերային մթնոլորտը:

Ըստ այս Կիրակիի շարականներու մեկնաբանութեան, Նոր Կիրակին իր մէջ կը բովանդակէ մարդկային կեանքի վերանորոգութեան խորհուրդը:

Կեանքը երկրի վրայ իր գոյութիւնը կը շարունակէ ոչ միայն պտղաբերելով եւ սերնդագործելով, այլ նաեւ ու առաւելաբար վերանորոգուելով: Այնքան կենսական է վերանորոգութիւնը կեանք ունեցող արարածներու համար, որքան հունտ ու պտուղ արտադրելը, որքան ձագ ու զաւակ բերելը:

Բնութեան գեղեցկագոյն երեւոյթներէն է վերանորոգութիւնը: Ո՞ր սիրտը չէ բացուած երբ ձմրան մեռելութենէ յետոյ նշմարած է նշենին որ հարսնացեր է, ծիրանին՝ որ ծաղկեր է, խոպանացած ու ցամքած դաշտեր ու լեռներ, որոնք դալարիքով պճնուած են եւ որոնց վրայ տակաւ առ տակաւ, երանգ առ երանգ ծաղիկներ իրենց բնականարները կը բանին: Ո՞ր հոգին չէ լեցուած հրճուանքով երբ միջատներ, թիթեռներ, թռչուններ ու դաշտի կենդանիներ, որոնք ձմրան մեծագոյն մասամբ անյայտացած էին, վերստին կը լեցնեն բնութիւնը կենսութեամբ գեղումով:

Վերանորոգութիւնը նոյնքան կենսական ու կարեւոր է մարդկային բանական կեանքին մէջ: Մեր բջիջներուն պէս մեր ոգեղէն կառուցուածքին տարրերն ալ ենթակայ են մաշումի եւ մահուան: Ծառերն ու ծաղիկները անձրեւով ու արեւով յագենալէ յետոյ կ'արթնան, կը վերակենդանան: Արտաքին ազդակներ անհրաժեշտ են նաեւ մեր ներքին կեանքի վերանորոգութեան համար: Մեր գաղափարները, մեր համոզումները, մեր սերը, մեր հաւատքը եւ այն ամէնը, որոնք չեն երելիր եւ որոնք սակայն կը կազմեն մեր ներքին կեանքը, ներքին մարդը, կը կարօտին նոր ներարկումի, նոր աւիշի, նոր արեւի եւ անձրեւի:

Յիսուս է մարդկային բանական կեանքի գերագոյն վերանորոգիչը: Ան վերանորոգեց Հին Ուխտը, որ մաշած էր այլեւս եւ իր նպատակին չէր ծառայեր, աւելի շիտակ՝ Աստուծոյ նոր նպատակին անբաւարար էր: Յիսուս պէտք տեսաւ ՆՈՐ ՈՒԽՏ մը հաստատել նոր քարոզութեամբ եւ զայն կնքեց իր արիւնով: Նորոգեց հին պատուիրանները. նոր «գինին» նոր «տիկերու» մէջ լեցուց: Ամէն մարդ որ կը լսէ իր քարոզութիւնը կամ ականատես կ'ըլլար իր հզօր գործերուն զարմացած կամ զայրացած կ'ըսէր. «Այս ի նչ նոր ուսուցում է» (Մարկ. Ա. 27): Յիսուս «նոր պատուիրան» մը տուաւ համայն մարդկութեան – սիրոյ պատուիրանը:

Առաքեալները, որոնք ոգեւին նորոգուած էին Քրիստոսի քարոզութեամբ, յարութեամբ ու մանաւանդ Սուրբ Հոգիի ներգործութեամբ, նոյն վերանորոգութիւնը կը թելադրեն բոլորին: Պօղոս Առաքեալ, որ արդարեւ Յիսուսի ուղղակի եւ անմիջական ազդեցութեամբ հոգեպէս եւ հիմնովին վերակենդանացաւ, իր նամակներուն մէջ հզօր շեշտ կը դնէ այս լարին վրայ: «Չարութեան հին խմորը դուրս նետեցէք ձեզմէ, որպէսզի ամբողջութեամբ նոր եւ անխմոր զանգուած մը ըլլաք» (Ա. Կորնթ. Ե. 7): Կը պնդէ «Նոր մարդ, նոր արարած» ըլլալու անհրաժեշտութեան վրայ: «Կարեւորը մարդուս թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ՝ «նոր արարած» ըլլալը» (Գաղ. Զ. 15): «Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն: ձեր նախկին ապրելակերպը, որ խափուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէ՛ք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու

Մայիս ամսուան բացատրական տօնացոյց

Կիր. 1	Նոր Կիրակի (Կրկնագատիկ)
Կիր. 8	Աշխարհամատրան - Կանաչ Կիրակի Մայրերու օր
Կիր. 15	Կարմիր Կիրակի
Կիր. 22	Երեւուի Ս. Խաչի
Շրթ. 28	Հայաստանի Ա. Հանրապետութեան Տարեդարձ (93-ամեակ)
Կիր. 29	Զ. Կիրակի Յինանց

սրբութեամբ» (Եփս. Դ. 22-25): «Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէ՛ք՝ ձեր Արարչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զԻնք ճանչնալ» (Կոլ. Գ. 9-10): «Նոյնիսկ եթէ մարմնապէս հետզհետէ կը քայքայուինք, բայց ներքնապէս կը նորոգուինք օրէ օր» (Բ. Կորնթ. Դ. 16):

Ու Նոր Կտակարանը իր վախճանին կը բերուի երբ Յայտնութեան Գրքի Տեսանողը կ'ըսէ. «Ապա տեսայ նոր երկինք մը եւ նոր երկիր մը, որովհետեւ նախկին երկինքն ու երկիրը անյայտացան... Ան որ գահին վրայ նստած էր, ըսաւ.

- Ահաւասիկ ամէն ինչ նոր կը դարձնեմ» (Յայտ. Բա. 1-5):

Քրիստոնէական հիմնական այս գաղափարին յատկացուած է Նոր Կիրակին: Եւ օրուան շարականը, որ Ներսէս Լամբրոնացիի քերթողական բարձր ոճով գրչին արգասիքն է, կը յայտարարէ մարդկային ցեղի նորոգութիւնը մեղքի եւ մահուան հնութենէ եւ կը հռչակէ այս Կիրակին իբրեւ Նաւակատիքը, այսինքն սկիզբը մեր փրկութեան:

Շարականին սկիզբը յիշուած «Նորոգեալ Կղզիք»ը քրիստոնէայ դարձած ազգերն են. նոյն նշանակութիւնը ունի յաջորդ տողի «Եկեղեցիք հեթանոսաց» բացատրութեան հետ: Շարականի երկրորդ տունով Սրբազան Բանաստեղծը խօսքը կ'ուղղէ «Հարսին», այսինքն Եկեղեցիին, ըսելով. «Ներսէն զարդարուէ ոսկեճամուկ զգեստներով պճնուած». այսինքն առաքինութիւններով եւ սրբութեամբ նորոգուէ: Երրորդ տունի «Միոնի Որդիները» եկեղեցիի զաւակներն են: Շարականի այս համարով կը թելադրուի անոնց. «Ուրախացէ՛ք ի Քրիստոս թագաւորն» եւ ձեր հոգիներուն հնութենէն նորոգուած ըլլալու առիթով Նաւակատիք տօնեցէք եւ օրհնեցէք հրեշտակներու հետ «փառաց թագաւոր» Քրիստոսը:

Երանի անոնց, որոնց մէջ չէ մեռած եռանդը, հաւատքը եւ տրամադրութիւնը վերանորոգուելու: Անոնք պիտի նմանին հզօր արծիւին, որ ամէն տարի կը փոխէ իր փետուրները եւ խորհրդանշանը կը հանդիսանայ երկարակեցութեան եւ անսպառ ոյժի: Անոնք պիտի նմանին խնձորենիին որ ամէն տարի նոր ծաղիկներով եւ նոր տերեւներով կը պատմուճանուի, եւ ամէն տարի նոր պտուղներով կը բեռնաւորուի:



Գիտէ՛ք թէ

. Հայաստանի Հանրապետութեան Զինանշանին կեդրոնը Արարատ լեռն է որուն վրայ կը հանգչի Նոյեան Տապանը:

. Հայերէնը Հայաստանի պաշտօնական լեզու հռչակուեցաւ Դեկտեմբեր 1919-ին:

. 1918-1920 Անկախ Հայաստանի վերջին դաշնագիրը՝ Մելի Դաշնագիրը ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920-ին:

ՇԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԻՐԱԿԻՒՆ

- Օրհնութիւն -

Նորոգեալ կրդիք առ Աստուած, եկեղեցիք հեթանոսաց,
Ի գլխոց լերանց գոչմամբ ձայնի, տուք ըզփառս Աստուծոյ.
Եւ պատմեցէք զքաջութիւն Յարուցելոյն ի մեռելոց:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարեա ի ներքոյ ի հանդերձս յոսկեհուրս պըսակեալ.
Քանզի ահա գայ առ քեզ Քրիստոս փառաց թագաւորն:

Բ'ախացեալ որդիք Սիոմի, ի թագաւորն Քրիստոս,
Տօնեցէք ցնծութեամբ գնաւակատիս հոգւոց մերոց նորոգեալք ի հնութենէ.
Եւ ընդ հրեշտակս օրհնեսցուք զՔրիստոս փառաց թագաւորն:

Սքանչելի է խորհուրդ տնօրէնութեան քո, Քրիստոս,
Որ իջեր է ի Հօրէ, ի սէր հարսին եկեղեցւոյ զոր ընտրեցեր.
Որով փառաբանիս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյ քո հիմանցն,
Յորմէ Թովմաս հրաժարեր ոչ հաւատալ զքեզ տեսողացն.
Որում ցուցեր այսօր փափագողին զվերս մարմնոյդ:

Սարսելով Թովմայի շօշափէր զխոցուած տիգին եւ զբեւեռացն,
Եւ գոչելով վերաձայնէր Տէր եւ Աստուած դաւանելով ըզյարուցեալդ.
Որով առաք զերանին որք ոչ տեսեալ հաւատացաք:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Նորոգուած կրդիներ, Ազգերու եկեղեցիներ,
Լեռներու կատարներէն բարձրաձայն փառք տուէք Աստուծոյ.
Եւ պատմեցէք քաջութիւնը Յարուցեալին:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարուէ ներքնապէս ոսկեհուր հանդերձներով պճնուած.
Քանզի կ'իջնէ քեզի Քրիստոս փառաց թագաւորը:

Ուրախացէք, Սիոնի որդիներ, Քրիստոս թագաւորով,
Տօնեցէք ցնծութեամբ նաւակատիքը մեր հոգիներուն.
Եւ օրհնեցէք հրեշտակաց հետ զՔրիստոս, փառաց թագաւորը:

Սքանչելի է, Քրիստոս, խորհուրդը տնօրէնութեանդ,
Որ իջար Հօրմէ ի սէր Հարսիդ եկեղեցւոյ,
Որմէ փառք կը ստանաս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյդ հիմքերուն,
Իսկ բացական՝ Թովմաս չէր հաւատար տեսնողներուն.
Որուն սակայն ցոյց տուիր այսօր վերքերը մարմնոյդ:

Սարսափահար Թովմաս կը շօշափէր հետքը վերքիդ եւ գամերուն,
Ու բարձրաձայն յարուցեալդ Տէր եւ Աստուած կը դաւանէր:
Որով մենք ալ երանուեցանք, զի չտեսած Քեզ հաւատացինք:

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՒՄԱՆ ՏՕՆ

Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր, հեթանոսաց ծագեաց լոյսն
նորոմութեան (Շարական)

Ամէն տարի՝ Ս. Զատկին յաջորդող հինգերորդ կիրակի օրը, մեր երանաշնորհ
հայրապետներու տնօրինութեան համաձայն Հայաստանեայց Առաքելական
Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի երևման տօնը՝ մէկ անգամ ևս յիշելով
Տիրոջ չարչարանքները, անոր խաչելութիւնը, և խաչի վրայ անոր թափած անմեղ
արեան շնորհիւ մարդկային ցեղի փրկութիւնը: Այս տօնը պատմական դէպքի մը
յիշատակութիւնն է:

351 թ-ի Մայիսի 7-ին, Կիւրեղ Երուսաղէմացի հայրապետի օրով, օրուայ երրորդ
ժամուն (ժամը 9-ին) երկնքի վրայ կ'երևի Փրկիչի խաչի նշանը՝ տարածուելով
Գողգոթայէն մինչև Ձիթենեաց լեռը:

Այս դէպքին ականատես կ'ըլլան ոչ միայն Երուսաղէմի մէջ բնակող քրիստոնէաները,
այլև տարբեր դաւանանքներու ու կրօններու պատկանող մարդիկ: Խաչի պայծառ
երևումէն նոյնիսկ արեգակը կը մթագնի: Բոլորը կը շտապեն եկեղեցի, իրենց սրտի
խորերէն աղօթելու առ Աստուած գոհութիւն յայտնելով Բարձրեալին՝ այս մեծ շնորհին
արժանացած ըլլալու համար: Երկնային հրաշքի շնորհիւ շատեր կը հաւատան
Յիսուսին, կը մկրտուին սուրբ Կիւրեղի ձեռքով՝ անդամագրուելով Քրիստոսի
Եկեղեցւոյ: Այս դէպքին առթիւ Կիւրեղ հայրապետ նամակ մը կը գրէ Բիւզանդիայի
Կոստանդին կայսրին, որ Մեծն Կոստանդիանոսի որդին էր: Նամակին մէջ սուրբը կը
պատմէ Երուսաղէմի խաչի երևման մասին՝ յորդորելով, որ վերջինս հաստատ Թսայ
իր քրիստոնէական ճշմարիտ հաւատքի մէջ, ինչպէս նաև հաւատարիմ՝ նիկիական
դաւանութեան: Այս թուոյթը Ե. դարուն կը թարգմանուի հայերէնի և կ'ընթերցուի տօնի
օրուայ առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ կատարուող անդաստանէն առաջ:

Մեր բազմադարեան պատմութեան մէջ ալ քիչ չեն խաչի երևումները: Երանելի
Կորինը, ինչպէս նաև քերթողահայր Մովսէս Խորենացին, Հայ Եկեղեցւոյ երրամեծ
վարդապետ Մեսրոպ Մաշտոցի մահուան և թաղման կապակցութեամբ արձանագրած
են, որ Վաղարշապատ քաղաքին մէջ օրեր շարունակ խաչի լուսապայծառ նշանը փայլեր
է այն տան վրայ, ուր սուրբն աւանդէր էր իր հոգին: Այդ նոյն նշանն ալ առաջնորդ է եղեր
բազմութեան՝ ամբողջ յուդարկաւորութեան ընթացքին: Եւ այսքան տարիներ յետոյ,
շատերու մօտ հարց կրնայ ծագիլ թէ ի՞նչ է խաչը քրիստոնէաներուս համար, և ի՞նչ է
անոր նշանակութիւնը:

Խաչը Հռոմէական կայսրութեան ժամանակ մահապարտները անարգելու և
նախատելու համար էր: Խաչելութիւնը ոչ միայն անպատուաբեր վախճան կը համարուէր,
այլև հին աշխարհի յայտնագործած ամենաանմարդկային և դաժան պատիժներէն մէկն
էր: Դատապարտեալը մերկ կը գամէին խաչին՝ ենթարկելով զանազան մարմնական
խոշտանգումներու: Եւ խաչեալը կը տանջուէր, արևի կիզիչ ճառագայթները կ'այրէին
անոր գլուխը, անբնական վիճակէն մարմինը կ'ուռճէր, վերքերը կը բորբոքէին՝ անտանելի
ցաւեր պատճառելով: Մահապարտը, երկար տանջուելէ յետոյ, կ'աւանդէր հոգին:
Այդ ժամանակ տախտակներէ շինուած այդ գործիքը մահուան խորհրդանշն էր: Հին
Կտակարանին մէջ կը կարդանք. «Անիծեալ է ան, որ փայտէ կը կախուի» (Բ Օր. ԻԱ 23),
բայց մեր Տէրն ու Փրկիչ Յիսուս Քրիստոս խաչի վրայ հեղած իր թանկագին արեամբ
կենաց և օրինութեան միջոցի վերածեց զայն «այդ անէծքէն մեզ ազատեց, ինք մեր տեղը
անէծքի առարկայ դառնալով» (Գաղ. Գ 13): Աստուածորդին միացաւ խաչափայտին՝
սրբագործելով զայն և մեզ տալով «զենն յաղթութեան» ընդդէմ սատանայի ու անոր

խաբկանքներուն: Եթէ մինչև Քրիստոս խաչն անարգանքի և նախատինքի նշանն էր, ապա Տիրոջ խաչելութեամբ անոր մէջ դրուեցաւ կեանքի խորհուրդը, և մարդ արարածը հնարաւորութիւն ստացաւ նոր արարած ըլլալու. «Ոեւէ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է. այլեւս չէ՛ այն ինչ որ էր նախապէս» (Բ Կորնթ. Ե 17): Քրիստոս խաչի վրայ ներեց մեզի, մեր մեղքերու պարտամուրհակը վերցուց մէջտեղէն՝ գամելով զայն խաչափայտին:

Մարդկութեան փրկութեան համար մարմնացած Աստուած խաչուեցաւ, թաղուեցաւ, բայց երրորդ օրը հրաշափառապէս յարութիւն առաւ մեռելներէն՝ քանդելով մահուան կապանքները: Այո՛, յարութիւն առաւ Տէրը, որովհետև Լոյսը չէր կրնար գերեզմանի մթութեան մէջ մնալ: Եւ այս իրողութիւնը նկատի ունենալով է որ սուրբ Կիրիլոս Երուսաղէմացին կ'ըսէ. «Կը դաւանիմ Խաչը, քանզի գիտեմ Յարութիւնը»: Հետևաբար խաչը մեզ համար յոյսի, սիրոյ, յաղթանակի և փրկութեան նշանն է, որուն վրայ Աստուածորդին պարտութեան մատնեց սատանային՝ մեր առաջ բանալով դրախտի դուռը, որը մինչ այդ փակուած էր մեր նախածնողներ Ադամի ու Եւայի անհնազանդութեան պատճառով: Յիսուս խաչին վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրն ու անբաւ ողորմածութիւնը աղամորդիներուս նկատմամբ: Տէրն իր փրկագործութեան խորհուրդով խաչը վերածեց յաղթութեան նշանի: Եւ այս գիտակցութեամբ ու խոր համոզումով է որ քրիստոնէութեան մունետիկ Պօղոս Առաքեալ ի լուր բոլորին կ'ազդարարէ. «Քաւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ» (Գաղ. Զ 14): Այո՛, տէրունական նշանը ճշմարիտ քրիստոնէաներուս համար պարծանքներու պարծանքն ու Աստուծոյ անսահման սիրոյ արտայայտութիւնն է անկեալ մարդու նկատմամբ: Ճիշդ է, անհաւատ ու Տէրը չճաշակած մարդոց համար խաչի վրայ Քրիստոսի այս զոհողութիւնն անիմաստ և անհասկանալի կը թուի, բայց մեզի համար, որ մեր սրտերուն մէջ ընդունենք ճշմարիտ Աստուծո՝ Յիսուս Քրիստոսը, խաչը դարձեր է փրկութեան գրաւականը: Անգիտութեան խաւարին մէջ խարխափող այս մարդոց մասին է առաքեալի խօսքը. «Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր՝ որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է, որովհետեւ իրենց Աստուածը իրենց փորն է: Ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին» (Փիլիպ. Գ 18-19):


Ապաւինելով խաչի զօրութեանը՝ մենք կը խափանենք չարը, խաչակնքելով, մենք մեզի Աստուծով կը զօրացնենք, եւ անով կը զարդարենք մեր հոյակերտ եկեղեցիները, անով կը կնքենք մեր զաւակները, անով կը պսակուինք, անով ալ գերեզման կ'իջնենք՝ յաւիտենական կեանքի յոյսով: Ինչպէս Տիրոջ երկրային կեանքը խաչի ճանապարհ մը եղաւ, այնպէս ալ քրիստոնէաներուս համար այս ժամանակաւոր կեանքը խաչի ճանապարհ է:

Ճանապարհ մը, որ անձուկ ու դժուար է, քարքարոտ ու փշոտ, բայց որու վերջնական հանգրուանը Տիրոջ խոստացած երկնային արքայութիւնն է: Սուրբ խաչի երևման տօնէն բխող պատգամն է, որ խաչակնքումը մեզի համար ոչ թէ ձևական ու մեքենական շարժում մըն է, այլ ամէն անգամ երբ կը խաչակնքենք պահ մը կ'անդրադառնանք այն մեծ ինքնագոհութեան, որ Աստուած իրականացուց խաչին վրայ մեր փրկութեան համար: Մեր աղօթքը կը վերառաքենք առ ամենաբարին Աստուած՝ կրկնելով սուրբ հայրերու շուրթերուն բիրեղացած սրտառու ճառախոսքը.

Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր Յիսուս,
յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:
Յայնժամ մեք մի՛ ամաչեցուք
յուսացեալքս ի քեզ, այլ զօրութեամբ քով
մեծաւ բերկրեցուք ընդ աջմէ քումմէ
որպէս զորդիս լուսոյ և որդիս տուրնջեան:

Բացատրություն՝ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Պատարագին «շար. 7»

Կը շարունակենք ներկայացնել Բերիոյ թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ Գերշ. Տ. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. Պատարագ»ի բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առաք. Եկեղեցւոյ գրքոյկէն:



Անցեալ անգամ տեսանք թէ պատարագիչ քահանան երկրպագելէ ետք Ս. Սեղանին, կը խնդրէ Երկնաւոր Հօրմէն՝ ամենակալէն, որպէսզի մշտնջենակից եւ բնութենակից Ս. Հոգին դրկէ հաւատացեալ ժողովուրդին եւ յատկապէս Ս. Սեղանին վրայ գտնուող ընծաներուն, որ Ս. հոգւոյ ներգործութեամբ ՆՇԽԱՐը կը փոխակերպուի Քրիստոսի ՄԱՐՄՆՈՅՆ եւ ԳԻՆԻՆ՝ Քրիստոսի ԱՐԵԱՆ:

Ողջ եկեղեցին կ'ողջունէ Ս. Հոգւոյ ներգործումը, իսկ պատարագիչ քահանան երեք անգամ կ'օրհնէ մաղզմային վրայ գտնուող նշխարը, կ'աղօթէ եւ աղօթքը որպէս աղերսանք Ս. Հոգիին կը ներկայացնէ: Ապա մաղզման դնելով սկիհին վրայ, ՆՇԽԱՐն ու ԳԻՆԻՆ միասնաբար կ'օրհնէ եւ Ս. Հոգիին կ'ընծայէ:

Դպիրները կը ներբողեն Աստուածորդիին Ս. պատարագումը. ըսելով:

«Ով Որդի Աստուծոյ, դուն որ պատարագուած ես որպէս գրաւական հաշտութեան՝ Հօր Աստուծոյ եւ մարդուն միջեւ եւ որպէս կեանքի հաց կը բաշխուիս մեր մէջ, կ'աղաչենք քեզի, քու սուրբ արեանդ հեղումով, ողորմութիւն շնորհէ քու արեամբդ փրկուած հօտին»:

Իրագործուած է Աստուածային Սուրբ Խորհուրդը, Աստուածորդին ներկայ է Ս. Սեղանին վրայ, որպէս հաղորդութիւն բաշխուելու, եւ պատարագիչը կ'ըսէ .

«Որպէսզի, այս բոլորին համար ըլլայ՝ բոլոր հաղորդողներուս համար դառնայ մեղքերու տիրապետութենէն ազատագրման, քաւութեան եւ թողութեան նշան»:

Հօր Աստուծոյ ընծայուած երախտագիտական օրհներգութենէն ետք, երբ Որդի Աստուծոյ պատարագումը արդէն իսկ իրագործուած է, դպիրները այս անգամ իրենց աղերսանքը կը ներկայացնեն Ս. Երրորդութեան երրորդ անձնաւորութեան՝ Ս. Հոգի Աստուծոյ:

«Ո՛վ Սուրբ Հոգի, դուն որ երկինքէն իջնելով քու փառակցիդ խորհուրդը (Մարմնոյ եւ Արեան) կ'ամբողջացնես մեր ձեռքերով, կ'աղաչենք քեզի, անոր արեան հեղումով հանգիստ շնորհէ մեր ննջեցեալներու հոգիներուն»:

Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ներկայութիւնը իր լրումին կը հասցնէ Ս. Պատարագի խորհուրդը: Հոգեւոր այս ցնծութեան մէջ, երբ երկինքն ու երկիրը կամրջուած են, Յաղթական եկեղեցին կու գայ միանալու շնչող, քրիստոնէական հաւատքով ապրող Զինուորեալ եկեղեցւոյ: Եկեղեցին իր ամբողջութեան մէջ պէտք է տօնախմբէ Աստուածորդւոյն Ս. Պատարագումը: Պատարագիչ քահանան կարգով կը հրաւիրէ Աստուածամայրը, Ս. Յովհաննէս Մկրտիչն ու Ստեփանոս Նախավկան մասնակից դառնալու Ս. Պատարագի խորհուրդին: Այս յիշատակութենէն ետք՝ Սարկաւազը, ընթացք տալով Պատարագիչ քահանային Աստուծոյ ուղղած խնդրանքին, կը յիշատակէ Յաղթական եկեղեցւոյ լոյս դէմքերը:

Առաջին հերթին Առաքեալներուն, Մարգարէներուն, Վարդապետներուն, Հայրապետներուն, Եպիսկոպոսներուն, երէցներուն, ուղղափառ սարկաւազներուն եւ

բոլոր սուրբերուն:

Երկրորդ համարով կը յիշատակուին Հայց. եկեղեցւոյ հիմնադիր եւ առաջին գոյգ լուսաւորիչներուն թաղէն եւ Բարթողիմէոս Առաքեալներուն անունները, որոնց կը յաջորդեն մեր եկեղեցւոյ հաւատքի մեծ առաջնորդներուն՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի, Արիստակեսի, Վրդանէսի, Յուսիկի, Գրիգորիսի, Ներսէս Պարթեւի, Սահակի, Դանիէլի, Խաղի, Մեսրոպ Վարդապետի, Գրիգոր Նարեկացիի, Ներսէս Կլայեցիի (Շնորհալի), Յովհաննէս Որոտնեցիի, Գրիգոր եւ Մովսէս Տաթեւացի վարդապետներուն անունները:

Յիշատակութեան երրորդ բաժինը կ'ընդգրկէ առանձնակեաց եւ անապատական բոլոր այն առաքինասէր կրօնաւորները, որոնք ճգնողական կեանքով անտեսեցին այն ինչ որ կեանքին կը պատկանէր, բայց զրկանքին ընդմէջէն սնուցին իրենց հոգիները երկնային եւ յաւիտենական հացով ու դարձան Քրիստոնէական տոկուն հաւատքի անմար ջահերը:

Յիշատակութեան չորրորդ բաժինը կ'ընդգրկէ բոլոր բարեպաշտ այն թագաւորներն ու Աստուածասէր իշխանները, որոնք արդարօրէն դարձան քրիստոնէական կրօնքի ամրակայման ռահվիրաները:

Վերջապէս կը յիշատակուին բոլոր այն հաւատացեալները, այր թէ կին, ծեր թէ երիտասարդ, առանց սեռի եւ տարիքի խտրութեան, որոնք Քրիստոսի անունով ննջած են՝ հաւատքով եւ սրբութեամբ:

Մեծ խորհուրդով հաւատացեալներուն սրտերը բացուած են Աստուծոյ: Իւրաքանչիւր հաւատացեալի սրտի խնդրանքը կամ աղերսանքը թոյլչք կ'առնէ, աղօթքի կը վերածուի եւ եկեղեցին, որպէս Նոր Երուսաղէմ՝ կ'ընդունի իրեն եկող հաւատացեալներուն ուխտերն ու խնդրանքները:

Նախ Պատարագիչ քահանան իր առանձնական աղօթքով իր խնդրանքները կը ներկայացնէ պատարագեալ Աստուածորդւոյն, որպէսզի իր սիրով շաղախէ հաւատացեալներուն սրտերը, հաստատուն պահէ անոնց հաւատքը, աշխարհին խաղաղութիւն պարգեւէ, հիւանդներուն առողջութիւն շնորհէ, եւ վտանգներու ու տառապանքներու մէջ գտնուողներուն՝ ազատում տայ: Պատարագիչ քահանան նաեւ կը խնդրէ օդի բարեխառնութիւն, դաշտերու պտղաբերութիւն եւ բոլոր ննջեցեալներու հոգիներուն լոյս եւ յաւիտենական հանգիստ: Կը խնդրէ Տիրոջմէ, որպէսզի իր աստուածային ողորմութեան մէջ անշարժ խաղաղութեամբ պահէ Ընդհանրական եւ Առաքելական եկեղեցին, որ ազատագրուած է Աստուածորդւոյն Սուրբ Խաչով եւ փրկուած իր Միաձին Որդւոյն Արիւնով: Կ'ոգեկոչէ բոլոր ուղղափառ Եպիսկոպոսները, որոնք ուղիղ վարդապետութեամբ կը մեկնաբանեն եւ կը սորվեցնեն Աստուծոյ ճշմարիտ խօսքը:

Վերոյիշեալ խնդրանքներէն ետք պատարագիչ քահանան իր աղերսանքը՝ Աստուծոյ ուղղելով, յիշատակութիւնը կը կատարէ հայոց Հայրապետին եւ Թեմի Առաջնորդին եւ անոնց երկար կեանք մաղթելով՝ ուղիղ վարդապետութեամբ:

Խնդրանքները կը շարունակուին, այս անգամ սարկաւագին կողմէ, Աստուծոյ ընծայուած գոհութեան եւ փառաբանութեան խօսքերուն ընդմէջէն: Դարձեալ կը յիշատակուին Հայոց հայրապետին եւ Առաջնորդին անունները, որոնց կու գայ միանալու յիշատակումը քահանային, որ պատարագը կը մատուցանէ: Կը յիշատակուին զօրութիւններն ու յաղթութիւնները քրիստոնէայ թագաւորներուն եւ բարեպաշտ իշխաններուն: Եւս առաւել կը յիշատակուին հանգուցեալ հայրապետները եւ եկեղեցւոյ շինութեան իրենց մասնակցութիւնը բերողները: Ազատութեան մաղթանք եւ աղօթք կը վերառաքուի բոլոր այն եղբայրներուն համար, որոնք կը հեծծեն գերութեան մէջ եւ շնորհի տուչութիւն ներկայ հաւատացեալ ժողովուրդին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Ապրիլ ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

24, Կիրակին, երկրաշարժ, հրեշտակը,
քարը, փնտռէք, յարութիւն,
աշակերտներուն, Գալիլիա, տեսնէք
Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. խոնարհութեան 2. ա. Սուրբ
հաղորդութիւնը 3. բ. Պետրոսը 4. դ.
կ'աղօթէր 5. 17 6. գ. Աստուծոյ հրեշտակը
7. դ. Հինգշաբթի 8. դ. Հինգշաբթի 9. ա.
Ուրբաթ 10. ա. Մէկշաբթի


Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. բ. Աւագ Երեքշաբթի 2. դ. Աւագ
Հինգշաբթի 3. ա. Աւագ Երկուշաբթի 4. ա.

Դատաւորի բ. Գալստեան գ. Ծաղկազարդ
5 գ. Չորեքշաբթի 6. 96 7. Մեքաստիա 8. ա.
Աւագ Ուրբաթ 9. Ս. Գրիգոր Լուսաւորիչ
(Մուտն ի Վիրապ) 10. գ. Ոչխար, ե.
Բաղարջ հաց

Երկրորդականի անկիւն

1. յարութիւնը, կեանքը, հաւատայ, մեռնի,
ապրի 2. յարեալ, մեռելոց, Օրհնեալ,
յարութիւնն 3. Ասիա 4. Ղազարոսի
յարութիւնը 5. գ. Աւագ Չորեքշաբթի
6. գ. 7 7. Մագդաղենացին, միւս 8.
Յովհաննէս, Պետրոս 9. բ. 30 արծաթ
դահեկան 10 համբուրելով



Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

բ	ը	է	ե	դ	գ	զ	թ	ա
զ	թ	ե	ը	ա	բ	է	զ	դ
դ	զ	ա	թ	է	զ	բ	ե	ը
ե	զ	դ	զ	թ	է	ը	ա	բ
ը	ա	զ	բ	ե	դ	թ	է	զ
թ	է	բ	զ	ը	ա	զ	դ	ե
ա	ե	ը	թ	զ	է	դ	բ	զ
զ	դ	թ	ա	բ	ը	ե	զ	է
է	բ	զ	դ	զ	ե	ա	ը	թ

դ					ա		է	ը
	է	զ	բ					թ
		զ	դ	զ			ա	
ե	ը	բ	զ	է				
	ա						զ	
				թ	բ	ը	է	է
	է			ը	դ	թ		
է					թ	ա	զ	
բ	դ		զ					է

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ
որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր


- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Աշակերտ ըլլալու գինը
Ղուկաս 14:25-35

Յիսուս կը սիրէր առակներով խօսիլ իր հետետորդներուն, աւելի հասկնալի դարձնելու համար իր ըսածը, նաեւ, բացատրելու համար ճիշդ այն ինչ որ ինք կը փափաքէր փոխանձել անոնց:

Այս հատուածի մէջ Յիսուս ցոյց կուտայ թէ ով կրնայ իր աշակերտը ըլլալ, ինչ ձեւով եւ ինչ կ'ակնկալուի իրմէ:

Յիսուսի առակին մէջ Ղուկաս 23-35 այս մարդիկը ի՞նչ կը կարծէք որ կը մտածեն: Քանի մը նախադասութիւն գրէ իւրաքանչիւր նկարի տակ:





Կը փորձեն իրեն բացատրել որ
այլեւս միշտ հետո պիտի մնայ,
բայց կարծես չի հասկնար:

Աղերս Առ Աստուած Ա.Ա.

Տէ՛ր, աչքերս յառած գետին
Բայց իմ սիրտս քու սուրբ գահին՝
Ես կը խնդրեմ պաղատագին
Շնորհ ըրէ քու ծառային:

Լոյս տուր մտքիս քու լապտերով
Որ ունենամ հոգւոյ կորով,
Հարեւանիս ինձմէ խռով
Ըլլամ ներող, ցոյց տամ գորով:

Ծունկի եկած, ես պաղատու
Որպէս անարժան խնդրարկու՝
Օրհնութիւնդ հայցեմ պիտի
Ժողովուրդին իմ հայրենի:

Շնորհներուդ արարչական
Երախտապարտ եմ յաւիտեան:

Տէ՛ր, դատաւոր ես անաչառ,
Եթէ եղած եմ անարդար
Կամ մեղանշած գիտակցաբար
Ներէ ինձի դուն հայրաբար:

Ուժ տուր ինձի Հայր Երկնաւոր
Քեզ ծառայեմ իբրեւ զինուոր,
Որքին, խեղճին անօթեւան
Ձեռք երկարեմ ես օգնութեան:

Տէ՛ր, շէն պահէ հայ ազգիս տուն,
Արեւ բաշխէ մանուկներուն,
Խաղաղութեան լոյս ծիածան
Թող կամարուի ի Հայաստան:

Շնորհակալ ենք

Շնորհակալ ենք Տէր Աստուած, զունաւոր



համար:

Շնորհակալ ենք Տէր Աստուած, իւրաքանչիւր կանաչ



համար:

Շնորհակալ ենք Տէր Աստուած, թռչող



համար:

Շնորհակալ ենք Տէր Աստուած,
մեր թանկագին



համար:

Եւ մանաւանդ, Շնորհակալ ենք Տէր Աստուած Քեզի, որ մեզ այնչափ սիրեցիր
եւ քու միածին Որդիդ դրկեցիր:

Ամէն:

Ուղեցոյց Սիրոյ

1- Սէր ունեցողը համբերատար է:

Բոլորին հետ կը փորձեմ ըլլալ համբերատար:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

2- Սէր ունեցողը կ'ըլլայ քաղցրաբարոյ:

Բոլորին հետ ազնիւ կը վարուիմ:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

3- Սէր ունեցողը չի նախանձիր:

Բոլորին յաջողութիւնը կը քաջալերեմ:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

4- Սէր ունեցողը չի գոռոզանար:

Մասնաւոր ուշադրութիւն չեմ պահանջեր շուրջիններէս:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

5- Սէր ունեցողը չի հպարտանար:

Կը փորձեմ միշտ իմ անձս զսպել:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

6- Սէր ունեցողը անպատշաճ վարմունք չունենար:

Անհաճոյ լեզու չեմ գործածեր եւ շուրջիններս չեմ քննադատեր:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

7- Սէր ունեցողը միայն ինքզինք չի մտածեր:

Իմ ուզածս չեմ պահանջեր :

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

8- Սէր ունեցողը բարկութեամբ չի գրգռուիր եւ չարութիւն չի խորհիր:

Կը փորձեմ զսպել իմ տրամադրութեանս թրթռումները:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

9- Սէր ունեցողը անիրաւութեան վրայ չ'ուրախանար:

Արդար եւ ներողամիտ կ'ըլլամ բոլորին հանդէպ:


Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

10- Սէր ունեցողը ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան:

Համբերութեամբ կը տանիմ ամէն բան: Կը սիրեմ շուրջիններս եւ կ'ուրախանամ ճշմարտութեան համար:

Դիւրին -----+-----+-----+-----+-----+-----+-----+----- Դժուար

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Ըստ Ղուկաս 24.50-53ի
օրհնեց, երկինք, երկրպագեցին, զԱստուած, Բեթանիա,
բաժնուեցաւ, Երուսաղէմ
Յիսուսի համբարձումը այս տարի Յունիս ---- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը
վեր բարձրացնելով ----- զանոնք: Եւ մինչ
կ'օրհնէր, ----- անոնցմէ, դէպի -----
բարձրանալով: Անոնք ----- Յիսուսի եւ մեծ
ուրախութեամբ վերադարձան -----: Ամէն օր
տաճարին մէջ էին՝ գովելով ու օրհնաբանելով -----
-----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ի՞նչ կը կոչուի Սուրբ Զատիկին յաջորդող Կիրակի օրը:

Կրկնագատիկ կամ -----

2.- Ասոնցմէ ո՞ր մէկը սխալ է:

- ա. Նոր Կիրակի
- բ. Կապոյտ Կիրակի
- գ. Կարմիր Կիրակի
- դ. Կանաչ Կիրակի

3.- Հետեւեալներէն ո՞ր մէկուն պատկերը Հայաստանի Հանրապետութեան Զինանշանին վրայ կը գտնենք (երկու պատասխան):

- ա. Արարատ լեռը
- բ. Նոյեան Տապանը
- գ. 10 Պատուիրանները
- դ. Յիսուսի Համբարձումը

4.- Սուրբ Խաչին երեւումը ո՞ր տեղի ունեցաւ:

- ա. Երուսաղէմէն մինչեւ Երիքով
- բ. Երիքովէն մինչեւ Երուսաղէմ
- գ. Գողգոթայէն մինչեւ Զիթենեաց լեռ
- դ. Փոքր Մասիսէն մինչեւ Մեծ Մասիս

5.- Համբարձումը շաբթուան ո՞ր օրը կը տօնենք:

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Զորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

6.- Պատարագի ընթացքին ո՞վ

(որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...»:

- ա. Պատարագիչը
- բ. Սարկաւազը
- գ. Քահանան
- դ. Դպիրները

7.- Ողջոյն տուողը ի՞նչ կ'ըսէ:

Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ

8.- Ողջոյն ստացողը ի՞նչ կ'ըսէ:

----- է ----- Քրիստոսի

9.- Այս տարի Հայաստանի Ա. հանրապետութեան քանիերրո՞րդ տարեդարձն է:

- ա. 96
- բ. 95
- գ. 94
- դ. 93

10.- Ո՞ր ստորագրուեցաւ Հայաստանի Ա. հանրապետութեան վերջին դաշնագիրը 10 Օգոստոս 1920-ին:

- ա. Սեւր
- բ. Լօզան
- գ. Պերլին
- դ. Փարիզ

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Ի՞նչ կը կոչուի Սուրբ Զատիկին յաջորդող Կիրակի օրը (երկու ճիշդ պատասխան):

- ա. Կրկնագատիկ
- բ. Նոր Կիրակի
- գ. Կանաչ Կիրակի
- դ. Կարմիր Կիրակի

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք «Մայրերու Օրը»:

- ա. 1 Մայիս
- բ. 8 Մայիս
- գ. 15 Մայիս
- դ. 22 Մայիս

3.- Սուրբ Խաչի ո՞ր տօնը այս տարի Մայիս ամսուան ընթացքին տեղի կ'ունենայ:

- ա. Խաչվերաց
- բ. Երեւումս Ս. Խաչի
- գ. Վարագայ Ս. Խաչ
- դ. Գիւտ Խաչի

4.- Գրէ՛ Ս. Զատիկուան յաջորդող Կիրակի Օրերուն շիտակ շարքը:

- ա. Նոր Կիրակի, Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի
- բ. Կանաչ Կիրակի, Կարմիր Կիրակի, Նոր Կիրակի
- գ. Նոր Կիրակի, Կարմիր Կիրակի, Կանաչ Կիրակի
- դ. Կրկնագատիկ, Կարմիր Կիրակի, Կանաչ Կիրակի

5.- Այս տարի Համբարձումը Յունիս -- ին է:

6.- Պատարագի ընթացքին ո՞վ (որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...»:

- ա. Պատարագիչը
- բ. Սարկաւազը
- գ. Քահանան
- դ. Դպիրները

7.- ա. Ողջոյն տուողը կ'ըսէ:
«Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ»

բ. Ողջոյն ստացողը կը պատասխանէ: «----- է -----
---- Քրիստոսի»:

8.- Հայերէնը ե՞րբ Հայաստանի պաշտօնական լեզու հռչակուեցաւ (ամիս եւ տարի):

-----, -----

9.- Այս տարի Հայաստանի Ա. հանրապետութեան քանիերո՞րդ տարեդարձն է:

- ա. 96
- բ. 95
- գ. 94
- դ. 93

10.- Ո՞ւր ստորագրուեցաւ Հայաստանի Ա. հանրապետութեան վերջին դաշնագիրը 10 Օգոստոս 1920-ին:

- ա. Սեւր
- բ. Լոզան
- գ. Պերլին
- դ. Փարիզ

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ամբողջացո՛ւր ըստ Բ.

Կորնթացիներուն 5.17.

Ոեւէ մէկը որ -----միացած է՝
---- արարած է. այլեւս չէ՛ այն՝ ինչ որ
էր -----, որովհետեւ
----- նորոգուեցաւ:

2.- Զատիկին, ողջոյն տուողը կ'ըսէ.

- Քրիստոս ----- ի -----

եւ ստացողը կը պատասխանէ
----- է ----- Քրիստոսի:

3.- Ո՞ր թուականին տեղի ունեցաւ
Սուրբ Խաչի երեւումը:

Մայիս 7, --- թուին

4.- Որո՞ւ հայրապետութեան
շրջանին Սուրբ Խաչը երեւցաւ:

Կ----- Երուսաղէմացի

5.- Հայաստանի Առաջին
անկախութիւնը ո՞ր թուականին
տեղի ունեցաւ :

Մայիս --, 19--

6.- Պատարագի ընթացքին,
սարկաւազը առաջին համարով կը
յիշատակէ Յաղթական եկեղեցւոյ լոյս
դէմքերը: Ամբողջացուր:
Առաքեալներ, Մ-----, Վ-----
---, Հ-----, Ե-----, Ե-----
-, ուղղափառ Մ----- եւ բոլոր
սուրբերը:

7.- Պատարագի ընթացքին,
սարկաւազը երկրորդ համարով կը
յիշատակէ Հ----- Եկեղեցւոյ
հաւատքի մեծ առաջնորդները,
որոնց կարգին են
Թադէոս, Բարթողիմէոս, Ս. Գրիգոր
Լուսաւորիչ, Ա-----, Վ-----, Յ--
-----:

8.- Ո՞ր թուականին ստորագրուեցաւ
Սեւրի Դաշնագիրը:

10 -----, 19--

9.- Հոգեգալուստը շաբթուան ո՞ր օրը
կը տօնենք:

ա. Երկուշաբթի
բ. Ուրբաթ
գ. Չորեքշաբթի
դ. Կիրակի

10.- Հոգեգալուստը Համբարձումէն
քանի՞ օրեր ետք տեղի կ'ունենայ:

ա. 10
բ. 40
գ. 50
դ. 33

Մ ա շ տ ո ղ ի Ա ր ձ ա գ ա ն գ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG-ը 10 տարեկան

Այս թիւով.....

Յիսուսի Համբարձումը Էջ 2

Հոգեգալուստ՝ Պենտեկոստէ Էջ 2

Յունիս ամսուան բացատրական
տօնացոյց Էջ 3-5

Սուրբ Հոփսիմէ
Սուրբ Գայիանէ
Էջմիածին
Սուրբ Մանէ
Սուրբ Նունէ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 3

«Մաշտոցի Արձագանգ»ի ներկայ եւ
նախկին թիւերու հասցէն Էջ 6

Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի
Կամաւոր Խմբակը Էջ 6

Ամսուան Համարը

«Հետեւաբար, գացէք եւ բոլոր
ժողովուրդները ինծի աշակերտ
դարձուցէք: Զանոնք մկրտեցէք Հօր,
Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով:
Անոնց սորվեցուցէք այն բոլոր
պատուիրանները որ ես ձեզի տուի, եւ
ահա ես ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ
աշխարհիս վախճանը»:

Մատթէոս 28.19-20

Յունիս 2011 (ԺԸ տարի թիւ 10)



Հ... Համբարձում
Հոգեգալուստ

Խաչքարի Հեղինակ՝
Ժողովրդական Վարպետ
Ռուբեն Նալբանդյան

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Յիսուսի Համբարձումը

Համբարձում կը նշանակէ «բարձրացում»: Համբարձումը Յիսուսի յարութիւն առած ու փառաւորուած մարմնով երկինք բարձրանալու եւ Հայր Աստուծոյ աջ կողմը նստելու յիշատակումին տօնն է, որ տեղի կ'ունենայ միշտ Հինգշաբթի օր, Յարութեան 40-րդ օրը:

Յարութենէն ետք, Յիսուս իր աշակերտներուն երեւնալէ ետք, 40-րդ օրը իր աշակերտներուն հետ Ձիթենեաց լեռ բարձրացաւ ուր յայտնեց իր աշակերտներուն. «Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք ու իմ վկաներս պիտի ըլլաք, Երուսաղէմի, Հրէաստանի, եւ Սամարիայի մէջ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Երբ Ան արտասանեց այս խօսքերը, Յիսուս երկինք բարձրացաւ մինչեւ որ ամպերը ծածկեցին զինք աշակերտներուն տեսողութենէն: Այս պատուիրանին համաձայն թաղէս ու Բարթողոմէոս Առաքեալները Հայաստան եկան հիմը դնելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:



Հոգեգալուստ՝ Պենտէկոստէ (50)


Հոգեգալուստը տեղի ունեցաւ Համբարձումէն 10 օրեր ետք եկող Կիրակի օրը: Ըստ Համբարձեալ Յիսուսի խոստումին, Սուրբ Հոգին հրեղէն լեզուներու պէս հանգչեցաւ Առաքեալներուն վրայ, որոնք զօրութեամբ լեցուեցան եւ տարբեր լեզուներ խօսելու կարողութիւնը ունեցան: Այդ պատճառով կրցան Քրիստոսի Աւետարանը քարոզել Աշխարհի տարբեր երկրներէն ժամանած հրեաներուն, որոնք եկեր էին Պենտէկոստէ (Զատիկէն 50 օրեր ետք նշուող երկու տօները տօնելու

ա. Առաջին հունձքը Տիրոջ նուիրելու Տօնը


բ. Մինա լերան վրայ Աստուծոյ տասնաբանեայ պատուիրաններուն տուչութեան): Նկատելով որ Քրիստոսի Յարութիւնը եւ Հոգեգալուստը տեղի ունեցան Մէկշաբթի օրը, Մէկշաբթին դարձաւ Տերունի օր եւ կոչուեցաւ Կիրակի:

Յունիս ամսուան բացատրական տօնացոյց

Եշ. 2	Համբարձում
Կիր. 5	Երկրորդ Ծաղկազարդ
Կիր. 12	Հոգեգալուստ (Պենտեկոստե)
Կիր. 19	Յիշատակ Եղիա մարգարէի, Հայրերու տօն
Բշ. 20	Յիշատակ՝ Ս. Հռիփսիմեանց Կոյսերու
Գշ. 21	Յիշատակ՝ Ս. Գայիանեանց Կոյսերու
Շրթ. 25	Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Ելն ի Վիրապ)
Կիր. 26	Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի
Գշ. 28	Յիշատակ՝ Ս. Նունէ եւ մանէ Կոյսերու



Էջմիածնի Ս. Հռիփսիմէ Վանքը



Էջմիածնի Ս. Գայիանէ Վանքը

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մայիս ամսուան պատասխանները

Մանկապարտեզի անկիւն

2. Բեթանիա, օրհնեց, բաժնուեցաւ, երկինք, երկրպագեցին, Երուսաղէմ, զԱստուած

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. Նոր Կիրակի, 2. բ. Կապոյտ Կիրակի 3. ա. Արարատ լեռը բ. Նոյեան Տապանը 4. գ. Գողգոթայէն մինչեւ Չիթենեաց լեռ 5. դ. Հինգշաբթի 6. դ. Դպիրները 7. ի, մեր 8. Օրհնեալ յայտնութիւնն 9. դ. 93 10. ա. Սեւր

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. Կրկնազատիկ բ. Նոր Կիրակի 2. բ. 8 Մայիս 3. բ. Երեւումս Ս. Խաչի 4. ա. Նոր Կիրակի, Կանաչ Կիրակի, Կարմիր

Կիրակի 5 2 6. դ. Դպիրները 7. ա. ի, մեր բ. Օրհնեալ, Յայտնութիւնն, 8. Դեկտ. 1919 9. դ. 93 10. ա. Սեւր

Երկրորդականի անկիւն

1. Քրիստոսի, նոր, նախապէս, ամբողջութեամբ 2. յարեալ, մեռելոց, Օրհնեալ, Յարութիւնն 3. 351 4. Կիրեղ 5. Մայիս 28, 1918 6. Առաքեալներ, Մարգարէներ, Վարդապետներ, Հայրապետներ, Եպիսկոպոսներ, Երէցներ, Սարկաւագներ 7. Հայաստանեայց, Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ 8. 10 Օգոստոս 1920 9. դ. Կիրակի 10 ա. 10

Էջմիածին

«Էջմիածին» կը կոչուի նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պաշտօնական հրատարակութիւնը որ կրօնական եւ պատմաբանասիրական ամսաթերթ մըն է:

«Էջմիածնի Աւետարան» Փղոսկրեայ Աւետարան, հայ գրչութեան եւ մանրանկարչութեան ձեռագիր մատեան: ընդօրինակուած Յովհաննէս գրիչին կողմէ 989-ին:

«Էջմիածնի Հոգեւոր Ճեմարան» Հոգեւոր բարձրագոյն գիշերօթիկ ուսումնական հաստատութիւն հիմնուած 1945

Նոյեմբեր 1-ին Գեորգ Չորեքչեանի նախաձեռնութեամբ: 1998-ին Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ վերանուանուեր է Գեորգեան Հոգեւոր Ճեմարան:



Էջմիածնի Աւետարանին Փղոսկրեայ կազմը



Ս. Էջմիածնի Մայր Տաճար

Սուրբ Նունեն և Մանեն Հոփսիմեանց կոյսերու խումբէն էին, որ Դիոկղետիանոս կայսեր հալածանքներու ժամանակ թողեր էին Հռոմն ու եկեր հասեր էին Հայաստան: Սակայն այս երկու կոյսերուն Տիրոջ կողմէն նախախնամուած չէր նահատակուիլ իրենց հաւատակիցներուն հետ:

Սուրբ Մանէ

Հայաստան հասած 37 կոյսերէն զատուելով՝ Մանեն կը հեռանայ դէպի Եկեղեաց գաւառի Սեպուհ լեռը, որտեղ փակուելով քարայրի մը մէջ՝ ճգնաւոր կեանքով կ'ապրի: Այսպէս Մանէ կոյսը հրեշտակային կեանքով, աղօթքով և աստուածային միսիթարութեամբ զօրացած ապրեցաւ այդ քարայրին մէջ, որ հետագային իր անունով կոչուեցաւ «Մանէի այր»: Հետաքրքրական պատմութիւն մը կը հաղորդուի Մանէի վարքագրութեան մէջ իր կեանքի վերջին օրերու մասին: Այդ ժամանակաշրջանին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ալ կը կամենայ հեռանալ և իր կեանքի վերջին օրերը ապրիլ առանձնութեան մէջ: Այդ ներշնչումով Հայոց հայրապետը կու գայ Դարանաղեաց լեռներ և իբրև բնակութեան վայր կ'որոշէ Սեպուհ լեռան քարայրը, ուր կը ճգնէր Մանէն: Երբ կը մօտենայ այրին, Մանէի ձայնը կը լսուի, որ կը պատուիրէ Սուրբ Գրիգորին երեք օրէն վերադառնալ իր ընտրած քարայրի մօտ: Կատարելով սուրբի ցանկութիւնը՝ Հայրապետը կը վերադառնայ երեք օրէն և սրբուհին վախճանած գտնելով՝ սաղմոսներ ըսելով կը թաղէ զայն քարայրին մէջ (323 թ.): Մանէ և Նունէ կոյսերու յիշատակը կը տօնուի Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնին յաջորդող երեքշաբթի օրը:

Սուրբ Նունէ

Նունէ կոյսը (վրացական աղբիւրներուն մէջ՝ Նինո) հայոց Տրդատ թագաւորի հալածանքներէն ազատուելով՝ կը մեկնի Վրաստան, Մծխիթա մայրաքաղաքը, ուր կը շարունակէ ապրիլ սրբակենցաղ աղօթական կեանքով և քարոզելով, որուն որպէս արդիւնք ընդհանուր ժողովուրդի դարձի պատճառ կը դառնայ: Հոչակ կը ստանայ իր գործած հրաշքներու և բարեգործութիւններու պատճառով՝ կոյսը կը տարուի արքունիք, ուր կը բժշկէ հիւանդ թագուհին, ապա, հրաժարելով բոլոր թանկարժէք նուէրներէն, կը քարոզէ Տիրոջ Աւետարանը: Միհրան թագաւորը ևս, անմիջապէս իր վրայ զգալով իրեն անձանօթ Աստուծոյ զօրութիւնը, դարձի կու գայ: Աւետարանը կը քարոզուի նաև երկրի մեծամեծերուն: Այս բոլորին որպէս արդիւնք Նունէի խորհուրդով պատուիրակութիւն կ'առաքուի Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և Տրդատ թագաւորի՝ խնդրանքով, որ հոգևորականներ ուղարկեն իրենց երկիրը մկրտութիւններ կատարելու և սպասաւորելու ժողովրդին: Այսպիսով սուրբ Նունէն կը դառնայ Վրաստանի առաքելուհին: Մանէ և Նունէ կոյսերու յիշատակը կը տօնուի Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնին յաջորդող երեքշաբթի օրը:

ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ ԺԸ. ՏԱՐԻ

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐԶԱԳԱՆԳ»ի
ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցին վրայ
www.sourphagop.org/mashdots

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի
կամաւոր խմբակը

Թամար Գիզիրեան
Յասմիկ Նաճարեան
Շողիկ Նաճարեան
Յասմիկ Գանաճեան
Թորոս Պապիկեան